ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ 2011թ. ԶԵԿՈՒՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ι ՀԱՏՈՐ

ԵՐԵՎԱՆ
2012

Սույն զեկույցը պատրաստվել է Հելսինկյան Ասոցիացիայի կողմից “Մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում” ծրագրի շրջանակներում՝ Հայաստանում ԱՄՆ Դեսպանատան և Ժողովրդավարության Ազգային Աջակցության ֆոնդի ֆինանսական աջակցությամբ:

© Հելսինկյան Ասոցիացիա 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……..…..…...3
2. Իրավապաշտպաններ……..…..……8
3. Խոսքի Ազատություն և ԶԼՄ……17
4. Խաղաղ Հավաքներ……..…32
5. Խոշտանգում և Անմարդկային կամ Նվաստացուցիչ Վերաբերմունք.....44
6. Բանակ……..…58
7. ԼԳԲՏ ……..……...84
8. Դավանանքի և Խղճի Ազատություն……..…95

* www.hahr.am

Հելսինկյան Ասոցիացիան ներկայացնում է 2011թ.-ի Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակի մասին ամենամյա զեկույցը, որը փաստում է այն մասին, որ Հայաստանում պետական մարմինները շարունակում են ոտնահարել մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, որոնք պաշտպանված են ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով ու փաստաթղթերով, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը: Չնայած այն հանգամանքին, որ մարդու իրավունքները երշխավորելու ու պաշտպանելու գործառույթներ իրականացնող կառույցներում սույն տարվա ընթացքում տեղի են ունեցել որոշակի կադրային փոփոխություններ, մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում դրանց հետ կապված որակական փոփոխություններ չեն արձանագրվել:

Փետրվարի 1-ին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը հրաժարականի դիմում է ներկայացրել ԱԺ: Կոալիցիան ՄԻՊ թեկնածու է առաջադրել Կարեն Անդրեասյանին, ով Խորհրդարանում ձայների 83 «կողմ» և 13 «դեմ» հարաբերակցությամբ ընտրվել է Մարդու իրավունքների պաշտպան:

Նոյեմբերի 1-ին Սերժ Սարգսյանի հրամանագրով Ալիկ Սարգսյանն ազատվել է ՀՀ ոստիկանության պետի պաշտոնից: Նախագահի մեկ այլ հրամանագրով գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Գասպարյանն ազատվել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի պաշտոնից և նշանակվել է ոստիկանապետի պաշտոնին:

2011թ.-ին վերսկսվեցին լայնածավալ բողոքի ակցիաներ՝ ընդդիմադիր ուժ հանդիսացող Հայ Ազգային Կոնգրեսի(ՀԱԿ) և «Ժառանգություն» կուսակցության ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանի: Ինչպես նաև հինգշաբթի օրերին ՀՀ Կառավարության շենքի դիմաց բողոքի ակցիաներ էին անցկացվում բանակում տեղի ունեցող սպանությունների դեմ: Ակցիաները կազմապերպվում էին զինվորների հարազատների կողմից: Հետագայում նրանց միացան տարբեր իրավապաշտպաններ. նախաձեռնությունը կոչվեց՝ «Բանակն իրականում»: Մայիսի 20-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը հանդես է եկել ՀՀ Անկախության 20-ամյակի կապակցությամբ

համաներում հայտարարելու առաջարկությամբ, իսկ մայսիսի 26-ին ՀՀ ԱԺ-ն ձայների 91 «կողմ» և 1 «ձեռնպահ» հարաբերակցությամբ ընդունել է համաներում անցկացնելու մասին որոշումը: Համաներմամբ դատապարտյալներին ազատ արձակելու և պատժաչափը կրճատելու գործընթացները տևել են մայիսի 27-ից մինչև սեպտեմբերի 21-ը և վերաբերել են մինչև 2011 թ. մայիսի 1-ը հանցագործություն կատարած անձանց: Ըստ Հելսինկյան Ասոցիացիայի՝ համաներում անցկացնելու որոշումը իշխանությունները կայացրել են միջազգային հանրության ճնշումների ներքո, և այն նպատակաուղղված է եղել մարտի 1-ի իրադարձությունների արդյունքում բանտարկության դատապարտվածների ազատմանը:

Սեպտեմբերի 21-ի դրությամբ, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներից ազատ են արձակվել 590 դատապարտյալներ, կրճատվել է 424-ի պատժաչափը:

Չնայած համաներման անցկացմանը՝ քրեակատարողական հիմնարկներում շարունակում է էական խնդիր հանդիսանալ գերբնակեցվածությունը: Ըստ Հելսինկյան Ասոցիցիայի՝ ՔԿՀ-ներում գտնվող անձիք ենթարկվում են խոշտանգումների, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի:

Համաձայն Եհովայի վկա կրոնական կազմակերպության կողմից տրամադրված տվյալների՝ 2012թ.-ի հունվարի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում գտնվում են կազմակերպության 58 անդամներ, ովքեր իրենց կրոնական համոզմունքների պատճառով հրաժարվել են ծառայել ՀՀ զինված ուժերում:

Հելսինկյան ասոցիացիան այս անձանց որակում է որպես խղճի գերիներ: Հելսինկյան ասոցիացիան խղճի գերիների շարքին է դասում նաև ՀԱԿ ակտիվիստ Տիգրան Առաքելյանին: Շարունակվում են քաղաքական հետապնդումները այն գործարարների նկատմամբ, ովքեր չեն համագործակցում իշխանությունների հետ: Սրա վառ օրինակն է Յուկոս ՄՆԳ սնանկացումը ՌԴ-ում և մինչ օրս շարունակվող քաղաքական հետապնդումները Հայաստանում Յուկոս ՄՆԳ տնօրեն Արմեն Միքայելյանի նկատմամբ ՌԴ պահանջով:

2011թ.-ին լույս տեսած մի շարք միջազգային զեկույցներում՝ Freedom House,[1] Human Rights Watch[2], մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում ներկայացվում է որպես անմխիթար և առաջընթաց չգրանցող:

Մայիսի 9-ին Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համարբերգը հրապարակել է Հայաստանին վերաբերող իր զեկույցը, որում, նա շեշտում է, որ 2008 թվականի մարտի 1-2-ին իշխանության ներկայացուցիչների կողմից ուժի գործադրումը «անհամաչափ» է եղել, իսկ 10 զոհերի մահվան պատճառների բացահայտման ուղղությամբ կատարված քայլերը՝ «անարդյունավետ»:

Հոկտեմբերի 5-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 33-րդ նստաշրջանի ընթացքում ընդունվել է 1837 բանաձևը, որն ըստ Հելսինկյան ասոցիացիայի՝ օբյեկտիվ ձևով չի ներկայացնում մարդու իրավունքների ներկա իրավիճակը, ինչպես նաև իշխանություններին թույլ է տալիս այդ ոլորտում շարունակել իրենց որդեգրած անօրինական քաղաքականությունը:

Չնայած իշխանությունների կողմից հռչակված բարեփոխումների և իրականացվող օրենսդրական փոփոխությունների, դատարանները շարունակում են մնալ կոռումպացված և գտնվել կախյալ վիճակում. խախտվում է իշխանությունների տարանջատման սկզբունքը, և դատավորները կատարում են դատախազների ու իշխանությունների հրամանները:

Բանակը շարունակում է հանդիսանալ քրեական և կոռումպացված համակարգ: Առանձնակի ուշադրության է արժանի այն փաստը, որ ՀՀ-ից զորակոչված զինվորների մի զգալի մասը շարունակում են իրենց ծառայությունն իրականացնել ԼՂՀ-ում:

Փոփոխություններ և լրամշակումներ կատարվեցին ՀՀ Ընտրական օրենսգրքում, ըստ որի 31-րդ հոդվածի ՀՀ-ում գրանցված հասարակական կազմակերպությունների անդամները կարող են դիտորդական առաքելություն իրականացնել, եթե ունեն «ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական կամ

[1] http://freedomhouse.org/country/armenia
[2] http://www.hrw.org/europecentral-asia/armenia

ստուգարքի արդյունքով ստացել են դիտորդական առաքելություն իրականացնելու վկայական»[3]:

Մարտի 15-ին ԱՄՆ դեսպանությունը «Խիզախ կին» մրցանակը հետմահու շնորհեց «Թրանսփարենսի ինտերնեյշընլ» հակակոռուպցիոն ներկայացուցչության նախագահ Ամալյա Կոստանյանին:

Հունիսի 15-ին «Ա1+» ինտերնետային կայքը արժանացել է Fritt Ord Press Prize-2011 մրցանակին: Մրցանակը շնորհվել է մամուլի ազատության ամրապնդման գործում «Ա1+»-ի ունեցած ներդրման համար:

[3] ՀՀ Ընտրական օրենսգիրք, Հոդված 31, մաս 1

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐ

“Հասարակական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում այլ անձանց հետ միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու մարդու՝ սահմանադրորեն ամրագրված իրավունքն իրականացնելիս ծագող իրավահարաբերությունները՝ կապված հասարակական կազմակերպությունների ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման հետ: Օրենսդրությամբ չի նախատեսվում որևէ սահմանափակում մարդու իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպություն ստեղծելու հարցերում, եթե վերջինիս նպատակները չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը և սույն ոլորտը կարգավորող օրենսդրությանը: Հասարակական կազմակերպությունների պետական գրանցումը ևս կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես՝ “Հասարակական կազմակերպությունների մասին” և “Պետական տուրքի մասին” ՀՀ օրենքներով: Այլ ներպետական և միջազգային նմանատիպ կազմակերպությունների հետ անարգել համագործակցության հարցերը նույնպես նախատեսված են ՀԿ-ների մասին օրենքով:

“Մարդու իրավունքների պաշտպանի մասին” ՀՀ օրենքն ընդունվել է 2003 թվականի հոկտեմբերի 21-ին:

2011թ. Փետրվարի 1-ին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը հրաժարականի դիմում ներկայացրեց ՀՀ ԱԺ նախագահին Կենտրոնական Ասիայում ՄԱԿ-ի մարդու իրավունքների գլխավոր հանձնակատարի տարածաշրջանային ներկայացուցչի պաշտոնը ստանձնելուց հետո: ՀՀ Ազգային ժողովում ձայների 83 «կողմ» և 13 «դեմ» հարաբերակցությամբ Մարդու իրավունքների պաշտպան ընտրվեց Կոալիցիայի կողմից առաջադրված ՄԻՊ թեկնածու Կարեն Անդրեասյանը:

Համաձայն “Մարդու իրավունքների պաշտպանի մասին” ՀՀ օրենքի հոդված 3.1-ի՝ «Պաշտպանի պաշտոնում կարող է ընտրվել 25 տարին լրացած, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող, վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում

մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք»: Հոդվածը, ըստ Հելսինկյան ասոցիացիայի, ունի շատ «լղոզված» ձևակերպում:

2011թ. մարտի 10-ին, Ժնևում, ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցերով Հատուկ զեկուցող Մարգարեթ Սեկագգիան ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 16-րդ նիստին ներկայացրել է Հայաստանի վերաբերյալ զեկույց[4], որում հատուկ զեկուցողը նշել է Հայաստանում իրավապաշտպանների առջեւ՝ իրենց օրինական գործունեության ընթացքում, ծառացող մարտահրավերները[5]: Զեկույցում նշվում է, որ 2008 թ-ի Մարտի իրադարձությունները նպաստել են խիստ քաղաքականացված միջավայրի ձեւավորմանը՝ խոչընդոտելով իշխանությունների, Օմբուդսմենի եւ իրավապաշտպանների միջեւ կառուցողական համագործակցությունը: Այլ մարտահրավերները ներառում են սահմանափակումները միավորումներ ստեղծելու ազատության, հավաքների ազատության խոչընդոտները, խոսքի ազատության սահմանափակումները եւ անպատժելիությունը իրավապաշտպանների դեմ բռնությունների գործերում:

Զեկույցի ընթերցմանն հետևել է Հայաստանի ներկայացուցչի պատասխանը, համաձայն որի՝ Հայաստանը ողջունում է հատուկ զեկուցողի կողմից հրապարակված զեկույցը և իր ելույթում նշել, որ օրենսդրական բոլոր փոփոխություններին մասնակցություն ունեն հասարակական կազմակերպությունները, և ընդհանրապես, Հայաստանի իշխանությունները բարձր են գնահատում հասարակական կազմակերպությունների դերը:

ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցերով Հատուկ զեկուցող Մարգարեթ Սեկագիայի կողմից զեկույցի ներկայացմանը մասնակցել են Հարավկովկասյան

[4] http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G10/179/19/PDF/G1017919.pdf?OpenElement

[5] 2010թ. հունիսի 14-18-ը ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցերով Հատուկ զեկուցող Մարգարեթ Սեկագիան Հայաստան կատարած իր այցելությունից հետո ներկայացրել էր մի շարք առաջարկություններ, մասնավորապես՝ իրավապաշտպանների դերը և կարևորությունը ժողովրդավարական հասարակության մեջ հրապարակայնորեն ընդունելու անհրաժեշտությունը: Հատուկ զեկուցողը իր անհանգստությունն էր հայտնել իրավապաշտպանների, լրագրողների նկատմամբ բռնության և հետապնդումների դեպքերի կապակցությամբ և նշել, որ այսպիսի դեպքերն ի ցույց են դնում Հայաստանում անպատժելիության մշակույթի ակնհայտ առկայությունը:

իրավապաշտպանների ցանցի[6] անդամները: Հայաստանից մասնակցել են Ցանցի Հայաստանյան աշխատանքները համակարգող Հելսինկյան ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանը, ցանցի անդամներ "Իրավաբաններն ընդդեմ բռնության" ՀԿ աշխատանքները համակարգող Արտակ Զեյնալյանը և "Շահխաթուն" ՀԿ ղեկավար Մելիսսա Բրաունը:

Մայիսի 9-ին Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համարբերգը հրապարակել է Հայաստանին վերաբերող իր զեկույցը, որում, նա շեշտում է, որ 2008 թվականի մարտի 1-2-ին իշխանության ներկայացուցիչների կողմից ուժի գործադրումը «անհամաչափ» է եղել, իսկ 10 զոհերի մահվան պատճառների բացահայտման ուղղությամբ կատարված քայլերը՝ «անարդյունավետ»: Զեկույցը անդրադառնում է մարտյան իրադարձություններից հետո Հայաստանում մարդու իրավունքների վիճակին, ինչպես նաև խոսքի եւ հավաքների ազատությանը, բանակում մարդու իրավունքների իրավիճակին: Համարբերգը հորդորում է իշխանություններին վերանայել խոսքի եւ հավաքների ազատությանը վերաբերող ոլորտի օրենսդրությունը և կիրառվող պրակտիկան՝ այն համապատասխանեցնելով ընդունված չափանիշներին:

2011թ. ընթացքում Իշխանությունների, ինչպես նաև մամուլի կողմից շարունակվել են անհանդուրժողականության դրսևորումները իրավապաշտպանների և նրանց գործունեության նկատմամբ:

2011թ. հունվարին, հարձակման է ենթարկվել Հարավկովկասյան իրավապաշտպանների ցանցի անդամ "Իրավաբաններն ընդդեմ խոշտանգումների" հասարակական կազմակերպության աշխատանքները համակարգող,

[6] Հարավկովկասյան Իրավապաշտպանների ցանցը միավորում է 30 իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ Հայաստանից, Ադրբեջանից և Վրաստանից: Վրաստանում ցանցի աշխատանքը համակարգում է Մարդու Իրավունքների Կենտրոնը, Ադրբեջանում՝ Լրագրողների անվտանգության և ազատության պաշտպանության Միջազգային Կազմակերպությունը, Հայաստանում՝ Հելսինկյան Ասոցիացիան: www.caucasusnetwork.org

իրավապաշտպան Արտակ Զեյնալյանի աշխատասենյակը:[7] Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ, սակայն մինչ օրս ոչ մի առաջընթաց չի գրանցվել: Հելսինկյան Ասոցիացիան համոզված է, որ հարձակման դեպքը չի բացահայտվում ոստիկանության անգործության պատճառով: Հելսինկյան Ասոցիացիան հայտարարել է, որ դա իշխանության պատվերն է, որն ուղղված է միմիայն Արտակ Զեյնալյանի իրավապաշտպան գործունեության դեմ: Այս տեսակ քայլերը նպատակ են հետապնդում խոչընդոտել իրավապաշտպանի գործունեությունը:

Հուլիսի 6-ի առավոտյան՝ ժամը 5.00-ի մոտ, անհայտ անձինք մետաղյա ճաղերի արանքից կոտրել են Ա.Դ.Սախարովի անվան Մարդու իրավունքների պաշտպանության հայաստանյան կենտրոնի Շիրակի մասնաճյուղի Գյումրու գրասենյակի պատուհանի ապակին և հեղուկ վառելանյութով հրկիզել պատուհանն ու պատուհանագոգը: Գրասենյակի հարևանությամբ ապրող մարդիկ, տեսնելով կրակը, զանգել են հրշեջ ծառայություն եւ ինքնուրույն միջոցներ ձեռք առել հրդեհը հանգցնելու համար, ինչից հետո հրդեհը հանգցրել են: Ուսումնասիրությունից պարզվել է, որ էականորեն վնասվել է գրասենյակի դասընթացների սրահի գույքի մի մասը և սրահն ամբողջությամբ, ինչի նորոգման ծախսը գերազանցում է 600.000 դրամը:

2011թ. հուլիսի 8-ին մի շարք իրավապաշտպան կազմակերպություններ հայտարարություն են տարածել, որում անդրադառնում են բանակում տիրող իրավիճակին, մարդկային զոհերին և պահանջում են ՀՀ գլխավոր գերագույն հրամանատար Սերժ Սարգսյանից գործուն քայլեր ձեռնարկել իրավիճակը շտկելու համար: Իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչները Հելսինկյան Ասոցիացիայի նախագահ Մ. Դանիելյանին առաջարկել են ստորագրել

[7] Ա. Զեյնալյանի աշխատասենյակը հարձակման էր ենթարկվել նաև 2010թ. դեկտեմբերի 13-ին: Անհայտ անձինք ներխուժել էին գրասենյակ, կոտրել փաստաթղթերը պահելու համար նախատեսված պահարանների դռների կողպեքները, տարել համակարգչի մոնիտորը և արբանյակային հեռուստաալիքների կոդազերծող սարքը: Գրասենյակում գտնվող գումարը “գողերը” չեն վերցրել:

հայտարարության տակ, ով, սակայն, հրաժարվել է, քանի որ վերջինս պնդմամբ անհրաժեշտ էր հայտարարության մեջ մի կետ մտցնել, համաձայն որի «պետք է արգելել Հայաստանի քաղաքացիներին ծառայել ԼՂՀ-ում և զավթված տարածքներում»: Դանիելյանը նաև համաձայն չի եղել այն կետի հետ, որով մեկ ամսյա ժամկետում իրավապաշտպանները պատրաստ են պահանջել Ս. Սարգսյանի հրաժարականը՝ նշելով, որ պահանջելով նման բան, իրավաշտպաններն իրենց լյուֆտի մեջ են զգում:[8] *Մեկ ամիս անց, երբ իրավապաշտպանները հայտարարությամբ պահանջել են ՀՀ նախագահի հրաժարականը, որոշ նախկինում փաստաթղթի տակ ստորագրած իրավապաշտպաններ արդեն չեն ստորագրել այն:*

2011թ. օգոստոսի 9-ին, ժամը 22.00-ի սահմաններում, Երևան ք. կենտրոնից բերման էին ենթարկվել ՀԱԿ ակտիվիստներ՝ Տ. Առաքելյանը, Ս. Մուրադյանը, Ա. Գևորգյանը, Ս. Գևորգյանը, Դ. Քիրամիջյանը, Ա. Կիրակոսյանը և Վ.Գևորգյանը:
Փաստաբան Ստեփան Ոսկանյանը հայտնել է, որ Երևանի ք. Կենտրոնի ոստիկանության բաժնում իր նկատմամբ կիրառվել է բռնություն, ինչպես նաև իրեն և փաստաբան Վահե Հովսեփյանին խոչընդոտել են հանդիպել իրենց պաշտպանյալների հետ:

Սեպտեմբերի 21-ին՝ առավոտյան, Երևանի կենտրոնից ոստիկանությունը բերման է ենթարկել ՀՀ Անկախության 20-ամյակին նվիրված զորահանդեսին օտար զորախմբերի և դրոշների մասնակցության դեմ կազմակերպված բողոքի ակցիայի կազմակերպիչներից, Հարավկովկասյան իրավապաշտպանների ցանցի անդամ Գյումրիի «Ասպարեզ» ժուռնալիստների ակումբի խորհրդի նախագահ Լևոն Բարսեղյանը: Հելսինկյան ասոցիացիան տրամադրել էր փաստաբան/ Գարիկ

[8] http://www.epress.am/2011/09/07/%D4%BB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%B9%D5%AB-%D5%BD%D5%BF%D5%B8%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%A5%D5%AC-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80.html

Մալխասյան/, ում սակայն չէին թույլատրել տեսակցել իր պաշտպանյալի հետ՝ պատճառաբանելով, որ նրան ոչ թե բերման են ենթարկել, այլ՝ հրավիրել զրույցի: Միայն այն բանից հետո, երբ Հելսինկյան ասոցիացիայի դիտորդ Արման Վեզիրյանը զանգահարել է ոստիկանության թեժ գիծ, 10 րոպե անց փաստաբանը կարողացել է տեսակցել իր պաշտպանյալի հետ: Երեք ժամ ոստիկանությունում պահելուց հետո, Լ. Բաբսեղյանին ազատ են արձակել:[9]

2011թ. Արդարադատության նախարարությունը Հելսինկյան ասոցիացիային արգելել է մոնիտորինգ իրականացնելու նպատակով մուտք գործել ՀՀ քրեակատարողական հիմնարկներ: 2010թ. ԱՆ նախկին նախարար Գևորգ Դանիելյանը Հելսինկյան ասոցիացիային թույլատրել էր իրականացնել քրեակատարողական հիմնարկների մոնիտորինգը, ինչի արդյունքում հրապարակվել էր համապատասխան զեկույց: Հելսինկյան ասոցիացիայի՝ ՀՀ Քրեակատարողական հիմնարկներում մոնիտորինգային ծրագրի 2-րդ փուլը շարունակելու վերաբերյալ թույլտվություն ստանալու մասին նամակին 2011թ. մարտի 21-ին տրվել էր բացասական պատասխան, որը տրվել էր ոչ թե Արդարադատության նախարարության ներկայիս նախարար Հրայր Թովմասյանի, այլ՝ նախարարության քրեակատարողական վարչության մամուլի քարտուղար Արսեն Բաբայանի կողմից: Պատճառաբանությունը եղել է այն, թե իբրև դատապարտյալները դժգոհ են եղել Հելսինկյան ասոցիացիայի նախկին զեկույցից: Մինչդեռ համաձայն Հելսինկյան ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանի՝ նախարարությանը և իշխանություններին պարզապես հարմար չի տեսնել քրեակատարողական հիմնարկներում կատարվող իրադարձությունների իրական պատկերը:

Նոյեմբերի 30-ին, Կենտրոն և Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանում դատական նիստից առաջ գործով վկա Անուշավան Կարապետյանը Հելսինկյան ասոցիացիայի դիտորդ Կ.Հայրապետյանի վրա ճնշում է գործադրել՝

[9] Տեսանյութը Հելսինկյան ասոցիացիայի՝ http://www.youtube.com/watch?feature=player_embedded&v=WuIMtUL8pqk

ասելով, որ իր համար շատ վատ կլինի և ձեռք կբերի թշնամիներ, եթե շարունակի արձանագրել նիստը:

Դեկտեմբերի 20-ին՝ բնապահպան Եղիա Ներսիսյանը մամուլին հայտնել է, որ Քաջարան այցելության ժամանակ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը բնապահպան-ակտիվիստուհի Մարիամ Սուխուդյանին սպառնացել է, որ եթե սուս չմնա, իր հետ վատ բան կպատահի՝ հավելելով, որ Սյունիքի մարզպետը նաեւ իրեն է սպառնացել: Ե. Ներսիսյանը նշել է նաև, որ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանը Քաջարան այցելած բնապահպաններին որպես թշնամի է դիմավորել: Արդեն մի քանի ամիս է Քաջարան գյուղի բնակիչները պահանջում են չեղյալ համարել ՀՀ կառավարության 627-Ն որոշումը, որով Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին կտրվեն այդ որոշմամբ հանրային գերակա շահ ճանաչված գյուղի հողերը, ինչը նշանակում է ամբողջ գյուղի ստիպողաբար տարհանում:[10]

2011թ. Հոկտեմբեր ամսին, Հ1 հեռուստալիքը անդրադարձել էր բանակում մահերի դեմ բողոքի ակցիաներ կազմակերպող իրավապաշտպան կազմակերպությունների ֆինանսական աղբյուրներին՝ նշելով, որ հովանավորվելով արտերկրից, այդ ՀԿ-ները կատարում են օտարների պատվերը[11]*: Ի պատասխան՝ իրավապաշտպանները նշել էին, թե իրենց վճարած հարկերից աշխատավարձ ստացող հանրային հեռուստատեսությունը և մասնավորապես հեռուստամեկնաբան Գևորգ Ալթունյանն իրենց աշխատանքը մասնագիտորեն չեն իրականացնում:*

Հ1-ի մեկնաբան Գևորգ Ալթունյանը Facebook-ի իր էջում գրել է, որ «Կարելի է ենթադրել, թե իրավապաշտպաններ Արթուր Սաքունցի ու Լևոն Բարսեղյանի սիրտն իսկապես ցավում է մեր բանակի համար ոչ թե «գրանտերի» շնորհիվ, այլ՝ որ իրենց հայ են

[10] http://news.am/arm/news/86540.html

[11] Պաշտպանության նախկին փոխնախարար, ներկայումս ՀՀ Ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանը «Հրապարակ» թերթին տված հարցազրույցում եւ «Զինուժ»-ում խիստ որակումներով քննադատել էր Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցին եւ մի շարք ակտիվիստների՝ բանակում տիրող իրավիճակի դեմ բողոքի ակցիաներ կազմակերպելու եւ ղեկավարության հասցեին անվայել արտահայտություններ անելու համար:

համարում, հայ են էությամբ ու հայրենասեր են, և «Առաջին լրատվականի նախորդ շաբաթօրյա նյութը որոշ հասարակական կազմակերպությունների մասին, իրենց՝ Սաքունցի ու Բարսեղյանի պահով անտեղին էր»: Եվ ինքն ու Հ1-ը կընդունեն իրենց սխալը, եթե Արթուր Սաքունցն ու Լևոն Բարսեղյանը հրապարակավ հայտարարեն երկու բան.

1. որ որպես իրական հայեր ու հայրենասերներ, ում սիրտն իրապես ցավում է հայոց բանակի համար, իրենք դատապարտում են իրենց որոշ իրավապաշտպան գործընկերների, մասնավորապես Գեորգի Վանյանի և Միքայել Դանիելյանի՝ տարբեր ժամանակներում արված հայտարարությունները, հայերի կողմից Խոջալուում ադրբեջանցիների ցեղասպանություն իրականացրած լինելու և Հայաստանի՝ ագրեսոր լինելու և Ադրբեջանի տարածքներն օկուպացնելու մասին,

2. որ եթե Ադրբեջանի կողմից լինի ռազմական ագրեսիա ու պատերազմը վերսկսվի, իրենք նույնպես, որպես իրական հայրենասերներ ու առողջ տղամարդ, պատրաստ են զենք վերցնել ու լծվել մեր Հայրենիքի պաշտպանությանը…»[12]*:*

2011թ. Հայաստանում ԱՄՆ դեսպանությունը «Խիզախ կին» մրցանակը հետմահու շնորհեց «Թրանսփարենսի ինտերնեյշընլ» հակակոռուպցիոն ներկայացուցչության նախագահ Ամալյա Կոստանյանին: Մրցանակը շնորհվեց «հաշվետու և թափանցիկ կառավարման խթանմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և քաղաքացիական հասարակության ներգրավվածության ամրապնդմանն ուղղված իր տասնամյա գործունեության համար»:

Դեկտեմբերի 9-ին Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը Ամալյա Կոստանյանի անվան մրցանակն առաջին անգամ շնորհեց քաղաքացիական հասարակության զարգացման գործում նշանակալի ներդրում ունեցած անձի՝ իրավապաշտպան Արտակ Զեյնալյանին:

[12] http://tert.am/am/news/2011/10/23/discussion/

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԼՄ

ՀՀ Սահմանադրության **հոդված 27-ը ամրագրում է՝** Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է”:

Սույն ոլորտը կարգավորվում է նաև 2003թ.դեկտեմբերի 13-ին ընդունված “Զանգվածային լրատվության մասին” ՀՀ օրենքով: “Զանգվածային լրատվության մասին” ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն արգելվում է՝

1. գրաքննությունը,
2. որևէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի նկատմամբ,
3. լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը:

Համաձայն Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի հրապարակած տվյալների՝ 2011թ.գրանցվել է լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության 3, ԶԼՄ-ների և դրանց աշխատակիցների վրա ճնշումների 33 դեպք: 6 դեպք է գրանցվել նաև տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի խախտումների վերաբերյալ:[13]

2011թ. գրանցվել են բռնության դեպքեր լրագրողների նկատմամբ, նրանց տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի խախտումներ, մի շարք ճնշումներ զանգվածային լրատվական միջոցների նկատմամբ:

2011թ.ապրիլի 21-ին՝ առավոտյան, «Հրապարակ» թերթի խմբագրություն է ներխուժել «Զինվոր» հասարակական կազմակերպությունների համագործակցության

[13] http://www.khosq.am

իրավապաշտպան համակարգող խորհրդի նախագահ Մարգարիտա Խաչատրյանը(մականունը՝Մառոզ)՝տեղալով սպառնալիքներ և հայհոյանքներ, կոտրել բաժակներ, պատառոտել թերթեր և խմբագրին հասցրել մարմնական վնասվածքներ: Համաձայն թերթի խմբագիր Արմինե Օհանյանը՝ նա եկել է երեք հոգու հետ, շուրջ քառասուն րոպե գոռգոռացել է՝տեղալով սեռական բնույթի հայհոյանքներ, սպառնացել սպանել իրեն, ոչնչացնել և այլն, քաշքշել, ճանկռոտել, որից հետո խմբագիրը նկատել է, որ շորերն ամբողջ արյունոտ են: Ըստ խմբագրի՝ Խաչատրյանը զայրացել էր «Հրապարակ»-ում լույս տեսած իր ղեկավարած կազմակերպության մասին տպագրված՝ «Ծեծկռտո՞ւք է եղել» վերնագրով տեղեկատվության պատճառով: Նա տեղեկացրեց, որ կնոջ ներխուժումից անմիջապես հետո իրենք զանգահարել են Ոստիկանություն, իրավապահները, սակայն, խմբագրություն են ժամանել 30-35 րոպե հետո:[14] Մայիսի 27-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երեւանի կենտրոնական քննչական բաժինը մերժել է Մարգարիտա Խաչատրյանի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնել՝ հանցակազմի բացակայության հիմնավորմամբ: Սեպտեմբերի 27-ին, սակայն,Մարգարիտա Խաչատրյանի խուլիգանական արարքի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ՝ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Ապրիլի 23-ին լրագրողի նկատմամբ բռնության փաստ արձանագրվեց «Հրազդան» ստադիոնում՝ Հայաստանի ֆուտբոլի բարձրագույն խմբի առաջնության 6-րդ տուրի «Արարատ»-«Փյունիկ» հանդիպման ընդմիջմանը: «Totalfootall.am»-ի փոխանցմամբ՝նույն լրատվամիջոցի ֆոտոլրագրող Աշոտ Առուշանյանին, իր աշխատանքը կատարելիս, նախ հարվածել է Երևանի «Արարատի» գլխավոր մարզիչ Արկադի Անդրեասյանը՝ ասելով. «Էդ ո՞ւմ ես նկարում»: Այնուհետեւ վերջինիս ուղեկցողները երիտասարդ լրագրողին ծեծել են «Հրազդան» ստադիոնի թունելում՝ պահանջելով ջնջել լուսանկարած կադրերը: Տուժածը ծնոտի վնասվածքով

[14] http://tert.am/am/news/2011/04/21/hraparak1/

տեղափոխվել է հիվանդանոց, որտեղից դուրս է գրվել հաջորդ օրը: ՀՀ ոստիկանության մամուլի ծառայության հաղորդմամբ՝ քրեական գործ հարուցելու նյութեր են նախապատրաստվել: Մայիսի 23-ին Արկադի Անդրեասյանի նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպման ժամանակ վերջինս Աշոտ Առուշանյանի ծնողների ներկայությամբ ներողություն խնդրեց ֆոտոլրագրողից՝ տեղի ունեցած միջադեպի առնչությամբ[15]:

Հուլիսի 28-ին, ժամը՝ 23:30-ի սահմաններում, Հանրապետության հրապարակում ոստիկանները բռնություն են գործադրել Հայկական ժամանակ օրաթերթի լրագրող Անի Գևորգյանի նկատմամբ, երբ վերջինս փորձել է կատարել իր մասնագիտական պարտականությունները: Համաձայն Ա. Գևորգյանի՝ հուլիսի 28-ին, ժամը՝ 23:30-ին, Հանրապետության հրապարակի շատրվանների մոտ հարյուրավոր մարդիկ էին հավաքված: Երբ լրագրողը փորձել է լուսանկարել այդ պահին տեղի ունեցող իրադարձությունը՝ ոստիկաններից փախչող և հրապարակի ջրավազանում հայտնված մի կնոջ հետ կապված, Գևորգյանից մոտ 50 մետր հեռու գտնվող մի ոստիկան, որը հայտնի է <<Կյաժ>> մականունով, սկսել է բղավել. <<Ի՞նչն ես նկարում, արա, ուրիշ բան ու գործ չունե՞ս>>: Լրագրողը ոստիկանին հորդորել է իրեն իրավապահի նման պահել, նա էլ քթի տակ ինչ-որ բառեր փնթփնթալով՝ իջել է լողավազանի քարերի վրայից և մի քանի տասնյակ քաղաքացիների առաջ վազել նրա ուղղությամբ: Հասնելով վերջինիս՝ նա աջ ձեռքով հարվածել է Գևորգյանի ձախ ձեռքին, այնուհետև ձախ ձեռքով բռնել ձեռքում գտնվող լուսանկարչական ապարատը և սկսել քաշքշել այն: Այնուհետև ևս մեկ անգամ հարվածել ձեռքին: Դրանից հետո հայտնվել են մոտ մեկ տասնյակ ոստիկաններ, նրանցից մեկը առաջ է եկել, հարվածել Գևորգյանի ձեռքին, հրել նրան և փորձել խլել տեսախցիկը, ինչը նրան չի հաջողվել[16]:

---

[15] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի երկրորդ եռամսյակային զեկույց /ապրիլ-հունիս 2011թ./ http://www.khosq.am

[16] http://www.armtimes.com

Օգոստոսի 3-ին հայտնի դարձավ, որ ՀՀ ոստիկանության Երեւանի կենտրոնական բաժնում նյութեր են նախապատրաստվում՝ լրագրող Անի Գեւորգյանի վրա ոստիկան Աշոտ Սարգսյանի հարձակման վերաբերյալ: Սակայն օգոստոսի 25-ին պարզվեց, որ ոստիկանությունը բավարար հիմքեր չի գտել թղթակից Անի Գեւորգյանի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ քրեական գործ հարուցելու համար. ըստ գործը քննողի՝ լրագրողի լուսանկարելու ընթացքում ոստիկանը ոչ թե հարվածել է նրա ձեռքին, այլ հրել է ֆոտոխցիկը, քանի որ այն շատ մոտ է եղել վերջինիս դեմքին:

Դեկտեմբերի 9-ին մայրաքաղաքի Չարենց եւ Հերացի փողոցների գետնանցման հատվածում ավտովթարի վայրում հիմնական մեղավորները, նյարդայնանալով ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի ներկայությունից, որը փորձել էր լուսանկարել տեղի ունեցած ավտովթարը, հարվածել ու քաշքշել էին վերջինիս: Համաձայն Գ. Շամշյանի՝ «Վթար էր եղել, և մեղավորները «տղայական բազարների» միջոցով փորձում էին համոզել ոստիկաններին որ ես չլուսանկարեմ: Տեսնելով որ ես լուսանկարում եմ, նրանցից մեկը մոտեցավ ինձ, ասաց, որ ինքը կալանավոր է և պահանջում է անջատել տեսախցիկը և չլուսանկարել: Ես, բնականաբար, չդադարեցրեցի լուսանկարելը, և մոտեցան ինձ մի 6-7 հոգի ու սկսվեց ծեծկռտուք: Խնդիրն այն է, որ ոստիկանության աշխատակիցները էնտեղ էին, ու հստակ ասում եմ, որ իրանց սրտով էր, որ ինձ ծեծում էին, ուրախանում էին՝ վախ ինչ լավ է, տեսնենք Շամշյանին ինչ օրն են գցում: Իրենք կարող էին դա կանխել, բայց չկանխեցին»:[17]

Մարտի 17-ին, ժամը 16:00-ի սահմաններում Երևանի կենտրոնում՝ Մաշտոց-Թումանյան փողոցների կողմից Ազատության հրապարակի մուտքը փակվել էր ոստիկանների կողմից, ովքեր արգելել են Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդ Արման

[17] http://tert.am/am/news/2011/12/15/shamshyan/

Վեզիրյանին, ինչպես նաև լրագրողներին մուտք գործել հրապարակի տարածք՝ պատճառաբանելով, որ ունեն նման հրաման: Ա. Վեզիրյանի հարցին, թե ում կողմից է հրամանը տրվել, ոստիկանները խուսափել են որևէ պատասխան տալուց: Հրապարակի ներսում գտնվող մարդկանց վերաբերյալ ոստիկանության աշխատակիցները լրագրողներին հայտնել են, որ նրանք այնտեղ են հայտնվել ավելի վաղ և տարածքը լքելուց հետո իրավունք չեն ունենալու կրկին մտնել հրապարակ:

Լրագրողի հարցին՝ արդյոք ոստիկանությունը խոչընդոտում է լրագրողների աշխատանքը, ոստիկանության փոխգնդապետը, որը չի ներկայացել, պատասխանել է՝ "Այո, խոչընդոտում եմ":[18]

Համաձայն Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի՝ փետրվարի 1-ին «Հայկական ժամանակ» օրաթերթը տեղեկացրել է, որ 2010 թ. նոյեմբերի 30-ից «Արթիկ» ՔԿՀ-ում գտնվող «ՀԺ»-ի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանի նամակ-հոդվածները, որոնք նա ՔԿՀ-ի վարչակազմին էր հանձնել ԵԽ մարդու իրավունքների գլխավոր հանձնակատար Թոմաս Համմարբերգի ներկայությամբ, հունվարի 31-ին «Հայկական ժամանակի» խմբագրություն են հասել փոստով՝ ուղարկված ՀՀ արդարադատության նախարարության կողմից: Այդ նամակներից մեկը հասցեագրված է եղել ՀՀ արդարադատության նախարարին եւ վերաբերել է 2010 թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում «Արթիկ» ՔԿՀ-ի կողմից Փաշինյանի նամակագրության իրավունքի խախտումներին (Փաշինյանի ուղարկած 15 նամակներից միայն մեկն էր հասել խմբագրություն): Նույն նամակում Փաշինյանը դիմել է արդարադատության նախարարին, որպեսզի հունվարի 10-ից մինչեւ 17-ը գրած իր նամակ-հոդվածները խմբագրությանը փոխանցվեն հենց նախարարի միջոցով: Փաստորեն, միայն այսկերպ է վերականգնվել Նիկոլ Փաշինյանի մասնագիտական գործունեությունը շարունակելու իրավունքը, և փետրվարի 1-ից թերթում շարունակվեցին տպագրվել նրա՝ ավելի վաղ

[18] Տեսանյութը Հելսինկյան ասոցիացիայի՝ http://www.youtube.com/watch?v=QNM2kMOSGsY

գրած հոդվածները: Սակայն փետրվարի 5-ին տեղեկություն է տարածվել, որ «Արթիկ» ՔԿՀ-ղեկավարությունը կրկին խոչընդոտում է Նիկոլ Փաշինյանի՝ արտաքին աշխարհի հետ կապ հաստատելուն՝ թույլ չտալով փոխանցել նրա նամակներն ու պաշտոնական գրությունները: Փաստաբանի փոխանցմամբ՝ Փաշինյանը զրկված է եղել իր հոդվածները հարազատների կամ փաստաբանի միջոցով արտաքին աշխարհ ուղարկելու հնարավորությունից:

Մարտի 25-ին Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն դիմել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ վերջինիս գործողությունները(անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու եւ տեղեկատվություն տրամադրելու հայցապահանջով:
Փետրվարի 11-ին ԽԱՊԿ-ն հարցում է ուղարկել ՀՀ առողջապահության նախարար Հարություն Քուշկյանին՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել նախարարությունում հավատարմագրված լրագրողների, ինչպես նաեւ՝ հավատարմագրման դիմումների մերժման վերաբերյալ: Հարցման հիմքում ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 333-Ն որոշումն է՝ ՀՀ պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման օրինակելի կարգի մասին, ինչպես նաեւ՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը: Նախարարությունը պահանջվող տեղեկությունները ԽԱՊԿ-ին տրամադրեց ապրիլի 5-ին՝ խախտելով օրենքով սահմանված ժամկետը, եւ միայն այն բանից հետո, երբ ստացավ հայցադիմումը:

Ապրիլի 13-ին «Առավոտ» օրաթերթը տեղեկացրեց, որ նախորդ օրը՝ առավոտյան ժամը 10.30-ի սահմաններում, ինչ-որ մարդիկ Գյումրու բոլոր կրպակներից գնել են թերթի ամբողջ խմբաքանակը: Ըստ վաճառողների՝ դա կապված է եղել թերթի այդ համարում տպագրված «Պատժում են Գյումրիի անվանի կանանց» վերնագրով նյութի հետ: Հրապարակումը վերաբերում էր իտալական պոլիկլինիկայի տնօրեն Տաթեւիկ Փանոսյանի եւ թիվ 1 դպրոցի տնօրեն Ջեմմա Ամիրխանյանի դեմ հարուցված քրեական

գործերին: Վերջիններս մեղադրվում են պաշտոնական դիրքը չարաշահելու եւ խոշոր չափի յուրացումներ կատարելու մեջ: Կրպակների աշխատողների ենթադրությամբ՝ օրաթերթի բոլոր համարները գնել են Ջեմմա Ամիրխանյանի հարազատները:[19]

Մայիսի 13-ին, Երևանի «Մոսկվա» կինոթատրոնը հրաժարվել է ցուցադրել «Հայաստանի կորսված գարունը» փաստավավերագրական ֆիլմը (սցենարի հեղինակ՝ Տիգրան Պասկևիչյան, ռեժիսոր՝ Արա Շիրինյան): Ըստ Տ. Պասկևիչյանի՝ ֆիլմը չի ցուցադրվում քաղաքական դրդապատճառներով: Կինոթատրոնի տնօրեն Մարտուն Ադոյանը ֆիլմը չցուցադրելու պատճառ է նշել, սակայն, ֆիլմի տեխնիկական որակը: Նա համաձայն չի եղել, որ ֆիլմի չցուցադրելը քաղաքական շարժառիթներով կարող է պայմանավորված լինել: Ֆիլմն ուղարկվել է բոլոր հեռուստատեսություններին, բայց այն հեռարձակելու ցանկություն հայտնել է միայն Գյումրիի «Գալա» հեռուստաընկերությունը:[20]

2011թ. լրատվամիջոցների դեմ մի շարք դատական հայցեր են ներկայացվել քաղաքական գործիչների և պաշտոնյաների կողմից: Դատական գործերը կապված են զրպարտության եւ վիրավորանքի միջոցով քաղաքացու պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգի եւ պայմանների վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **1087.1. հոդվածի հետ**:[21] Այս հոդվածը հրապարակվող քննադատության նկատմամբ անհանդուրժող պաշտոնյաների համար ծառայում է ճնշման միջոց լրատվամիջոցների դեմ:[22]

---

[19] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի երկրորդ եռամսյակային զեկույց /ապրիլ-հունիս 2011թ./ http://www.khosq.am

[20]«Հայաստանի կորսված գարունը» խորագրով փաստավավերագրական կինոնկարը նվիրված է մարտի 1-ի իրադարձություններին, որտեղ նկարագրվում է 2007թ.-ի սեպտեմբերից 2008թ.-ի մարտի 1-ը ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձություններն ու նախընտրական, ընտրական և հետընտրական զարգացումները:

[21] 2010թ.մայիսի 18-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց “ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին”, “ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին” եւ “ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին” օրենքների նախագծերի փաթեթը:

2011թ. հունվարի 17-ին Երեւանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության ***դատարանում քննվել է ԱԺ պատգամավորներ*** *Ռ. Հայրապետյանի, Լ. Սարգսյանի եւ Ս. Ալեքսանյանի՝* ***«Հայկական ժամանակի»՝ «Ութից յոթը ցուցակում են» հրապարակման վերաբերյալ*** *հայցն* ***ընդդեմ «Հայկական ժամանակ» օրաթերթի*** *հրատարակիչ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի: Պատգամավորները պահանջել են դատարանից թերթին պարտավորեցնել տպագրել վերոնշյալ հոդվածով հրապարակված՝* ***իրենց*** *պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավն արատավորող տեղեկությունների հերքում և ֆինանսապես փոխհատուցել իրենց կրած վնասը: Փետրվարի 7-ին* ***դատարանը*** *հրապարակել է վճիռը, համաձայն որի՝ մասամբ բավարարվել է հայցվորների պահանջը՝* ***«Հայկական ժամանակ» օրաթերթի*** *հրատարակիչ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ին պարտավորեցնելով հայցվորներից յուրաքանչյուրին վճարել 2 միլիոն 44 հազար դրամ եւ վճիռն ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում տպագրելու 2010 թ. հոկտեմբերի 14-ի՝* ***«Ութից յոթը ցուցակում են»*** *հրապարակմամբ հայտնած տեղեկությունների հերքում:*

2010 թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ 2-րդ նախագահի կինը և որդին՝Բելլա եւ Սեդրակ Քոչարյանները, հայց էին ներկայացրել Երեւանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության ***դատարան, որով*** *վիճարկում էին «Ժամանակ» օրաթերթի «Արյունը՝ Քոչարյաններից, կայֆը՝ Ծառուկյանից, իսկ հակացնցումը՝ Լֆիկից»(25.09.2010թ.), «Ադամանդե Ռոբը»(29.09.2010թ.), «Volvo+Spayka=Սեդրակ Քոչարյան»(07.10.2010թ.) հրապարակումները: Քոչարյանները պահանջել են թերթին պարտավորեցնել տպագրել վերոնշյալ հոդվածներով հրապարակված՝* ***իրենց*** *պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավն արատավորող տեղեկությունների հերքում և ֆինանսապես փոխհատուցել իրենց՝ 6 մլն դրամի չափով կրած վնասը:*

Ըստ նախագծերի՝ չեղյալ են համարվում ՀՀ քր. Օր. 135՝ "Զրպարտությունը" եւ 136 "Վիրավորանքը" հոդվածները, փոխարենը անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը եւ պայմանները սահմանվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

[22] Ստորև ներկայացված տեղեկատվությունը հիմնված է Հելսինկյան ասոցիացիայի դիտորդների, մամուլի հրապարակումների և Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի տեղեկությունների վրա:

2011թ.հունիսի 6-ին դատարանը հրապարակեց վճիռը, համաձայն որի՝ մասամբ բավարարվեց հայցը՝թերթը պարտավորվեց հերքել Հայաստանի երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի ընտանիքի անդամների պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավն արատավորող տեղեկությունները եւ 3 միլիոն դրամի չափով փոխհատուցել զրպարտության եւ վիրավորանքի միջոցով հասցված վնասը: Հայցվորի՝3 միլիոն դրամի պահանջը փաստաբանական ծառայությունների դիմաց, մերժվեց:

Փետրվարի 16-ին Երեւանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում լսվեց ԱԺ նախագահի նախկին խորհրդական Թաթուլ Մանասերյանի՝ ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի հիմնադիր «Սկիզբ Մեդիա Կենտրոնի» ներկայացրած հայցով գործը: Հայցվորը թերթի՝2010 թ. սեպտեմբերի 29-ի համարում հրապարակված «Քր.գործ՝ ԱԺ նախագահի խորհրդականի դե՞մ» վերնագրով տեղեկությունը համարում է զրպարտություն, որով արատավորվել են իր պատիվն ու արժանապատվությունը, պահանջել է տպագրել հերքում եւ փոխհատուցել իր՝ 2,5 միլիոն դրամ կրած վնասը: Սեպտեմբերի 20-ին դատարանը հրապարակեց վճիռը, համաձայն որի՝ հայցը մասնակի բավարարվեց և «Ժամանակ» օրաթերթը պարտավորվեց տպագրել հերքում, վճարել 510 000 դրամ փոխհատուցում, որից 300 000-ը՝ զրպարտության, 200 000-ը փաստաբանի վարձատրության համար, 10 000-ը՝որպես պետական տուրք:

2011թ. հուլիսի 1-ին ՀՀ վճռաբեկ դատարանը մերժեց «ԳԱԼԱ» հեռուստաընկերության հիմնադիր «ՉԱՊ» ՍՊԸ-ի բողոքը և ուժի մեջ մնաց ՀՀ վերաքննիչ դատարանի՝ապրիլի 26-ի վճիռը՝ հօգուտ Գյումրու քաղաքապետարանի, ինչը նշանակում է, որ «ԳԱԼԱ»-ն պարտավորվում է քաղաքի հին հեռուստաաշտարակից ապամոնտաժել իր հեռարձակող սարքավորումները: Գյումրու հին հեռուստաաշտարակի շահագործման վերաբերյալ քաղաքապետարանի եւ «ԳԱԼԱ» հեռուստաընկերության հիմնադիր «ՉԱՊ» ՍՊԸ-ի միջեւ վեճը սկսվել է 2007 թ. նոյեմբերից: Շիրակի մարզի ընդհանուր

իրավասության դատարանը, հօգուտ Գյումրու քաղաքապետարանի, որոշում էր կայացրել դեռևս 2008-ի ապրիլի 14-ին: ՀՀ վերաքննիչ դատարանն այն թողել էր անփոփոխ, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը բեկանել էր վերաքննիչ դատարանի որոշումը: Հետագայում շարունակվեցին դատական գործընթացները, և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2011 թ. ապրիլի 26-ին կայացրած վճռով անփոփոխ մնաց Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի այն որոշումը, որով «ԳԱԼԱ» հեռուստաընկերությունը պարտավորվել էր հեռուստաաշտարակից ապամոնտաժել իր հեռարձակող սարքավորումները: Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն, Երեւանի մամուլի ակումբը եւ Գյումրու՝ լրագրողների «Ասպարեզ» ակումբը հանդես են եկել համատեղ հայտարարությամբ՝ընդունված վճիռը գնահատելով որպես իշխանական տարբեր օղակների կողմից հեռուստաընկերության դեմ 2007 թվականից նախաձեռնված ճնշումների շարունակություն եւ նոր սպառնալիք՝ խոսքի ու ԶԼՄ- ների ազատության համար:

Փետրվարի 25-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան հայց է ներկայացվել ՀՀ ԱԺ պատգամավոր Տիգրան Արզաքանցյանի կողմից, որով վերջինս վիճարկում է Երկիր» օրաթերթի «131 դեմք ու դիմակ» խորագրի ներքո/հունվարի 13, 2011թ./ տպագրված տեղեկություններն իր մասին: Թերթից պահանջել է 3 000 000 դրամ փոխհատուցում իրեն հասցված վիրավորանքի եւ զրպարտության դիմաց, և 568.000 դրամ՝ փաստաբանական եւ դատական ծախսերի դիմաց: Հունիսի 8-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը հրապարակեց վճիռը, համաձայն որի՝ Տ. Արզաքանցյանի հայցը բավարարվեց մասամբ՝թերթը պարտավորվեց վճարել 200 000 դրամ փոխհատուցում՝ վիրավորանքի դիմաց, փաստաբանական ծախսը համար՝80 000 դրամ, պետական տուրք՝8 000 դրամ:

Մարտի 28-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան հայց է ներկայացրել ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանը ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի, համաձայն որի՝ հայցվորը պահանջել է թերթին պարտավորեցնել հերքել «Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին՝ բացատրո՞ւմ» հոդվածում հրապարակված տեղեկությունները/փետրվարի 12/ և որպես փոխհատուցում՝ վճարել 6 մլն դրամ, ինչպես նաև արգելանք դնել թերթի գույքի եւ բանկային հաշիվների վրա: Նույն օրը դատարանը բավարարել էր արգելանքի մասին պահանջը, ինչը վերացվեց թերթի միջնորդությամբ: «Հրապարակի»՝ փետրվարի 22-ի, ապա նաև մարտի 12-ի համարներից թերթը գրել է, որ ի պատասխան հայցվորի անունից ստացված հերքման պահանջ բովանդակող գրությունների, պատրաստակամություն է հայտնել տպագրելու հերքում, եթե խմբագրությունը, օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում, իրավասու անձի կողմից ստանա հոդվածի անճշտություններին վերաբերող տեքստ: Դատավարությունը դեռևս շարունակվում է:

2011թ. մայիսի 1-ին, “Լրագրողներն առանց սահմանների” կազմակերպությունը հրապարակել է հայտարարություն, որտեղ նշում է՝ կազմակերպությունն անհանգստացած է այն դատական հայցերի առթիվ, որ ներկայացվել են ընդդեմ հայաստանյան պարբերականների: Մտահոգության տեղիք է տալիս թերթերից պահանջվող փոխհատուցման անհամարժեք չափը, ինչը վտանգում է այդ պարբերականների գոյությունն ու նպաստում դրանցում ինքնագրաքննության մթնոլորտի ձեւավորմանը»: Կազմակերպությունը նշում է, որ թեև զրպարտության եւ վիրավորանքի համար քրեական պատիժը վերացվեց 2010-ի ապրիլին, ինչն ընկալվեց որպես քայլ դեպի ժողովրդավարություն, այնուհանդերձ՝ «պարբերականների դատական հետապնդումները շարունակվում են»:[23]

[23] http://www.azatutyun.am/content/article/16800175.html

2011թ. մայիսին հրապարակված Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպության ԶԼՄ-ների ազատության մասին զեկույցում Հայաստանն ընդգրկված էր ոչ ազատ պետությունների շարքում:[24]

2011թ. մայիսի 1-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ հիմնադրվեց Տեղեկատվական վեճերի խորհուրդը, որի հիմնական նպատակն է պաշտպանել խոսքի ազատությունը, տեղեկատվության մատչելիությունը, ինչպես նաև անձի արժանապավությունը եւ մասնավոր կյանքի իրավունքը՝ այդ իրավունքների իրացման ընթացքում ծագող դատական վեճերի դեպքերում փորձագիտական եզրակացություններ հրապարակելով, որոնք հիմնված են ՀՀ օրենսդրության, միջազգային իրավական ակտերի եւ էթիկայի նորմերի վրա:

2011թ. հուլիսի 15-ին, ՀՀ Սահմանադրական Դատարանն հակասահմանադրական ճանաչեց մի նորմ, որը Վճռաբեկ դատարանը կիրառել է “Ա1+”-ի նկատմամբ: Հուլիսի 15-ին ՍԴ-ն “Մելտեքս” ՍՊԸ “Ա1+” հեռուստաընկերության հայցը քննարկել է միացյալ գործում, որտեղ միավորվել են ՀՀ ՍԴ-ի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների կատարման օրենսդրական ընթացակարգերի սահմանադրականությունը վիճարկող գործերը: Համաձայն ՍԴ-ում “Ա1+”-ի շահերի ներկայացուցիչ, Հելսինկյան ասոցիացիայի փորձագետ Արտակ Զեյնալյանի՝ իրենք դիմել էին ՍԴ՝ վիճարկելով այն նորմը, որը կիրառվել էր Վճռաբեկ դատարանի կողմից եւ ընդհանուր կարգով մերժվել էր “Ա1+”-ի վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը վերանայելու վերաբերյալ, որը կայացվել էր 2004թ: Եվրոպական դատարանի որոշումը ստանալուց հետո իրենք դիմել էին Վճռաբեկ դատարան՝ պահանջելով բեկանել 2004թ. “Ա1+”-ի նկատմամբ կայացված դատական ակտերը, սակայն Վճռաբեկ դատարանն այդ ժամանակ կիրառեց մի նորմ, որն արդեն ՍԴ-ն ճանաչել էր հակասահմանադրական: 2004թ. “Ա1+” վիճարկում էր իր նկատմամբ՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային

[24] http://krasnodar.kavkaz-uzel.ru/articles/184714/

հանձնաժողովի կայացրած վարչական ակտերի համաչափությունը, ինչպես նաեւ ՀՌԱՀ-ի կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10 հոդվածը խախտելու փաստը: “Ա1+”-ը Եվրոպական դատարանում հաղթեց: Դատարանն արձանագրեց, որ ՀՀ վարչական մարմնի կողմից խախտվել է Եվրոպական կոնվենցիայի 10 հոդվածը և ՀՀ ներպետական դատարանները չեն արձանագրել այդ ակտը: Ուստի այդ ակտերը հիմա պետք է բեկանվեն”: Հուլիսի 15-ին ՍԴ-ն կրկին հաստատել է իր դիրքորոշումը, որ Վճռաբեկ դատարանը “Ա1+”-ի նկատմամբ հակասահմանադրական նորմ է կիրառել, որ արդյունքում “Ա1+”-ի օգտին Եվրոպական դատարանի կայացրած որոշումը դեռ չի կիրառվել, այն է՝ հավասար պայմաններ ստեղծել “Ա1+”-ին եթեր վերադարձնելու համար: ՍԴ-ի որոշումը օրենքի ուժ ստանալուց հետո, ԱԺ-ն պետք է համապատասխան փոփոխություններ կատարի “Քաղաքացիական դատավարության” օրենսգրքում, վերացնի այն հակասահմանադրական ակտը, որ 2004թ. “Ա1+”-ի նկատմամբ կիրառել է Վճռաբեկ դատարանը: Համաձայն Ա. Զեյնալյանի դրանից հետո իրենք նորից կդիմեն Վճռաբեկ դատարան, որպեսզի Վճռաբեկը բեկանի 2004թ. “Ա1+”-ի նկատմամբ կայացրած իր որոշումները՝ կամ նոր դատական ակտ կայացնի՝ Եվրոպական դատարանի լույսի ներքո, կամ բեկանի և ուղարկի Վարչական դատարան՝ նոր քննության:[25]

2010թ. հուլիսի 20-ին, համաձայն “Հեռուստատեսության և ռադիոյի մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը /ՀՌԱՀ/ հայտարարեց ՀՀ տարածքում թվային հեռարձակման ցանցի միջոցով եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստահեռարձակողների լիցենզավորման մրցույթները: Դեկտեմբերի 16-ին ՀՌԱՀ-ի կողմից հայտարարվեց հեռարձակման մրցույթների արդյունքները: 2002թ. ապրիլի 2-ից եթերազրկված և, այնուհետև, դրանից հետո հայտարարված բոլոր մրցույթներին մասնակցած ու պարտված “Ա1+”

[25] http://www.a1plus.am/am

հեռուստաընկերությունը կրկին եթեր վերադառնալու հնարավորություն չստացավ: ՀՌԱՀ նախագահ Գրիգոր Ամալյանի խոսքերի համաձայն “Ա1+”-ի փաթեթում առկա են եղել կեղծ փաստաթղթեր: Ըստ նրա, փաթեթում “Մելտեքս” ընկերությանը ֆինանսական աջակցություն ցուցաբերող արտասահմանյան ընկերությունները իրականում գոյություն չունեն: “Ա1+”-ի նախագահ Մ. Մովսիսյանի կողմից նման մեղադրանքը համարվել է անհիմն:

2011թ. հոկտեմբերի 3-ին ՀՀ վարչական դատարանը մերժեց «Ա1+»-ի հայցն ընդդեմ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ): «Ա1+»-ը պահանջում է չեղյալ համարել 2010թ. դեկտեմբերի 16-ին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովից (ՀՌԱՀ) կայացրած՝ 96Ա որոշումը, ըստ որի՝ հեռուստաընկերությունը թվային հեռարձակման թիվ 11 մրցույթում ճանաչվել էր պարտվող: Հաղթող ճանաչել էր «Արմնյուզ»-ին: Համաձայն դատարանի վճռի՝ 2010թ-ին ՀՌԱՀ-ի հեռարձակման արտոնագրերի համար հայտարարված մրցույթում չի խախտվել «Ա1+»-ի իրավունքները:[26]

[26] http://www.a1plus.am/am/politics/2011/10/03/a1

ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐ

ՀՀ-ում խաղաղ հավաքների ազատության իրավունքը կարգավորվում է.

ՀՀ Սահմանադրությամբ/հոդվածներ 29; 44 և այլն/,

“Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” կոնվեցիայով/հոդված 11/,

“Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին” միջազգային դաշնագրով/հոդվածներ 21; 22/,

2011թ ապրիլի 14-ին ընդունված «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքով, «Ոստիկանության մասի» ՀՀ օրենքով, ինչպես նաև “Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին” ՀՀ օրենքով, “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքով:

Համաձայն Սահմանադրության /հոդված 6/՝ ՀՀ-ում միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են և դրանք գերակա են ազգային օրենքների նկատմամբ, հետևաբար “Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” կոնվենցիայով /հոդված 11/, “Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին” միջազգային դաշնագրով /հոդվածներ 21; 22/ երաշխավորված ազատությունները չեն կարող սահմանափակվել ՀՀ ներքին օրենսդրությամբ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի՝ “Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք”:

ՀՀ Սահմանադրությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների /այդ թվում՝ խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքի/ սահմանափակման 2 մեխանիզմ է նախատեսում:

Առաջինը՝ սովորական պայմաններում, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխարգելման, հանրության առողջության և բարքերի, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար /հոդված 43/:

Երկրորդը՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ: Մասնավորապես, Սահմանադրության 44-րդ հոդվածում ամրագրվում է, որ մարդու և քաղաքացու առանձին իրավունքներ և ազատությունները արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում կարող են օրենքով սահմանված կարգով՝ իրավիճակին համարժեք չափով, ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

2011թ. ապրիլի 14-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը, որի նախագիծը մշակվել էր 2010թ. Պաշտպանի և ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից: Ըստ պաշտպանի՝ օրենքում հաշվի են առնվել Վենետիկի հանձնաժողովի և ԺՀՄԻԳ կողմից արված առաջարկությունները:

Համաձայն նախագծի հեղինակ Մարդու իրավունքների պաշտպանի՝ ընդունված օրենքի գործողությունն այլևս չի տարածվում բոլոր տեսակի «միջոցառումների» վրա, այլ սահմանափակվում է միայն «հավաքներով»: Պարզ ու հասկանալի է հավաքների երկու հիմնական տիպերի՝ իրազեկման ենթակա և իրազեկման ոչ ենթակա

հավաքների միջև տարբերակումը, հստակ սահմանվում է այն վայրերի շրջանակը, որտեղ արգելվում է հավաքների անցկացումը: Օրենքն ամրագրել է նաև այն սկզբունքային մոտեցումը, որ քանի դեռ հավաքը մնում է խաղաղ, այն չի կարող դադարեցվել ոստիկանության կողմից:[27] Պաշտպանի կարծիքով՝ ընդունված օրենքն առավելագույնս կնպաստի հավաքներ անցկացնելու սահմանադրական իրավունքի ապահովմանը:

2011թ. ընթացքում ոստիկանների կողմից շարունակվել են խաղաղ հանրահավաքների, ակցիաների մասնակիցների ապօրինի բերման ենթարկումներ և ձերբակալություններ, նրանց նկատմամբ կիրառվել է բռնություն: Ոստիկանության կողմից սահմանափակվել է անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը: Հանրահավաքների օրերին փակվել են մարզերից մայրաքաղաք տանող ճանապարհները, ստուգվել են Երևան ուղևորվող մեքենաները:[28]

2011թ.մարտի 1-ին ՀԱԿ-ի կողմից կազմակերպված երթի ժամանակ Մաշտոց-Իսահակյան խաչմերուկի մոտ ոստիկանության աշխատակիցները խոչընդոտել են Հելսինկյան ասոցիացիայի դիտորդ Արման Վեզիրյանի աշխատանքը: Ոստիկանների նպատակը եղել է տեսախցիկի խլումը Վեզիրյանի ձեռքից, քանի որ այդ պահին դիտորդը նկարահանում էր նրանց կողմից բռնության կիրառումը խաղաղ ցուցարարների նկատմամբ: Ա. Վեզիրյանը նաև նկարահանելիս է եղել, թե ինչպես են ոստիկանները փորձում խլել Հայկական ժամանակ օրաթերթի լրագրող Անի Գևորգյանին պատկանող ֆոտոխցիկը: Ոստիկանները Ա. Վեզիրյանին քաշքշել են և հարվածել թիկունքից: Ապա, նրա վրայից պոկել են Հելսինկյան ասոցիացիայի բեյջը, խլել և գետին են նետել դիտորդի ֆոտոխցիկի օբյեկտիվը, որը կոտրվել է: Միջադեպից հետո Ա. Վեզիրյանը մոտեցել է Երևան քաղաքի ՊՊԾ գնդի հրամանատար

[27] Այս սկզբունքի գործնական կիրառության օրինակ է՝ ՀԱԿ՝ 2011թ. հոկտեմբերին 1 շաբաթանոց «ինքնաբուխ» շուրջօրյալ հանրահավաքը, որը ոստիկանության կողմից չցրվեց:

[28] Ստորև ներկայացված տեղեկատվությունը հիմնված է Հելսինկյան ասոցիացիայի դիտորդ Արման Վեզիրյանի և մամուլի հրապարակումների հիման վրա:

Վալերի Օսիպյանին և հայտնել իր վրա կատարված հարձակման և բռնության մասին, ինչին ի պատասխան Վ. Օսիպյանը բառացիորեն տվել է հետևյալ պատասխանը՝ "Ինչի ես սուտ խոսում".[29]

Մարտի 3-ին, ՀՀ Կառավարության շենքի դիմաց տեղի ունեցող բողոքի ակցիայի ժամանակ ոստիկանության աշխատակիցների և բացօթյա առևտրով զբաղվող անձանց միջև տեղի է ունեցել բախում: Ցուցարարները, այդ թվում նաև ՀԱԿ ակտիվիստ Վարդգես Գասպարին բերման են ենթարկվել ոստիկանական բաժանմունք: Ոստիկանները արգելել են Վ. Գասպարիի փաստաբանի մուտքը ոստիկանական բաժանմունք: Բողոքի ակցիային մասնակցել են նաև ԱԺ "Ժառանգություն" խմբակցության պատգամավորները: Հարվածի հետևանքով ՀՀ ԱԺ պատգամավոր Անահիտ Բախշյանը ինքնազգացողության վատացման պատճառով տեղափոխվել է հիվանդանոց, ծեծի են ենթարկվել ԱԺ պատգամավորներ Զարուհի Փոստանջյանը և Արմեն Մարտիրոսյանը:

Մարտի 15-ին Ժառանգություն կուսակցության ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանը Ազատության Հրապարակում անժամկետ հացադուլ է սկսել՝ ակնկալելով առաջիկա արդար ընտրություններ, բայց, այնուամենայնիվ, չներկայացնելով կոնկրետ պահանջներ: Հացադուլավորի համակիրների և Ոստիկանության աշխատակիցների միջև ընդհարումներ են տեղի ունեցել՝ կապված Հրապարակում վրաններ և հովհանոցներ տեղադրելու չհիմնավորված արգելքների հետ, որոնք ՄԻՊ Կարեն Անդրեասյանը որակել է որպես ոչ իրավաչափ և «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքին հակասող:

Ապրիլի 28-ին՝ առավոտյան, Արտաշատ ք. ՀԺԿ տարածքային կազմակերպության քարտուղար Արամայիս Բարսեղյանի տուն են այցելել Արտաշատ քաղաքի ոստիկանության աշխատակիցները և հորդորել չմասնակցել նույն օրը ժամը 18:00-ին

[29] Տեսանյութը Հելսինկյան ասոցիացիայի՝ http://www.youtube.com/watch?v=jiCt-6mpUWo

ՀԱԿ կողմից հրավիրված հանրահավաքին՝ Երևան քաղաքի Ազատության հրապարակում: Համաձայն Ա. Բարսեղյանի՝ տեսնելով, որ վերջինս ընդվզում է, իրեն բերման են ենթարկել ոստիկանության բաժին: Նա 7-8 ժամ գտնվել է ոստիկանությունում, սակայն որևէ գործողություն այդ ընթացքում չի իրականացվել:

Ապրիլի 28-ին՝ առավոտյան, ՀՀՇ Արտաշատի տարածքային կառույցի ղեկավար, ՀԱԿ անդամ Վիկտոր Գասպարյանի տուն են այցելել ոստիկանության աշխատակիցները և հրավիրել զրույցի ոստիկանության բաժանմունք: Երբ Վ. Գասպարյանը պահանջել է ներկայացնել ծանուցագիր, ոստիկանները պատասխանել են, թե ծանուցագրի խնդիր չկա, կարող են տրամադրել այն, պարզապես զրույցը տևելու է հինգ րոպե, և տարել են ոստիկանություն: Նույն օրը՝ ժամը. 18:00-ին, Երևանի Ազատության հրապարակում նախատեսված է եղել ՀԱԿ-ի հանրահավաքը:[30]

Մայիսի 31-ին, մարզերից Երևան եկող հասարակական տրանսպորտը նորմալ չի գործել: Միկրոավտոբուսները, ավտոբուսները և տաքսիները չեն մեկնել Երևան: Ըստ տեղեկությունների՝ տրանսպորտի այս դեֆիցիտը մեկնաբանվել է տեխնիկական զննություն անցնելու հանգամանքով: Մայիսի 31-ին՝ ժամը 19:00-ին, Երևանում՝ Ազատության հրապարակում, նախատեսված է եղել ընդդիմադիր ուժ ՀԱԿ-ի կողմից կազմակերպված հանրահավաք:[31]

Հունիսի 2-ին ՀՀ Կառավարության շենքի դիմաց կազմակերպված ակցիայի ժամանակ ձերբակալվել է ՀԱԿ ակտիվիստ Վարդգես Գասպարին: Ակցիայի ընթացքում ոստիկանները հրել և քաշքշել են Գասպարիին: Այնուհետև ոստիկանները մոտեցել են Գասպարիին և հրավիրել ոստիկանական բաժանմունք: Վերջինիս այն հարցին թե արդյոք իրեն բերման են ենթարկում, ոստիկանները հրաժարվել են պատասխանել և

[30] Տեղեկատվությունը տրամադրել է ՀՀՇ վարչության անդամ Հարություն Հովհաննիսյանը:
[31] http://tert.am

ուժի գործադրմամբ տեղափոխել նրան ոստիկանական բաժանմունք: Մոտ մեկ ժամ պահելուց հետո նրան ազատ են արձակել:[32]

Հունիսի 25-ին, ժամը 21:00-ի սահմաններում, Պուշկին - Մաշտոց պողոտայի խաչմերուկից Երևան ք. ոստիկանության Կենտրոնի բաժին են բերման ենթարկվել ՀԱԿ ակտիվիստներ Վահագն Գևորգյանը, Սարգիս Գևորգյանը, Դավիթ Քիրամիջյանը և Սարգիս Խաչատրյանը: Նրանք ՀԱԿ-ի՝ հունիսի 30-ի հանրահավաքից առաջ բաժանելիս են եղել ՀԱԿ-ի թերթերը: Համաձայն բերման ենթարկված ակտիվիստ Սարգիս Գևորգյանի՝ ոստիկանապետի աշխատասենյակում տեղի է ունեցել վիճաբանություն, ապա իրենց ասել են, որ ազատ են, սակայն խնդրում են այլևս չգոռալ "Սերժիկ (ՀՀ Նախագահ), հեռացի՛ր": Ակտիվիստներին ոստիկանության բաժնից բաց են թողել ժամը 21:30-ի սահմաններում:

Հունիսի 30-ին՝ վաղ առավոտյանից, Աշտարակ քաղաքից Երևան շարժվող երթուղային փոխադրամիջոցները չեն գործել: Ուղևորների խոսքերի համաձայն՝ այն օրերին, երբ Երևանում պետք է տեղի ունենա հանրահավաք, հասարակական տրանսպորտը չի գործում: Հունիսի 30-ին, ժամը 20:00-ին Երևանում՝ Ազատության հրապարակում, նախատեսված էր ընդդիմադիր ուժ ՀԱԿ-ի հանրահավաքը:[33]

Հունիս 30-ին, Գյումրիից դեպի Երեւան շարժվող միկրոավտոբուսները ժամը 11-ից չեն գործել: Ուղեւորները վաղ առավոտից սպասել են, սակայն միկրոավտոբուսներ Ավտոկայանի տարածքում չեն եղել: Ուղևորների խոսքերով վաղ առավոտյան ընդամենը երկու միկրոավտոբուս է շարժվել Երեւան, իրենք ժամերով սպասում են: Գյումրու ավտոկայանից երթուղային տաքսիները նույնպես չեն ուղևորվել Երեւան: Ուղեւորների մի մասը ստիպված է եղել անհատական տաքսիներով մեկնել Երեւան՝

[32] Տեղեկատվությունը տրամադրել է Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդ Արման Վեզիրյանը:
[33] Տեսանյութը Հելսինկյան ասոցիացիայի՝ http://www.hahr.am/index.php/en/human-rights/peaceful-assembly/348-june-30

տոմսի արժեքը մեկ անձի համար միչեւ 5 հազար դրամ արժողությամբ: Ուղեւորները նշել են, որ այս իրավիճակի պատճառը Երեւանում նախատեսված ՀԱԿ-ի հանրահավաքն է:[34]

ՀԱԿ-ի՝ հունիսի 30-ին կայանալիք հանրահավաքին ընդառաջ հունիսի 22-ին՝ երեկոյան, ՀԱԿ-ի հինգ ակտիվիստների գործողություններին հետևել է Հատուկ քննչական ծառայության քննիչը և մոտ 20 ոստիկաններ, երբ նրանք երեկոյան իրազեկման թռուցիկներ էին փակցնում Երևանի փողոցներում: Epress.am լրատվական կայքի հետ զրույցում ՀԱԿ ներկայացուցիչ Արեգ Գևորգյանը՝ հայտնել է, որ իրենք հինգ հոգով դուրս են եկել քաղաքապետարանի կողմից ի գիտություն ընդունված հանարահավաքի մասին իրազեկման թռուցիկներ փակցնելու նպատակով: Մի քանի մետր չէին հեռացել Կոնգրեսի կենտրոնական գրասենյակից, երբ Տերյան-Կորյուն խաչմերուկին կանգնել է "Մերսեդես" S 600 մակնիշի, 777 LS 03 համարանիշներով մեքենա, և մի քաղաքացիական հագուստով անձ մոտեցել է իրենց: Նա գոռգոռալով, սպառնալով պահանջել է պոկել փակցված թռուցիկները: Նրանք հրաժարվել են: Քաղաքացին երկար ժամանակ չի ներկայացել, սակայն հետո ասել է, որ ինքը Հատուկ քննչական ծառայության քննիչ է, և անմիջապես կապվել ոմն Մեհրաբյանի հետ ու զեկուցել: Քիչ հետո իրենց են մոտեցել մոտ 4-5 ոստիկանական մեքենաներ և պահանջել են պոկել թռուցիկները: Երիտասարդները պահանջել են հրում անել որևէ օրենքի, որը իրենց արգելում է թռուցիկ փակցնել, կամ էլ բերման ենթարկեն, ինչը ոչ մի արձագանքի չի արժանացել: Իրենք, այնուամենայնիվ, շարունակել են փակցնել իրազեկման թերթիկները, և այդ ողջ ընթացքում նրանց հսկել են ոստիկանական մեքենաները: Առավոտյան փակցված թռուցիկների մեծ մասն արդեն պոկված է եղել:[35]

[34] www.lragir.am
[35] www.epress.am

Սեպտեմբեր 9-ին, մարզերից դեպի Երեւան տանող բոլոր ճանապարհները վերահսկվել են, միջքաղաքային տրանսպորտը, ինչպես նաեւ մասնավոր տաքսի ծառայությունները չեն աշխատել: Վաղ առավոտվանից արդեն փակ են եղել Տավուշ մարզից, Արմավիրից, էջմիածնից Երեւան տանող ճանապարհները: Գավառի մայրուղու վրա ձեւավորվել է ՃՈ պահակակետ, որտեղ կանգնեցրել են հասարակական տրանսպորտով եւ տաքսիներով մայրաքաղաք եկող քաղաքացիներին եւ նրանց ետ դարձրել: ՀՀ առաջին նախագահ, ընդդիմադիր ուժ Հայ ազգային կոնգրեսի առաջնորդ/ՀԱԿ/ Լեւոն Տեր-Պետրոսյանի մամուլի խոսնակ Արման Մուսինյանը լրատվական կայքի հետ հեռախոսազրույցում ասել է, որ այս ամենը հետապնդում է մեկ նպատակ՝ թույլ չտալ ազգաբնակչությանը մասնակցել սեպտեմբերի 9-ին Երեւանի Ազատության հրապարակում ժամը 19-ին կայանալիք ՀԱԿ հանրահավաքին: Մարզերի բնակիչների՝ հանրահավաքին մասնակցելու մտադրությունը իշխանությունները փորձել են կանխել դեռ նախօրեին: Ոստիկանության աշխատակիցները այցելել են ՀԱԿ մարզային կառույցների ղեկավարներին եւ ակտիվիստներին ու հորդորել չմասնակցել սեպտեմբերի 9-ին կայանալիք ՀԱԿ հանրահավաքին: Շատերին հրավիրել են ոստիկանություն եւ "բացատրական աշխատանք" տարել: Ճամբարակում նույն օրը՝առավոտյանից սկսած, ոստիկանները չեն թողել շարժվել դեպի Երեւան եկող գազելները, որոնք լիքն են եղել ուղեւորներով, ովքեր մեկնում էին մայրաքաղաք իրենց անձնական գործերով, այլ ոչ թե մասնակցելու հանրահավաքին:[36]

Սեպտեմբերի 21-ին՝ ժամը 09:00-ին, Երևանի կենտրոնում՝ Սարյանի պուրակում, ակտիվիստների մի խումբ բողոքի ակցիա էր անցկացնում ՀՀ Անկախության 20-ամյակին նվիրված զորահանդեսին օտար զորախմբերի և դրոշների մասնակցության դեմ: Սակայն ոստիկանները խոչընդոտել են ակցիայի անցկացումը: Նրանք խլել են ակցիայի մասնակիցների պարզած պաստառները: Ոստիկաններին մոտեցել է ակցիայի կազմակերպիչներից Գյումրիի "Ասպարեզ" ժուռնալիստների ակումբի

[36] http://www.a1plus.am

խորհրդի նախագահ Լևոն Բարսեղյանը: Կարճ զրույցից հետո ակցիայի մասնակիցները, այնուամենայնիվ, պարզել են եռագույն դրոշները և, վանկարկելով "Ազատ, անկախ Հայաստան", առաջ շարժվել: Ոստիկանները անմիջապես մոտեցել են ակտիվիստներին և նրանցից երկուսին նստեցրել ոստիկանական մեքենաներ և հեռացել Սարյանի պուրակից դեպի Կենտրոնի ոստիկանություն: Բերման ենթարկված ակտիվիստներն էին Լևոն Բարսեղյանը և Facebook սոցիալական ցանցում քայլերթի մասին էջ ստեղծած Arno Kur /Սաշիկ Ղալեչյան/ օգտատերը:

Հոկտեմբերի 1-ին, Երևանի Ազատության հրապարակում սկսվել էր ՀՀ քաղաքացիների անժամկետ նստացույցը: Հոկտեմբերի 1-ից 2-ը, Ազատության հրապարակի տարածքում գործող սրճարանների դռները փակ էին հաճախորդների համար: Սրճարաններից և այնտեղ գտնվող սանհանգույցներից կարողանում էին օգտվել միայն ոստիկանության աշխատակիցները:
Լայն հասարակության համար փակ էին նաև հանրային զուգարանները, որոնցից կրկին կարողանում էին օգտվել միայն ոստիկանության ներկայացուցիչները: Սա կարելի է դիտարկել որպես մի քայլ՝ ուղղված Ազատության հրապարակում նստացույցի դուրս եկած ՀՀ քաղաքացիների առօրյան դժվարացնելուն:

Հոկտեմբերի 20-ին ՀՀ Կառավարության շենքի դիմաց "Բանակն իրականում" նախաձեռնող խմբի կողմից կազմակերպված զոհված զինվորների հարազատների բողոքի ակցիայի ժամանակ ոստիկանները քաշքշել են մասնակիցներին, որի հետևանքով Երևանի Կենտրոնի ոստիկանության բաժանմունք բերման է ենթարկվել ակցիայի մասնակից Վարդգես Գասպարին: Ակցիայի մասնակից Աստղիկ Աղեկյանը ծեծի է ենթարկվել ոստիկանության աշխատակիցների կողմից, իսկ անձամբ ոստիկանության պետ Ալիկ Սարգսյանը հրել է խմբի անդամ Լալա Ասլիկյանին: Այնուհետև, բողոքի ակցիան երթով շարժվել է ՀՀ Նախագահի նստավայր, որտեղ նորից տեղի են ունեցել բախումներ՝ հրահրված ոստիկանների կողմից:

Ժամը 16:30-ին հայտնի է դարձել, որ բերման ենթարկված Վարդգես Գասպարիին Երևանի Կենտրոնի ոստիկանության բաժնից տեղափոխել են Կենտրոնի ոստիկանության քննչական բաժանմունք: Գասպարիին մեղադրանք է առաջադրվել ՀՀ Քր.օր. 258 հոդվածի 1-ին /խուլիգանություն/ և 316 հոդ. 1-ին /Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը/ մասերով:

Հոկտեմբերի 27-ին, Կառավարության շենքի դիմաց հերթական ակցիան են իրականացրել «Բանակն իրականում» նախաձեռնության անդամները՝ պահանջելով բացահայտել վերջին շրջանում բանակում տեղի ունեցած միջադեպերը: Ոստիկանության աշխատակիցներն ակցիայի ժամանակ բերման են ենթարկել «Բանակն իրականում» նախաձեռնության անդամ Լալա Ասլիկյանին, ապա՝ որոշ ժամանակ պահելուց հետո, բաց են թողել: [37]

Նոյեմբերի 25-ին՝ ՀԱԿ-ի հանրահավաքին ընդառաջ՝ երթուղիներից հանվել է Կոտայքի մարզի բնակավայրերից՝ Գառնիից, Հրազդանից, Չարենցավանից, Աբովյանից, Նոր Հաճնից, Եղվարդից դեպի Երևան եկող տրանսպորտը: Աբովյան ք. ավտոկայանում Epress.am-ի թղթակցին քաղաքացիները հայտնել են, որ տրանսպորտը դեպի Երևան չի աշխատելու, քանի որ հանրահավաք է նախատեսված:

Գառնիից դեպի Երևան ուղևորվող քաղաքացիներից մեկը Epress.am-ին տեղեկացրել է, որ ճանապարհային ոստիկանները կանգնեցրել են երկու միկրոավտոբուս և վարորդներին շատ կոպիտ ձևով արգելել են ուղևորվել Երևան: Իսկ գազելի վարորդին, ով ընդդիմացել է, ոստիկանները, ականատեսների պնդմամբ, ծեծի են ենթարկել: Ականատեսներից մեկի խոսքով՝ ոստիկանները վարորդի վրա բղավել են. «Չգիտե՞ս, որ քաղաք չպտի գնաս, մենք ձեր գյուղապետին զգուշացրել ենք».[38]

---

[37] Տեսանյութը Հելսինկյան ասոցիացիայի՝ http://www.youtube.com/watch?feature=player_embedded&v=SupWS1xu5JE#start=0:00;end=10:02;autoreplay=false;showoptions=false

[38] http://www.epress.am/

Նոյեմբերի 25-ին՝առավոտյանից՝ երթուղիներից հանվել են նաև Սևանից և Էջմիածնից դեպի Երևան եկող գազելները: Համաձայն ՀԱԿ կենտրոնական գրասենյակի՝ Էջմիածնում Ոստիկանության քրեական հետախուզության աշխատակիցներն ահաբեկում են նաև տաքսիստներին՝ պահանջելով, որ դեպի Երևան ուղևոր չտեղափոխեն: Համաձայն ՀԱԿ Գյումրիի գրասենյակի՝ Գյումրիում ևս դեպի Երևան եկող գազելները հանվել են երթուղիներից: ՀԱԿ-ի Գյումրիի գրասենյակից զանգահարել են ավտոկայան տրանսպորտի չաշխատելու պատճառները ճշտելու համար, որտեղ տվել են հետևյալ պատասխանը՝ ճանապարհները անցանելի չեն, այդ պատճառով էլ տրանսպորտը չի աշխատում: Մինչդեռ ըստ Արտակարգ իրավիճակների նախարարության կայքի՝ նոյեմբերի 25-ի ժամը 09.00-ի դրությամբ դժվարանցանելի են եղել միայն Տավուշի մարզի Բերդ – Ճամբարակ, Դիլիջան – Երևան, Բերդ-Իջևան, Դիլիջան-Վանաձոր, Կիրանց – Ոսկեպար ավտոճանապարհները, ինչպես նաև Սյունիքի մարզի Սիսիան – Գորիս և Մեղրի – Կապան ավտոճանապարհները: Հայաստանի մյուս ճանապարհներն անցանելի են եղել:[39]

Այսպիսով, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2011թ.շարունակվել է ոտնահարվել քաղաքացիների՝ ՀՀ-ում խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունքը՝ ամրագրված ՀՀ Սահմանադրությամբ, կարգավորվող 2011թ. ապրիլի 14-ին ընդունված «Հավաքների ազատության մասին», “Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին”, “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքներով, ինչպես նաև “Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” կոնվենցիայով, և “Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին” միջազգային դաշնագրով:

[39] http://www.epress.am/

ԽՈՇՏԱՆԳՈՒՄ ԵՎ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ՆՎԱՍՏԱՑՈՒՑԻՉ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է ՄԱԿ-ի “Կոնվեցիան Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ”, “Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխման” Եվրոպական Կոնվենցիան: ՄԱԿ-ի “Խոշտանգումների և այլ դաժան անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ” կոնվենցիայի 19-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ մասնակից պետությունները՝ համապատասխան մասնակից պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվանից անցած մեկ տարվա ընթացքում, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի միջոցով Կոմիտե են ներկայացնում զեկույցներ սույն Կոնվենցիայի համաձայն իրենց պարտավորությունների կատարման բնագավառում ձեռնարկած միջոցառումների մասին: Հետագայում մասնակից պետությունները բոլոր նոր միջոցառումների մասին չորս տարին մեկ անգամ ներկայացնում են լրացուցիչ զեկույցներ, ինչպես նաև այլ զեկույցներ, որոնք կարող է պահանջել Կոմիտեն: Չնայած իր պարտավորությունների ՀՀ 2000 թվականից մինչ այս օրը ոչ մի զեկույց չի ներկայացրել: Մյուս լսումները զեկույցների վերաբերյալ անցկացվելու են 2012թ. մայիս-հունիս ամիսներին:

“Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման” եվրոպական կոմիտեն /CPT/ 2011թ. օգոստոսի 17-ին հրապարակել է մայիսի 10-ից 21-ը Հայաստան կատարած պարբերական այցելության վերաբերյալ զեկույցը:

“2010թ. այցելության ընթացքում հանձնաժողովը լսել է բավական մեծ թվով արժանահավատ և հետևողական հայտարարություններ վերջերս ձերբակալված անձանց նկատմամբ ոստիկանության օպերատիվ աշխատակիցների, երբեմն բարձրաստիճան աշխատակիցների կողմից ֆիզիկական վատ վերաբերմունքի մասին, հատկապես նախնական հարցաքննության (ձերբակալման արձանագրությունը կազմելուց առաջ անցկացվող հարցաքննության) ժամանակ: Նշված վատ վերաբերմունքը ներառում է ապտակներ, ոտքով հարվածներ, մահակներով, ջրով լի

շշերով կամ փայտերով հարվածներ խոստովանություն կամ այլ տեղեկատվություն ստանալն ապահովելու նպատակով: Որոշ դեպքերում, վատ վերաբերմունքի այնպիսի դաժանություն է նշվել, որ այն կարելի է համարել խոշտանգում (ոտքից գլուխ ծեծի ենթարկելու, էլեկտրաշոկի կիրառում, հարվածներ ներբաններին): Ավելին, բազմաթիվ անձինք, այդ թվում ոստիկանությունում որպես վկա հարցաքննվածները հայտարարել են, որ ենթարկվել են ճնշում գործադրելու միջոցով հարցաքննման մեթոդների (երկարատև հարցաքննություն մինչև ութ քննիչների կողմից, ֆիզիկական վատ վերաբերմունքի կամ հաշվեհարդարի սպառնալիքներ, սպառնալիքներ, որ այդ ամենը վատ հետևանք կունենա նրանց ընտանիքի անդամների համար), որոնց նպատակն է եղել ստիպել իրենց հայտարարություններ անել կամ դառնալ ոստիկանության ինֆորմատորներ", նշված է զեկույցի 12 մասում: Որպես այս վերաբերմունքի վառ օրինակ, զեկույցն անդրադարձել է 2010թ. Ապրիլի 13-ին ոստիկանության բաժանմունքում մահացած Վահան Խալաֆյանի դեպքին: Զեկույցում նշված է, "*Այցելության ժամանակ, նախաքննության ընթացքում հավաքված նյութերից պարզ էր դարձել, որ Խալաֆյանին Չարենցավանի ոստիկանության բաժանմունքում մոտ յոթ ժամ պահել են առանց ձերբակալման արձանագրություն կազմելու, եւ որ նա ենթարկվել է դաժան ծեծի չորս ոստիկանի կողմից անցկացված հարցաքննության ընթացքում, որոնց թվում է եղել Քրեական հետախուզության բաժնի պետը:*

"Հաշվի առնելով այս պնդումները՝ Եվրախորհրդի կոմիտեն կոչ է անում Հայաստանի իշխանություններին հստակ ուղերձ հղել ոստիկանության բոլոր աշխատակիցներին և զգուշացնել, որ այսօրինակ վարքագծի համար նրանք կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել", ասված է զեկույցում:

2011թ. օգոստոսի 17-ին հրապարակել է նաև զեկույցի վերաբերյալ ՀՀ ոստիկանություն պատասխանը:

Պատասխան զեկույցի մեջ ասվում է "ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ կոպիտ, անհարգալից վերաբերմունք դրսեւորելու, առավել ևս՝ խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը

նվաստացնող վերաբերմունքի ցանկացած դեպք ՀՀ ոստիկանությունում դառնում է լայն քննարկման առարկա, մեղավոր անձինք ենթարկվում են խիստ կարգապահական պատասխանատվության: Այսպես, 2010 թվականի ընթացքում ստացվել է ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ կոպիտ, անհարգալից եւ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի վերաբերյալ 81 բողոք/2009թ.՝ 245/, որոնց քննությամբ հիմնավորվել են 19-ը /2009թ.՝ 37/: Կատարված ծառայողական քննությունների արդյունքում ոստիկանության 23 ծառայող ենթարկվել է կարգապահական պատասխանատվության/2009թ.՝ 51/, 4 ծառայող՝ քրեական պատասխանատվության /2009թ.՝ 2/: Ի դեպ, քրեական պատասխանատվության կանչված 1 ոստիկանության ծառայող դատապարտվել է ազատազրկման, 1 ծառայող՝ կալանքի, իսկ 2 ծառայողի նկատմամբ վճռվել է նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել եւ սահմանել փորձաշրջան”:

ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնում Վահան Խալաֆյանի մահվան փաստով ոստիկանության 6 ծառայողներ /այդ թվում նաև ոստիկանապետը/ ենթարկվել են խիստ կարգապահական պատասխանատվության, որոնցից 4-ը՝ նաև քրեական պատասխանատվության: Ընդհանուր իրավասության դատարանի կողմից ոստիկանության նախկին 2 ծառայողի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ, որը բողոքարկվել է ՀՀ Վերաքննիչ դատարանում: Վերաքննիչ դատարանը համաներում է կիրառել նախկինում մեղադրական դատավճիռ կայացրած 2 ծառայողների նկատմամբ: Վճռաբեկ դատարանը չի ընդունել վարույթը կամայականորեն պատճառաբանելով իր որոշումը: Ներկայիս պահին սկզբնական նամակ է ուղարկվել Եվրոպական դատարան: Բողոքները ներկայացրել է Վ. Խալաֆյանի իրավահաջորդի ներկայացուցչ, Հելսինկյան Ասոցիացիայի փորձագետ Արտակ Զեյնալյանը:

“Ձերբակալված անձանց իրավունքները՝ իրենց իրավիճակի մասին մերձավոր ազգականին կամ այլ անձանց հայտնելու, պաշտպան և բժիշկ ունենալու” իրավունքը ամրագրված է «Ձերբակալված եւ կալանավորված անձնաց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածում:

2011 թվականի փետրվարի 18-ին Դիլիջան քաղաքի բնակիչ Վահե Սանթրոսյանին ոստիկանության բաժանմունք են հրավիրել՝ մեկնաբանելով, որ վիճաբանություն է տեղի ունեցել և անհրաժեշտ են պարզաբանումներ: Բաժանմունքում անջատել են Սանթրոսյանի հեռախոսը և չեն թույլատրել, որպեսզի նա կապվի փաստաբանի և ընտանիքի անդամների հետ: Հաջորդ օրը՝ առավոտյան, նրա մորը՝ Հրանուշ Կոխլիկյանին, զանգահարել են ոստիկանության աշխատակիցներն ու ասել, որ իր տղայի համար հագուստներ բերի բաժանմունք: Վահե Սանթրոսյանը մեղադրվում է գողության մեջ: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվում կալանքը:

2011թ. հուլիսի 13-ին, ժամը 20:00-20:30-ի սահմաններում Երևանի Բագրատունյաց 26 շենքի բակից Շենգավիթ համայնքի ոստիկանության բաժանմունք բերման է ենթարկվել 1996թ. ծնված, 15-ամյա Յուրա Սիմոնյանը: Ըստ փաստաբան Նարինե Սարգսյանի՝ Սիմոնյանը բերման է ենթարկվել որպես վկա՝ բակում տեղի ունեցած վեճի պատճառով, որի ընթացքում կրակոցներ են եղել: Հաջորդ օրը՝ հուլիսի 14-ին, ժամը 16:00-ից սկսած փաստաբան Ն. Սարգսյանը 4 անգամ փորձել է տեսակցել իր պաշտպանյալի հետ, սակայն դա նրան չի հաջողվել: Ոստիկանության քննիչ Կամո Շառոյանը փաստաբանին անընդհատ հավաստիացրել է, որ Յ. Սիմոնյանը 10 րոպեից կիջնի, սակայն անչափահասն այդպես էլ չի իջել: Հելսինկյան ասոցիացիան, փորձել է հաղորդագրություն ներկայացնել Շենգավիթ համայնքի ոստիկանության բաժանմունք՝ Սիմոնյանի՝ ոստիկանության բաժանմունքում անհետանալու վերաբերյալ, սակայն հաղորդագրությունը չի ընդունվել, և անչափահասին բաց են թողել բերման ենթարկելուց մեկ օր անց՝ հուլիսի 14-ին, ժամը 23:05-ին: Ն.Սարգսյանի

տեղեկություններով, Սիմոնյանին ծեծել են ոստիկանության բաժանմունքում և փորձել ստիպել, որ ասի, թե տեսել է բակում տեղի ունեցած վեճի ժամանակ կրակողին:

«Ձերբակալված եւ կալանավորված անձնաց պահելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ կետի համաձայն "ձերբակալված անձը իրավունք ունի առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննվել իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին": Ինչ վերաբերում է ձերբակալվածին դատաբժշկի կողմից զննվելուն, ապա նույն օրենքի 15 հոդվածի համաձայն "ձերբակալված կամ կալանավորված անձը, իսկ ձերբակալված կամ կալանավորված անձի համաձայնության դեպքում նաև նրա պաշտպանը իրավունք ունեն պահանջելու անցկացնել դատաբժշկական հետազոտություն":

2011թ. ընթացքում իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից կատարվել են ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածով նախատեսված քրեորեն պատժելի "դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից ցուցմունք տալուն հարկադրելը" արարքներ: Հոդվածը նախատեսում է պատիժ նաև այն դեպքում, եթե նույն արարքը զուգորդվել է այդ հոդվածի առաջին մասով նախատեսված անձանց նկատմամբ ծաղրուծանակով, խոշտանգմամբ կամ այլ բռնությամբ:

Ստեփան Հովակիմյանը մեղադրվում է իր ընկերոջ՝ Վահրամ Քերոբյանի հետ միասին «Մոսկվա» կինոթատրոնում 2010թ. հունվարի 10-ին կատարված գողությունը կազմակերպելու ու իրականացնելու մեջ: Գողությունը «Մոսկվա» կինոթատրոնում կատարվել է 2010 թվականի հունվարի 10-ին, իսկ քրեական գործը հարուցվել է փետրվարի 6-ին: Այս ընթացքում Ս. Հովակիմյանը երկու անգամ առանց պատշաճ ծանուցման տարվել է ոստիկանության Կենտրոնի բաժին, իսկ բերման ենթարկելու

մասին որևէ արձանագրություն չի կազմվել: Երրորդ անգամ՝ արդեն փետրվարի 6-ին զրուցելու պատրվակով Ս. Հովակիմյանը կանչվել է քաղաքային վարչություն: 9 ժամ շարունակ նա ենթարկվել է ֆիզիկական և հոգեբանական խոշտանգումների, չի ապահովվել փաստաբանի ներկայություն, չեն ներկայացվել նրա՝ որպես կասկածյալի իրավունքները: Ոչ մարդկային մեթոդներով կորզված ինքնախոստովանական ցուցմունքը միակ ապացույցն է, որ այսօր դրված է քր. գործի հիմքում:

Արմեն Մարտիրոսյանը մեղադրվում է Կարեն Կարապետյանի և Պետրոս Հակոբյանի հետ 2009թ կատարած մի շարք ավազակային հարձակումների մեջ: Ա. Մարտիրոսյանին ձերբակալել են 2010 հունվարի 19ին: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ավազակություններ կատարելու դիտավորությամբ 2009թ. նոյեմբերին իր հորաքրոջ որդի, Երևան քաղաքի բնակիչ Կարեն Կարապետյանի առաջարկով ներգրավվել է կազմակերպված կայուն խմբի կազմում: Ա. Մարտիրոսյանի մայրը՝ Օֆելյա Մարտիրոսյանը, դիմել է Հելսինկյան ասոցիացիա և հայտնել է իր որդու նկատմամբ կատարված խոշտանգումների մասին: Նա հայտնել է, որ իր որդու ցուցմունքները կորզվել են խոշտանգումների միջոցով: Մոր խոսքերով՝ ոստիկանները գիշերը ժամը մեկից հետո, քաղաքացիական հագուստով, մոտ 10-15 հոգով առանց ներկայանալու և դուռը կոտրելով մտել են իրենց տուն և սկսել խուզարկել բնակարանը: Ա. Մարտիրոսյանին ձերբակալել են այն ժամանակ երբ նա գտնվում էր Գյումրիում և, համաձայն մոր խոսքերի, ամբողջ ճանապարհը՝ Գյումրիից Երևանի Արաբկիր համայնքի ոստիկանական բաժանմունք, նրան ենթարկել են ծեծի և խոշտանգումների: Դրանից 2-3 օր հետո Ա. Մարտիրոսյանին (այդ ժամանակ անչափահաս) տեղափոխել են մանկական գաղութ, որտեղ և մայրը տեսել է իր որդու մարմնի վրա առկա կապտուկները: Մայրը հայտնեց, որ որդու երիկամները մոտ երկու ամիս արունահոսում էին: Ա. Մարտիրոսյանը հայտնել է, որ խոշտանգումների ժամանակ նա շատ է վատացել և նրան տարել են պատուհանի մոտ ու ասել, որ իրեն պատուհանից դուրս կնետեն: Խոշտանգումներից փրկվելու համար Արմեն

Մարտիրոսյանը գաղութում ինքնասպանության փորձ է կատարել՝ կտրելով երակները: Օֆելյա Մարտիրոսյանը հայտնել է նաև, որ ոստիկանական բաժանմունքում տեսել է Կարեն Կարապետյանին և որ նա հազիվ էր կարողանում շարժվել և հայտնել է որ իրեն ծեծել են: Տեղեկություններ կան նաև Պետրոս Հակոբյանի և իր հոր նկատմամբ կատարած խոշտանգումների մասին, սակայն նրանք վախենալով հատագա հետապնդումներից կոնկրետ տեղեկություններ չեն հայտնում:

Վահե Սանթրոսյանի գողության գործով մեղքն ապացուցող միակ ցուցմունքը մեկ այլ մեղադրյալի՝ Գուրգեն Ավետիսյանի՝ Սանթրոսյանին հանցակից ճանաչող ցուցմունքն է: Գուրգեն Ավետիսյանը, սակայն, հետագայում ցանկացել է իր ցուցմունքները փոխել, պնդելով, որ Վահեին չի ճանաչել և ոստիկանության կողմից կիրառված բռնության արդյունքում է նրան մատնացույց արել՝ որպես հանցակից: Վ. Սանթրոսյանը նախկինում երկու անգամ դատված է եղել: Առաջին անգամ հեծանիվ է գողացել, քշել և այնուհետև վերադարձրել, ինչի համար անչափահաս տարիքում դատվել է երկու տարի ժամկետով, իսկ երկրորդ անգամ, երկու բլոկ ծխախոտ և 13.000 հայկական դրամ գողանալու համար դատապարտվել է չորս տարի ազատազրկման: Վանաձոր քրեակատարողական հիմնարկից դուրս գալուց հետո Վահե Սանթրոսյանը պարբերաբար ենթարկվել է ոստիկանության ճնշումներին, գտնվել է ոստիկանության աշխատակիցների ուշադրության կենտրոնում՝ որպես Դիլիջան քաղաքում տեղի ունեցող գողություններում կասկածյալ: Երբ 2010 թվականին Սանթրոսյանը հերթական գողության կասկածանքով բերման է ենթարկվել ոստիկանության բաժին, նրան ծեծի են ենթարկել՝ փորձելով ստիպել, որպեսզի խոստովանի իր մեղքը: Չդիմանալով ճնշումներին և վստահ լինելով իր ճշմարտացիության վրա՝ Վահեն քննիչի սենյակում ածելիով կտրել է իր վիզը: Նրան տեղափոխել են հիվանդանոց, որտեղ բժիշկներին հաջողվել է փրկել նրա կյանքը: Հետագայում ոստիկանությունը բացահայտել է իրական մեղավորին:

ՀՀ Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող՝ Խդր Բրոյանի վերաբերյալ ՀՀ քր. օր. 266 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 266 հոդվածի 4-րդ մասով, 268 հոդվածի 3-րդ մասով, 268 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 165 հոդվածի 4-րդ մասով Սամվել և Մանվել Մարտիկի Ասատրյանների վերաբերյալ ՀՀ քր. օր. 266 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 266 հոդվածի 4-րդ մասով և 268 հոդվածի 3-րդ մասով, քրեական գործի դատական քննության ընթացքում ամբաստանյալներ՝ Խդր Բրոյանը, Մանվել և Սամվել Ասատրյանները ցուցմունքներ են տվել, որ քրեական գործի նախաքննության ընթացքում իրենց նկատմամբ խորթ մեթոդներ են կիրառվել, ենթարկվել են խոշտանգումների, ծեծի և բռնության: Սպառնալիքի ազդեցության տակ տվել են իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ:

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածն ամրագրում է, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և դատապարտված անձիք մարդկային վերաբերմունքի և հարգանքի իրավունք ունեն: 2003 թվականին ապրիլին ընդունված քրեական օրենսգրքում առկա է 119-րդ հոդվածը, որը պատիժ է սահմանում խոշտանգման գործողությունների համար: Այնուամենայնիվ, հոդվածի բովանդակությունը թերի է, իսկ նախատեսված պատիժը մեղմ է և դրանք չեն համապատասխանում միջազգայնորեն ընդունված “խոշտանգում” իմաստին:

Մի շարք ավազակային հարձակումների մեջ մեղադրվող Արմեն Մարտիրոսյանը, ևս երկու անգամ ինքնասպանության փորձ է կատարել դատարանի խիստ կողմնակալ վերաբերունքի պատճառով: Ինքնասպանության փորձերից մեկը Ար. Մարտիրոսյանը կատարեց դատարանում, երբ հերթական անգամ դատավորի և դատախազի անօրինական գործողություններից հետո մեղադրյալներին դուրս արեցին դատական նիստերի դահլիճից և դատը շարունակեցին առանց իրենց: Դատավորը սակայն

գաղտնի պահեց այդ փաստը և նույնիսկ ծնողներին չհայտնեցին պատահարի մասին: Դատարանը Կարեն Կարապետյանին դատապարտեց 12 տարվա, Արմեն Մարտիրոսյանին՝ 9 տարվա, Պետրոս Հակոբյանին՝ 11 տարվա ազատազրկման: [40]

2011թ. օգոստոսի 9-ին, ժամը 22.00-ի սահմաններում, Երևան ք. կենտրոնից բերման են ենթարկվել ընդդիմադիր ուժ Հայ ազգային կոնգրեսի ակտիվիստներ Տիգրան Առաքելյանը, Սահակ Մուրադյանը, Արեգ Գևորգյանը, Սարգիս Գևորգյանը, Դավիթ Քիրամիջյանը, Արտակ Կիրակոսյանը և Վահագն Գևորգյանը: Ժամը 22.00-ի սահմաններում, ՀԱԿ ակտիվիստ երիտասարդները մոտեցել են Երևան ք. ՊՊԾ գնդի աշխատակիցներին, երբ վերջիններս ստուգելիս են եղել մի քանի քաղաքացիների: Երիտասարդները պահանջել են նրանցից հիմնավորել իրենց գործողությունները: Ի պատասխան՝ ՊՊԾ գնդի աշխատակիցները հարձակվել են նրանց վրա, ծեծել վերջիններիս, այնուհետև՝ բերման ենթարկել Երևան ք. Կենտրոնի ոստիկանության բաժին: Տ. Առաքելյանը,Վ. Գևորգյանը և Դ. Քիրամիջյանը ծեծի հետևանքով ստացել են մարմնական վնասվածքներ: Արտակ Կիրակոսյանի նկատմամբ բռնության է կիրառվել Ոստիկանության բաժանմունքում: Փաստաբան Ստեփան Ոսկանյանը հայտնել է, որ երբ ՀԱԿ ակտիվիստները հրաժարվել են ցուցմունք տալ իր նկատմամբ կիրավել է բռնություն, ինչպես նաև իրեն և փաստաբան Վահե Հովսեփյանին խոչընդոտել են հանդիպել իրենց պաշտպանյալներին:

2006թ. մայիսի 31-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացված՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի Կամընտիր արձանագրության 17-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է այն վավերացնելուց կամ նրան միանալուց ոչ ուշ, քան մեկ տարի հետո ներպետական մակարդակով խոշտանգումների կանխարգելման նպատակով հաստատել, նշանակել կամ ստեղծել մեկ կամ մի քանի կանխարգելման ազգային մեխանիզմներ:

[40] Տես Արդար Դատավարության և Արդյունավետ Պաշտպանական Միջոցների Իրավունքը

2008թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված "Մարդու իրավունքների պաշտպանի մասին" ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին օրենքով սահմանվել է, որ Պաշտպանը հանդիսանում է կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմ/6.1հոդված/:

Համաձայն ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1 մասի՝ կիսափակ ուղղիչ հիմնարկի 1 խցում անձանց թիվը պետք է լինի մինչև վեցը: Իսկ նույն օրենսգրքի 73-րդ հոդվածը ուղղակի սահմանում է, որ յուրաքանչյուր դատապարտյալին հատկացված բնակելի տարածքը չի կարող պակաս լինել 4 քառակուսի մետրից: Մինչդեռ օրենքի այս դրույթը խախտվում է և խցերում պահվում են նախատեսվածից ավելի անձինք: Հելսինկյան ասոցացիան համարում է խոշտանգում, նվաստացուցիչ և անմարդկային վերաբերմունք ՀՀ քրեակատարողական հիմնարկներում, մասնավորապես՝ Նուբարաշեն ՔԿՀ-ում, կալանավորված և դատապարտված անձանց գտնվելը:[41]

Զինվորական մասերում վատ վերաբերմունքի կամ, անգամ՝ խոշտանգումների հետաքննությունների մասին զինվորական մասերի բժշկական անձնակազմը մարմնական վնասվածքներով զինծառայողներ հայտնաբերելու դեպքում պատշաճ կերպով չի արձագանքում դրանց, չի տեղեկացնում իրավապահ մարմիններին, որ այս կամ այն վնասվածքը կարող է վերագրվել խոշտանգմանը և վատ վերաբերմունքի դրսևորմանը:

Բանակում խոշտանգման և վատ վերաբերմունքի դեպքերի հետ կապված նախաքննության մարմինները օբյեկտիվ քննություն չեն իրականացնում, որի պատճառով մեղադրանք է առաջադրվում խոշտանգման հետ առընչություն չունեցող շարքային զինվորին, իսկ իրական հանցագործները մնում են անպատիժ: Զինծառայողի մարմնական վնասվածքները պատճառաբանվում են որպես

[41] Տես Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարության Քրեակատարողական Համակարգը 2011 Թվականին

պաշտոնատար անձի կողմից պաշտոնական լիազորությունները չարաշահելու կամ մարտական ծառայության կանոնագրքային կանոնները խախտելու հետևանք: Ոչ հազվադեպ զինծառայողի մահվան պատճառ է ներկայացվում ինքնասպանությունը, դժբախտ պատահարները, կամ հակառակորդի կողմից արձակված կրակոցը: Այս դեպքերում նախաքննության մարմինները կասեցնում են քրեական գործի վարույթը, թեև փորձաքննության եզրակացություններով դիակի վրա արձանագրված են լինում բռնության հետքերը: Նման գործերով հիմնականում նախաքննության և դատաքննության ժամկետները երկարատև են՝ խոշտանգման հետևանքով բանակում մահացած զինվորների գործով դատավարությունները սկսվել և շարունակվել են 2011թ. ընթացքում:

Օգոստոսի 24-ին, 2011թ. Հելսինկյան Ասոցիացիային է դիմել քաղաքացի Վարդան Վարդանյանը, ով հայտնել է, որ 2010թ.-ի մայիսի 21-ին իր որդուն՝ Հովհաննես Վարդանյանին, զորակչել են ծառայության ԼՂՀ թիվ N 34153 զորամաս: Ծառայության 14-րդ ամսվա ընթացքում՝ 2011 թ-ի հունիսի 16-ին, անհայտ զինվոր զանգահարել է Վ. Վարդանյանին և տեղեկացրել, որ նրա տղան խնդիրներ է ունեցել զորամասի սպաների հետ, տեղի է ունեցել ծեծկռտուկ, ինչից հետո Հովհաննեսը դիմել է փախուստի: Օրեր անց կրկին զանգ է ստացվել, և Վ. Վարդանյանը տեղեկացվել է, որ Հ. Վարդանյանը գտնվում է Երևանի Կանազի հոսպիտալի հոգեբուժական բաժնում: Նույն օրը երեկոյան հայրը այցելել է հոսպիտալ և այնտեղ տեսել իր տղային ծանր վիճակում, թիկունքի և ոտքերի շրջաններում մարմնական վնասվածքներով, որոնք, ըստ որդու, առաջացել են ծեծի հետևանքով:

2007թ.-ի օգոստոսի 30-ին Գեղարքունիքի մարզի գյուղ Կարճաղբյուրի զորամասում սպանվել է ժամկետային զինծառայող կրտսեր սերժանտ Տիգրան Օհանջանյանը: Դեպքի առթիվ 2007թ.-ի օգոստոսի 31-ին քրեական գործ է հարուցվել, և նախաքննություն է ձեռնարկվել: Դատաբժշկական փորձաքննությամբ չեն

արձանագրվել մարմնի վրա առկա բոլոր վնասվածքները: Նշված չէր, որ Օհանջանյանի ձախ ականջը վնասված էր, ուռած, կարմրած և տարբերվում էր աջից: Նշված չէր, որ մահացածի մատները ափի կողմից կապտած էին:

2005թ.-ի մարտի 15-ին ԼՂՀ Պաշտպանական Բանակի (ՊԲ) թիվ 46492 զորամասում սպանվել է զինծառայող Խաչատուր Մելիքյանը: Դեպքի կապակցությամբ քրեական գործ անմիջապես չի հարուցվել, քանի որ, ըստ նախնական պաշտոնական վարկածի, Խաչատուր Մելիքյանը զոհվել էր ադրբեջանցիների հետ սահմանակցող մարտական հենակետում վերջիններիս կողմից արձակված հրազենային կրակոցից: Ըստ գործով կատարված դիակի դատաբժշկական եզրակացության՝ Մելիքյանը մահացել է գլխի շրջանում ստացված հրազենային վնասվածքից, ինչի արդյունքում արյան մեծ կորուստ է ունեցել: Մինչդեռ, նախաքննության կողմից ճանաչված դեպքի վայրում արյան հետքեր չի հայտնաբերվել: Նույն դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հանգուցյալ Մելիքյանի մարմնի տարբեր մասերի վրա՝ ձեռքերի, ոտքերի, կրծքավանդակի և թիկունքի, հայտնաբերվել են քերծվածքներ, կապտուկներ և արնազեղումներ, որոնք առաջացել են մահվանից քիչ առաջ (0-10 րոպե):

2010թ.-ի մարտի 15-ին, ԼՂՀ ՊԲ թիվ 39138 զորամասի վերանորոգման վաշտի սպայական սենյակի ետևի մասում պարանի միջոցով ձողից կախված վիճակում հայտնաբերվել է սույն զորամասի զինծառայող Վալերիկ Մուրադյանի դիակը: Փաստի առթիվ հարուցվել է թիվ 90951310 քր. գործը ՀՀ քր. օր.-ի 110 հոդվածի 1-ին մասով՝ ինքնասպանության դրդում: Գործով կատարվել և կատարվում է միակողմանի և թերի նախաքննություն: Ինքնասպանության վարկածը հիմնավորելու համար քննիչը քր. գործով նշանակել է հետմահու դատահոգեբանական-դատահոգեբուժական փորձաքննություն: Ըստ դատաբժշկական պրակտիկայի, պարանոցի շրջանում երկրորդ վնասվածը հուշում է այն մասին, որ Մուրադյանին նախ խեղդել են, իսկ այնուհետև կախել:

2010թ.-ի հուլիսի 27-ին ՀՀ ՊՆ թիվ 21127 Զ/Մ-ի մարտական հենակետում լեյտենանտ Արտակ Նազարյանն իր հաստիքային "ԱԿ-74" տեսակի 1093977 համարի ինքնաձիգով բերանի խոռոչի շրջանում իրեն հրազենային վնասվածք է հասցրել և տեղում մահացել: Ըստ մեղադրական եզրկացության՝ Ա. Նազարյանին ինքնասպանության են հասցրել մարտական հենակետի երեք շարքային զինծառայողները, հենակետում հերթապահություն իրականացնող կապիտան Հ. Մանուկյանը և հարակից «Լույս» հենակետի ավագ, լեյտենանտ Վ. Հայրապետյանը, ովքեր դեպքից երեքից ութ օր առաջ հարավածել ու նվաստացրել են Նազարյանին: Նախաքննության ընթացքում երկու վկա զինծառայողներ՝ Արթուր Մկրտչյանը և Արտակ Հովհաննիսյանը հրաժարվել են իրենց նախկինում տված ցուցմունքներից՝ նշելով, որ դրանք իրենցից կորզվել են ծեծի և սպառնալիքների միջոցով: Նախաքննական մարմինը, որի անմիջական մասնակցությամբ տեղի են ունեցել այս բռնությունները, իր մոտ է հրավիրել նշված վկաներին, ինչից հետո նրանք կրկին հաստատել են իրենց նախնական ցուցմունքները: Դատաբժշկական փորձաքննությամբ Ա. Նազարյանի մարմնի տարբեր մասերում հայտնաբերվել է մի քանի տասնյակի հասնող վնասվածքներ՝ արյունազեղումներ, կապտուկներ, քերծվածքներ և թվով առնվազն 54 մարմնական վնասվածքներից, որոնցից միայն մեկը՝ մատի քերծվածքն է առաջացել 3-5 օր առաջ:

ԲԱՆԱԿ

Զինվորական հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմադրությամբ, միջազգային պայմանագրերով, Զինապարտության մասին օրենքով ու այլ օրենքներով և իրավական ակտերով:

Համաձայն Հելսինկյան Ասոցիացիայի մասնագետների դիտարկումների՝ բանակը եղել է և շարունակում է հանդիսանալ կոռումպացված համակարգ, որտեղ զինծառայողների միջև իշխում են ոչ կանոնադրական փոխհարաբերությունները, բարձրաստիճան զինվորականների հովհանավորությամբ կոծկվում են ծանր հանցագործությունների դեպքերն ու դրանք ծնող պատճառները: Տարբեր աստիճաններ ունեցող զինվորական հրամանատարները ձգտում են հավելյալ եկամուտ ստանալ շարքային զինծառայողների հաշվին. նրանց առաջարկում կամ ստիպում են որոշակի կաշառք վճարել կարճատև կամ երկարատև արձակուրդի գնալու դիմաց, զգալի գումարներ ծախսել զորամասի այս կամ այն կարիքները հոգալու համար, փող վճարել հոսպիտալում բուժօգնություն ստանալու դիմաց: Համատարած երևույթ է դարձել ժամկետային զինծառայողներից օրենքով հասանելիք աշխատավարձերի (4500-12500 ՀՀ դրամ) կորզումը: Վերադաս սպաները ստիպում են զինվորներին ստորագրել աշխատավարձի ստացման փաստաթղթում, սակայն հասանելիք փողը նրանց չի վճարվում: Ըստ Հելսինկյան Ասոցիացիայի փորձագետ Ռ. Մարտիրոսյանի՝ այս գումարները զորամասի մասշտաբով հասնում են հսկայական թվերի, որոնք փոխանցվում են բարձրաստիճան սպաներին: Այս փաստը մինչ օրս քննության առարկա չի դարձել, քանի որ երկրի ղեկավարությունը քաղաքական նկատառումներից ելնելով աչք է փակում նման երևույթների վրա: Բանակը անմիջականորեն կախվածության մեջ է դրվել քաղաքական պրոցեսներից: Բանակի գեներալիտետը սերտորեն առնչվում է քաղաքականություն-բիզնես արատավոր մեխանիզմին և յուրաքանչյուր ընտրությունների ժամանակ ու դրանցից հետո այն հանդիսանում է գործիք իշխանությունների ձեռքին, ինչի հետևանքով էլ իշխանություն-գեներալիտետ-զինվոր հարաբերությունները կարգավորվում են ոչ թե ըստ կանոնակարգի, այլ հանցավոր աշխարհի օրենքներով: 2008թ.-ի մարտի 1-ին ժողովրդի դեմ դուրս բերվեց

բանակը՝ խախտելով ՀՀ Սահմանադրության 8.2 հոդվածը, ըստ որի՝ ՀՀ զինված ուժերն ապահովում են ՀՀ անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը, քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո:

Մինչ օրս Հայաստանում չի հաջողվել որևէ բարձրաստիճան զինվորականի ենթարկել քրեական պատասխանատվության:

Զինվորական բարձրաստիճան սպաները իրենց հանրային ելույթներում խոստովանում են, որ զորամասերի հրամանատարները առավել հաճախ կոծկում են զորամասերում կատարված մանր և միջին հանցագործությունները, որպեսզի պատրանք ստեղծեն, թե իրենց զորամասերում կարգապահությունը գտնվում է բարձր մակարդակի վրա: Նման գործողությունները նպաստում են զորամասերում անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը և ի վերջո հանգեցնում առավել ծանր հանցագործությունների՝ մասնավորապես սպանությունների: Այս երևույթին էապես նպաստում է ՀՀ ՊՆ քննչական ծառայության, ՀՀ ՊՆ ՌՈ վարչության և ՀՀ զին. դատախազության գործունեությունը: Այս մարմինները հաճախ կոծկում են հանցագործությունները. դիտավորյալ սպանությունները ներկայացվում են որպես ինքնասպանություններ, անզգուշությամբ կատարված սպանություններ կամ դժբախտ պատահարներ: Մարտական հենակետերում կատարված սպանությունները հաճախ ներկայացվում են որպես հակառակորդի կողմից կատարված սպանություններ:

Արդյունքում, սպանությունները չեն բացահայտվում, քանի որ դեպքի վայրը, մահվան առաջացման պատճառներն ու գործիքները կեղծվում են, նախաքննությունը ընթանում է՝ հենվելով կեղծ փաստերի վրա, և հանգում է եզրակացությունների, որոնք չեն համապատասխանում դեպքերի իրական ընթացքին: Վերջին եզրահանգող օղակը հանդիսանում է դատարանը, որտեղ խախտվում են արդար դատաքննության բազմաթիվ կանոններ (օր.՝ որպես ապացույց են ընդունվում ապօրինի ճանապարհով

ձեռք բերված փաստերը) և կայացվում է դատավճիռ, եթե կայացվում է, որը, փաստորեն չի արտացոլում իրականությունը և համապատասխան ձևով պատժում մեղավորներին:

Ըստ էության բանակի սպայակազմի կողմից շարքային զինծառայողների ծեծը, խոշտանգումներն ու նվաստացումները կրում են համատարած և պարբերական բնույթ: Նման դեպքերը սովորաբար ի հայտ են գալիս սպանության գործերով կատարված նախաքննությունների ընթացքում, քանի որ առավել հաճախ ծեծն ու խոշտանգումը նախորդում են սպանություններին: Բացառություններ կարելի է համարել այն դեպքերը, երբ ծեծն ու խոշտանգումները բերում են ծանր հետևանքների՝ զինվորների հաշմանդամության:

Առանձնակի ուշադրության է արժանի այն փաստը, որ ՀՀ-ից զորակոչված զինվորների մի զգալի մասը իրենց ծառայությունն են իրականացնում ԼՂՀ-ում: Այս դեպքում օրենքի և օրինականության տեսակետից բազմաթիվ խոչընդոտներ են առաջանում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այս զինծառայողները, մեկնելով ԼՂՀ, ծառայում են ոչ թե ՀՀ ՊՆ, այլ ԼՂՀ ՊԲ զորամասերում, այսինքն՝ այլ պետության բանակում: Ըստ ՀՀ Սահմանադրության 8.2 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են **Հայաստանի Հանրապետության** անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: Մեկ այլ հակասություն է այն, որ ԼՂՀ-ում գործում է ՀՀ զին. դատախազությունը և ՀՀ ՊՆ Ռազմական Ոստիկանությունը, ՀՀ ՊՆ Քննչական ծառայությունը և Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը: Այս կառույցներին իրավունք է վերապահված կալանավորել, մեղադրանք ներկայացնել և դատել ԼՂՀ քաղաքացիություն ունեցող զինծառայողներին. այլ կերպ ասած Հայաստանը իրավունք է ստանում արդարադատություն իրականացնելու այլ պետության տարածքում այլ պետության քաղաքացիների նկատմամբ: Վերը նշված փաստերը գործնականում հաճախ դառնում են իրավական հակասությունների պատճառ:

Ստորև ներկայացնենք Տիգրան Օհանջանյանի, Խաչատուր Մելիքյանի, Վալերիկ Մուրադյանի, Տիգրան Նազարյանի և Տիգրան Համբարձումյանի սպանության գործերը:

Տիգրան Օհանջանյանի սպանության գործը

2007թ.-ի օգոստոսի 30-ին Գեղարքունիքի մարզի գյուղ Կարճաղբյուրի զորամասում սպանվել է ժամկետային զինծառայող կրտսեր սերժանտ Տիգրան Օհանջանյանը: Դեպքի առթիվ 2007թ.-ի օգոստոսի 31-ին քրեական գործ է հարուցվել, և նախաքննություն է ձեռնարկվել: Նախաքննությունը տևել է մոտ 1 տարի 1 ամիս/ քննիչ՝ Գնել Մանուկյան/: Համաձայն պաշտոնական վարկածի՝ մահվան պատճառ է հանդիսացել Տ. Օհանջանյանի շփումը զորամասի տարածքում գտնվող կապի հանգույցի ալեհավաքի ձգալարի հետ, որի արդյունքում զինծառայողը էլեկտրահարվել է: Ըստ այս վարկածի՝ ալեհավաքը և ձգալարը սարքին չէին: Այս իսկ պատճառով անփութության մեջ մեղադրվում էին զորամասի կապի հանգույցի աշխատակիցներ Կարեն Թովմասյանն ու Ռուստամ Ասատրյանը:

Հիմնվելով գործում առկա բազմաթիվ անհամապատասխանությունների, կեղծիքների և թերությունների վրա՝ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանը էլեկտրահարման վարկածն ապացուցող փաստեր չի գտել և արդարացրել է մեղադրյալներին: Մոտ 1 տարի 7 ամիս տևած դատաքննությունից հետո Տիգրան Օհանջանյանի գործը կրկին վերադարձվել է նախաքննության փուլ:

Նախ և առաջ, նախաքննության ընթացքում կեղծվել է Օհանջանյանի մահվան ժամը: Ըստ քրեական գործի նյութերի՝ մահը վրա է հասել ժամը 23:00-ի սահմաններում: Սակայն, երբ նույն զորամասում ծառայող զինվորներից մեկի մայրը հանդիպել է Օհանջանյանի ծնողներին, նա հայտնել է, որ օգոստոսի 30-ին ժամը 21:00-21:10-ի սահմաններում զորամասից զանգահարել է իր որդին ու հայտնել, որ Տիգրանը մահացել է: Հետագայում արդեն նախկին զինծառայողը հերքել է նման զանգի գոյությունը, սակայն Օհանջանյանի ծնողների պահանջով հրապարակվել է նրա հեռախոսից տվյալ օրը կատարված զանգերի ցուցակը, ինչը և հաստատել է մոր հետ ունեցած խոսակցության փաստը: Այս հանգամանքին նախաքննական մարմինը չի ցանկանում անդրադառնալ, քանի որ դեպքի իրական ժամը ներկայացնելու դեպքում գործով բոլոր վկաների ցուցմունքները կկորցնեն արժանահավատությունը:

Պարզ չէ, թե իրեղեն ապացույց համարվող զինվորական հագուստը իրականում պատկանել է Օհանջանյանին, թե ոչ: Մահվան հաջորդ օրը՝ առավոտյան, Գեղարքունիքի ՌՈ աշխատակիցը զորամասի տարածքում հայտնաբերել է Օհանջանյանի զինվորական վերնաշապիկը պատառոտված վիճակում: Չարաշահելով իր պաշտոնական դիրքը՝ ՌՈ աշխատակիցը կատարել է հագուստի զննում և լուսանկարում: Իակ Գ. Մանուկյանը, արհամարելով օրենքը, սույն վերնաշապիկը փորձաքննության չի ուղարկել: Դեպքից շուրջ երկու ամիս անց միայն տուժող կողմի բազմաթիվ բողոքներից հետո քննիչը փորձաքննության է ուղարկել մի զինվորական համազգեստ՝ ներկայացնելով այն որպես Օհանջանյանինը: Այս համազգեստը Օհանջանյանին չէր կարող պատկանել, ինչը ակնհայը է դառնում քր. գործում առկա ՌՈ աշխատակցի արձանագրությունից և դրան կից ներկայացված լուսանկարներից: Այսպես.

ա. դատելով փորձագիտական եզրակացությունում առկա համազգեստի լուսանկարներից՝ փորձագետին ուղարկված համազգեստը նոր է, առանց վնասվածքների, մինչդեռ Օհանջանյանի իրական հագուստը պատառոտված էր, փոշոտ (գործում առկա է համապատասխան լուսանկար),

բ. Օհանջանյանի կազմվածքին համապատասխանում էր 52 չափի համազգեստ, մինչդեռ քննիչը փորձագետին էր ուղարկել 46 չափի համազգեստ:

Դատաբժշկական փորձաքննությամբ չեն արձանագրվել մարմնի վրա առկա բոլոր վնասվածքները: Նշված չէր, որ Օհանջանյանի ձախ ականջը վնասված էր, ուռած, կարմրած և տարբերվում էր աջից: Նշված չէր, որ մահացածի մատները ափի կողմից կապտած էին: Բացի այդ, բանակ զորակոչվելիս, Օհանջանյանը չուներ առջևի կտրող ատամներից մեկը, իսկ դատաբժիշկն արձանագրել էր, որ վերևի ատամնաշարն ամբողջական է:

Իրեղեն ապացույց համարվող ձգալարը, որին քննիչի պնդմամբ դիպչել է Տ. Օհանջանյանը և հոսանքահարվել, Գ. Մանուկյանի կողմից օրենքով սահմանված կարգով չի առգրավվել: Դատարանում քննիչը փաստերի ճնշման տակ խոստովանել է,

որ ձգալարը վերցրել է զորամասի պահեստից: Ձգալարի վրա չկան տուժողի ԴՆԹ-ի հետքեր:

2011թ.-ի սկզբին ՀՀ նախագահի հրահանգով ՀՀ նոր զին. դատախազ Գ. Կոստանյանը երկու անգամ այցելել է Կարճաղբյուրի զորամաս և ուսումնասիրել այն տարածքը, որը նախաքննական մարմնի կողմից նախկինում ներկայացվել է որպես դեպքի վայր: Մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում, զին. դատախազը եկել է այն եզրակացության, որ դեպքի վայրը կեղծվել է Գ. Մանուկյանի կողմից, և որ քննիչի կողմից նշված հանգամանքներում տուժողը չէր կարող ստանալ դատաբժշկական փորձաքննության մեջ թվարկված մարմնական վնասվածքները: Չնայած այս խոստովանությանը՝ զին. դատախազը քայլեր չի ձեռնարկում իրականությունը բացահայտելուն նպատակաուղղված:

Դատարանից ետ վերադարձված այս գործով նախաքննական մարմինը քննչական գործողություններ չի կատարում: Երկար պայքարից հետո սպանվածի հարազատներին հաջողվել է հասնել նրան, որպեսզի գործով կատարվի նոր փորձաքննություն, որը հանձնարարվել է ՌԳՀԻ-ի (Ռադիոֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտ) մասնագետներին: Համաձայն նրանց կողմից 22.11.2011-ին տված թիվ 1-1/47 եզրակացության յոթերորդ կետի՝ ո՛չ ալեհավաքի բնականոն աշխատանքի դեպքում և ո՛չ էլ «անտենան սնուցող մալուխի մեկուսացման վնասման դեպքում, անտենայի և այն պահող ձգալարերի վրա չէր կարող հայտնվել ցանցի լարում»: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ նախաքննական մարմնի վարկածը՝ մահ հոսանքահարումից, կեղծ է ու անհիմն: Այն հորինվել է միմիայն այն նպատակով, որպեսզի քողարկվեն զինվորի սպանության իրական պատճառները:

Խաչատուր Մելիքյանի սպանության գործը

2005թ.-ի մարտի 15-ին ԼՂՀ Պաշտպանական Բանակի (ՊԲ) թիվ 46492 զորամասում սպանվել է ՀՀ քաղաքացի, զինծառայող Խաչատուր Մելիքյանը: Դեպքի կապակցությամբ քրեական գործ անմիջապես չի հարուցվել, քանի որ, ըստ նախնական պաշտոնական վարկածի, Խաչատուր Մելիքյանը զոհվել էր ադրբեջանցիների հետ սահմանակցող մարտական հենակետում վերջիններիս կողմից արձակված հրազենային կրակոցից: Ավելին, ԼՂՀ նախագահի կողմից Խ. Մելիքյանը հետմահու պարգևատրվել էր արիության շքանշանով: Ավելի ուշ զին. դատախազությունը փաստերի ճմշման տակ ստիպված եղավ հարուցել թիվ 91001105 քր. գործը՝ ըստ որի 2005թ.-ի մարտի 15-ին ժամը 23:00-ի սահմաններում զինծառայող Միշա Դոմիկյանը, խախտելով հեթապահության կանոնները, գնացել է թիվ 145 դիրքի N5 դիտակետը, պահանջել է հերթապահի ԱԿ 74 թիվ 2445696 ինքնաձիգը և երեք մեկական, իսկ այնուհետև մեկ կրակահերթ ուղղելով N4 դիտակետի ուղղությամբ՝ անզգուշությամբ սպանել է Մելիքյանին:

Նախաքննական մարմինը նման եզրակացության է հանգել՝ հիմնվելով կեղծ փաստերի վրա: Այսպես.

1. ոչնչացվել է դեպքի վայրը: Կեղծ ցուցմունքների հիման վրա քննիչ Ադամյանը ապացուցված է համարել, որ սպանության պահին Մելիքյանը գտնվել է N4 դիտակետում, ինչը հակասում է գործով ձեռքբերված այլ տվյալներին՝

   ա) բոլոր վկաների ցուցմունքներին համաձայն՝ N4 դիտակետը անսարք վիճակում էր, այնտեղ հերթապահություն չէր իրականացվում և զինծառայողն այնտեղ գտնվել չէր կարող;

   բ) ըստ գործով կատարված դիակի դատաբժշկական թիվ 226/14 եզրակացության՝ Մելիքյանը մահացել է գլխի շրջանում ստացած հրազենային վնասվածքից, ինչի արդյունքում արյան մեծ կորուստ է ունեցել: Մինչդեռ, նախաքննության կողմից ճանաչված դեպքի վայրում արյան լճակ չի հայտնաբերվել;

2. արդեն հիշատակված դիակի դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել է, որ Մելիքյանը մահվանից առաջ ոգելից խմիչք է օգտագործել: Որպես վկա հարցաքննված Մ. Դոմիկյանը իր ցուցմունքում նշել և կապիտան Ս. Սահակյանի հետ առերեսման ժամանակ պնդել է, որ սպանությունից մեկից երկու ժամ առաջ կապիտանը, պատրաստվելով իր սպա ընկերների հետ ընթրել, գետնատնակի սեղանին է դրել մեկ լիտրանոց պլաստմասե տարրայով տնական թունդ օղի: Չնայած այս փաստի՝ քննիչն ապացուցված է համարել, որ սույն մարտական հենակետում խմիչք չի եղել և ոչ ոք՝ այդ թվում Մելիքյանը, չի խմել: Անհրաժեշտ է նշել, որ դատաբժիշկը հարցաքննվելիս պնդել է իր եզրակացության այդ կետը՝ նշելով, որ դատաբժշկական կենտրոնում պահվում է Մելիքյանի արյան նմուշը և ինքը կարող է այն տրամադրել ցանկացած անկախ փորձագետի՝ համոզված, որ արդյունքը լինելու է նույնը:
3. նույն դիակի դատաբժշկական փորձաքննությամբ Մելիքյանի մարմնի տարբեր մասերի՝ ձեռքերի, ոտքերի, կրծքավանդակի և թիկունքի վրա հայտնաբերվել են քերծվածքներ, կապտուկներ և արնազեղումներ, որոնք առաջացել են մահվանից 0-10 րոպե առաջ: Չցանկանալով արձանագրել ակնհայտ ծեծի և խոշտանգման փաստը՝ քննիչը վկաներից ցուցմունքներ է վերցրել ՝ համաձայն որոնց

   ա) զինվորներից ոչ մեկը չէր կարող ծեծել Մելիքյանին, քանի որ վերջինս ֆիզիկապես բոլորից ուժեղ էր, ըմբշամարտիկ էր, սպորտի վարպետ;

   բ) նշված վնասվածքները կարող էին առաջանալ մահամերձ Մելիքյանին վազքով դիտակետից խրամատ տեղափոխելու ճանապարհին խրամուղու պատերին դիպչելու արդյունքում:
4. զոհվածի հագուստների թիվ 13920502 փորձագիտական եզրակացության մեջ նշվում է, որ արյան հետքեր են հայտնաբերվել Մելիքյանի ներքնազգեստի վրա, սակայն, չեն հայտնաբերվել ձմեռային բաճկոնի վրա, որը, ըստ ցուցմունքների, եղել է նրա հագին:

   Նման թերի և միակողմանի նախաքննության օրգանական շարունակությունը դրաձավ սույն գործով դատավոր Լոռնիկ Աթանյանի նախագահությամբ Ստեփանակերտ քաղաքում ընթացած դատաքննությունը: Թվարկված փաստերից և ոչ մեկը Աթանյանի

կողմից դատաքննության առարկա չդարձան: Դատավորը մերժեց տուժող կողմի բոլոր միջնորդությունները՝ այդ թվում նաև ենթադրյալ մարդասպան Մ. Դոմիկյանին կալանավորելու պահանջը: Արդյունքում, Դոմիկյանը, տեսնելով, որ անզգույշ սպանության հոդվածը կարող է փոխարինվել դիտավորյալ սպանության հոդվածով, դիմեց փախուստի: Այդ պահից մինչ այսօր իրավապահ մարմիններին չի հաջողվում հայտնաբերել Մ. Դոմիկյանին, քանի որ հետախուզումն իրականացնում է ԼՂՀ ոստիկանության օպերատիվ ծառայությունը ԼՂՀ տարածքում: Մինչդեռ Դոմիկյանը ՀՀ քաղաքացի է, Լոռվա մարզի բնակիչ և բնական է, որ նրան անհրաժեշտ է փնտրել այս մարզում, Հայաստանում կամ արտասահմանում:

Ստեղծված իրավիճակը սպանվածի մորը՝ Դոնարա Մելիքյանին, ստիպեց իրավական դաշտից տեղափոխվել քաղաքական դաշտ և հարց բարձրացնել, թե՝

ա) ի՞նչ իրավունքով են իր որդուն ծառայության ուղարկել այլ պետություն;

բ) ինչու՞ է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի նիստը գումարվում այլ պետության մայրաքաղաքում;

գ) ի՞նչ կարգով կարող է սպանվածի մայրը այլ պետությունից պահանջել, որպեսզի նշված պետության իրավապահները հայտնաբերեն մեղադրյալին և ավարտեն դատաքննությունը:

Այս հարցերը ծագում են յուրաքանչյուր անգամ, երբ ԼՂՀ տարածքում ՀՀ քաղաքացիություն ունեցող զինծառայող է սպանվում. սրանք հակասություններ են, որոնք ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չեն և իրենց իրավական լուծումը չեն ստանում:

Վալերիկ Մուրադյանի սպանության գործը

2010թ.-ի մարտի 15-ին, ժամը 00:35-ի սահմաններում ԼՂՀ ՊԲ թիվ 39138 զորամասի վերանորոգման վաշտի սպայական սենյակի ետևի մասում պարանի միջոցով ձողից կախված վիճակում հայտնաբերվել է ՀՀ քաղաքացի, սույն զորամասի զինծառայող Վալերիկ Մուրադյանի դիակը: Փաստի առթիվ հարուցվել է թիվ 90951310 քր. գործը ՀՀ քր. օր.-ի 110 հոդվածի 1-ին մասով՝ ինքնասպանության դրդում:

2010թ.-ի օգոստոսի 3-ին նախաքննությունը շարունակելու նպատակով քր. գործը ՀՀ ՊՆ ՔԾ առաջին կայազորային մարմնից փոխանցվել է նույն ծառայության Հատուկ կարևորության գործերով քննչական բաժին: 2011թ.-ի հունվարի 15-ին ՀԿԳ քննիչ Ա. Թամրազյանը որոշում է կայացրել քր. գործը կասեցնելու վերաբերյալ՝ այն հիմքով, որ հանցագործություն կատարած անձի ինքնությունը չի հաջողվում պարզել: Դրանից շուրջ մեկ ամիս անց սպանված զինվորի մոր բազմաթիվ բողոքներից հետո քր. գործը կասեցումից հանվել է, սկսվել է լրացուցիչ նախաքննություն, որը շարունակվում է մինչ օրս՝ 2012թ.-ի հունվար ամիսը:

Այս հանգամանքները վկայում են այն մասին, որ ա.քննիչը շահագրգռված չէ օբյեկտիվ քննություն կատարելու մեջ, բ.սույն գործով պատշաճ դատախազական հսկողություն չի իրականացվում: Եթե գործը կասեցնելու որոշումը անհիմն էր, ինչն ապացուցվում է 11 ամիս շարունակ ընթացող լրացուցիչ քննությամբ, ապա ա.Ա. Թամազյանը պետք է պատասխանատվություն կրեր ապօրինի կերպով գործը կասեցնելու համար, բ.գործը պետք է հանձնվեր այլ քննիչի: Մինչդեռ վերադաս մարմինը թվարկված գործողությունները չի կատարել:

2011թ.-ի ապրիլ ամսին նախաքննական մարմինը մեղադրանք է ներկայացրել Ա. Գրիգորյանին ՀՀ քր. օր.-ի 359 հոդվածի 1-ին մասով՝ «զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու» մեջ: Հունիսի 30-ին, 2011թ. դատախազ Հ. Հարությունյանի որոշմամբ Ա. Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է և նա համաներմամբ ազատ է արձակվել:

Անհրաժեշտ է նշել, որ Ա. Գրիգորյանի հանցանքը չի որակվել որպես Մուրադյանին ինքնասպանության դրդող արարք:

Նշենք, որ քր. գործով կատարվել և կատարվում է միակողմանի և թերի նախաքննություն: Ինքնասպանության վարկածը հիմնավորելու համար քննիչը նշանակել է հետմահու դատահոգեբանական-դատահոգեբուժական փորձաքննություն: Չնայած փորձագետները իրենց թիվ 10-1365 եզրակացության մեջ գրել են, որ հիմնվելով քր. գործում առկա տեղեկությունների վրա հնարավոր չէ միանշանակ կերպով գնահատել Մուրադյանի՝ ֆիզիոլոգիական աֆեկտի վիճակում գտնվելու հանգամանքը՝ նախաքննական մարմինը գործը որակել է որպես ինքնասպանություն և շարունակում է քննություն կատարել միայն այս վարկածի շուրջ: Բացի այդ, քր. գործով կատարված դիակի դատաբժշկական թիվ 238/12 եզրակացությունը վկայում է սպանության մասին: Այսպես, դատաբժիշկը նկարագրել է պարանոցի առաջնային մասում առկա ճմլման ակոսը, որը վկայում է այն մասին, որ զինվորին սպանել են կախելու միջոցով, այնուհետև ներկայացնում է, որ «պարանոցի առաջնային մակերեսի առաջակողմնային ձախ կեսի շրջանում ճմլման ակոսին զուգահեռ առկա է մոտ 1.2-1.3սմ լայնությամբ մուգ կարմիր գույնի ժապավենաձև արյունազեղում»: Այս փաստով դատաբժիշկը տվել է միտումնավոր թերի եզրակացություն: Նշելով ժապավենաձև արյունազեղման մասին, նա պարտավոր էր ֆիքսել արյունազեղված հատվածի երկարությունը, ճմլման ակոսից նշված վնասվածքի հեռավորությունը և նշված վնասվածքի առաջացման մեխանիզմը, ինչը չի կատարվել: Բացի այդ սույն վնասվածքի մասին տեղեկությունը պետք է արտացոլվեր նշված եզրակացության «Հետևություններ» բաժնում, ինչը, սակայն, բացակայում է: Նշենք, որ, ըստ դատաբժշկական պրակտիկայի, պարանոցի շրջանում երկրորդ վնասվածքը հուշում է այն մասին, որ Մուրադյանին նախ խեղդել են, իսկ այնուհետև՝ կախել:

Հատկանշական է, որ Մուրադյանի հագին եղած հնամաշ համազգեստը պատկանել է Ավետիք Խաչատրյանին, ում հագին էլ իր հերթին հայտնաբերվել է Մուրադյանի համազգեստը: Նախաքննական մարմինը արժանահավատ է համարել Խաչատրյանի

այն բացատրությունը, որ ինքը արձակուրդ գնալիս Մուրադյանից խնդրել է վերցնել նրա նոր համազգեստը և մոռացել է ետ վերադարձնել: Դեպքի վայրում հայտնաբերվել է Նորայր Գրիգորյանի գոտին, ում բացատրությունը, թե գոտին մոռացության հետևանքով է մնացել այնտեղ, կրկին ընդունվել է նախաքննական մարմնի կողմից: Այս փաստերը նույնպես վկայում են այն մասին, որ քննությունն իրականացվում է ոչ լիարժեք կերպով և հնարավոր մեղսագործները դուրս են մնում քննության շրջանակներից:

Դեռևս սպանությունից օրեր անց սպանվածի մայրը ցուցմունք է տվել այն մասին, որ դեպքից չորս օր առաջ հեռախոսային խոսակցության ընթացքում իր որդին՝ Վ. Մուրադյանը, հայտնել է, որ նրա համածառայողները վերջինիս աշխատավայր հանդիսացող գարաժից բենզինի գողություն են կատարել՝ գողացված բենզինով լիցքավորելով մի խումբ սպաների անձնական ավտոմեքենաները: Դրանք պայմանագրային զինծառայողներ էին, ովքեր սպառնալիքներով հրամայել են Վ. Մուրադյանին տեսածի մասին լռել: Մոր հետ ունեցած խոսակցության ժամանակ Մուրադյանը նշել է նաև, որ հանցագործները իրեն փող են առաջարկել լռելու դիմաց: Ակնհայտ է, որ Մուրադյանը հայտնվել էր բարդ ընտրության առջև՝ փողը վերցնելու դեպքում դառնում էր հանցակից, իսկ չվերցնելու դեպքում՝ հանցագործները կարող էին կասկածել, որ Մուրադյանը չի լռի և վկային վերացնելու որոշում կայացնել: 2011թ.-ի հոկտեմբեր ամսին, հանդիպելով պաշտպանության նախարարի հետ, սպանված զինվորի մայրը տեղեկացրել է վերջինիս այս խոսակցության և իր կասկածների մասին: Նախարարը, համաձայնվելով, որ նշված համգամանքը կարող էր հանդիսանալ սպանության պատճառ, իր ենթականերին հանձնարարել է քննություն կատարել բենզինի հնարավոր գողության հարցով: Սակայն, նախաքննական մարմինը մինչ օրս այս փաստի շուրջ ոչ մի քննություն չի կատարել:

Արտակ Նազարյանի սպանության գործը

2010թ.-ի հուլիսի 27-ին ժամը 07:50-ի սահմաններում ՀՀ ՊՆ թիվ 21127 Զ/Մ-ի հսկողությանը հանձնված թիվ 12 «Ղոզլու» կոչվող մարտական հենակետում որպես հենակետի ավագ ծառայության նշանակված լեյտենանտ Արտակ Նազարյանն իր հաստիքային «ԱԿ-74» տեսակի 1093977 համարի ինքնաձիգով բերանի խոռոչի շրջանում իրեն հրազենային վնասվածք է հասցրել և տեղում մահացել է: Ըստ մեղադրական եզրկացության՝ Ա. Նազարյանին ինքնասպանության են հասցրել մարտական հենակետի երեք շարքային զինծառայողները, հենակետում հերթապահություն իրականացնող կապիտան Հ. Մանուկյանը և հարակից «Լույս» հենակետի ավագ, լեյտենանտ Վ. Հայրապետյանը, ովքեր դեպքից երեքից ութ օր առաջ առանձին-առանձին հարավածել ու նվաստացրել են Նազարյանին:

Հելսինկյան Ասոցիացիայի փորձագետ Ռ. Մարտիրոսյանը սպանված զինվորի մոր՝ տուժողի իրավահաջորդի խնդրանքով ընդգրկվեց քր. գործում որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ: Ծանոթանալով սույն գործի նյութերին՝ Ռ. Մարտիրոսյանը պարզեց, որ կատարվել է միակողմանի, կեղծ նախաքննություն, որն ուղեկցվել է Քրեական դատական օրենսգրքի բազմաթիվ խախտումներով:

Այսպես.

1. նախաքննության ընթացքում երկու վկա զինծառայողներ՝ Արթուր Մկրտչյանն ու Արտակ Հովհաննիսյանը հրաժարվել են իրենց նախկինում տված ցուցմունքներից՝ նշելով, որ դրանք իրենցից կորզվել են ծեծի և սպառնալիքների միջոցով: Նախաքննական մարմինը, որի անմիջական մասնակցությամբ տեղի են ունեցել բռնությունները, իր մոտ է հրավիրել այս վկաներին, ինչից հետո նրանք կրկին հաստատել են իրենց նախնական ցուցմունքները: Այս քննչական գործողությունները կատարելու ընթացքում քննիչը կատարել է պաշտոնական կեղծիք. նա հարցաքննել է վկա Ա.Մկրտչյանին նրա կողմից երեք մեղադրյալ զինծառայողների ծնողներին տրված նախաքննական ցուցմունքները հերքող գրության շուրջ, բայց այդ գրությունը որպես փաստաթուղթ չի ճանաչել և քր. գործին չի կցել: Փորձագետ Ռ. Մարտիրոսյանը

անձնական նախաձեռնությամբ ձեռք է բերել նշված գրությունը, որտեղ վկա Ա. Մկրտչյանը մասնավորապես նշում է, որ մեղադրյալներ Հարութիկ Կիրակոսյանը, Աթիբեկը և Մխիթար Մխիթարյանը մեղավոր չեն և որ իրեն «ծեծելով ստիպողաբար ցուցմունք գրել են տվել»:

2. դեպքից մոտ 1 ժամ 25 րոպե անց զորամասից Գլխավոր Շտաբ և ՊՆ է ուղարկվել օպերատիվ տեղեկագիր, համաձայն որի Ա.Նազարյանը ինքնասպանություն է գործել մարտական հենակետի խրամատում: Այնուհետև, սակայն, դեպքի վայրը փոխվել է և նոր վայր է ընտրվել հենակետի տարածքում բարձունքի վրա գտնվող ժայռաբեկորը, որին նստած վիճակով հենվելով, Ա.Նազարյանը ձեռքում եղած ինքնաձիգի փողը ուղղել է դեպի բերանը և ինքնասպան եղել: Այսպիսի հանգամանքներում այս ժայռաբեկորի վրա անպայմանորեն արյան, ոսկրաբեկորների և ուղեղանյութի մասնիկներ պետք է մնային, քանի որ հրազենային վնասվածքը միջանցիկ է եղել, գնդակը դուրս է եկել սպայի գլխի ձախ կողմնա-ծոծրակային շրջանում: Սակայն դեպքի վայրի զննությամբ ժայռաբեկորի վրա ոչ մի հետք չի հայտնաբերվել:

   Դեպքից յոթ ամիս անց գործով նոր քննիչ Լ. Պետրոսյանի նախաձեռնությամբ կատարվել է դեպքի վայրի մի նոր (թվով 3-րդ) զննությունը, որի արդյունքում քննիչն արձանագրել է, որ ժայռաբեկորի վրա հայտնաբերվել են «արնանման հետքեր»: Սակայն նա, չարաշահելով իր պաշտոնական դիրքը, խախտելով քր. դատ. օր.-ի նորմերը, իր հայտնաբերած արյան հետքերից նմուշներ չի վերցրել, չի փաթեթավորել, չի առգրավել և դրանք փորձաքննության չի ուղարկել: Այսինքն՝ այդպես էլ չի պարզվել, թե արդյո՞ք դրանք արյան հետքեր են, մարդու՞, թե կենդանու արյուն է, եթե մարդու, ապա ո՞ր խմբին է պատկանում և կարո՞ղ էր արդյոք լինել Ա. Նազարյանի արյունը:

3. դեպքի վայրի զննության արձանագրության մեջ նշվում է, որ այն կազմվել է 28.07.2010թ.-ին: Զննությանը զուգահեռ «Canon» Ֆոտոխցիկով լուսանկարվել է դեպքի վայրը և դիակը դեպքի վայրում: Սա հերքվում է այն հանգամանքով, որ սպանության օրը՝ հուլիսի 27-ին, ժամը 15:00-ի սահմաններում Բերդ քաղաքի հիվանդանոցում կատարվել է Նազարյանի դիակի արտաքին զննություն և նույն օրը նրան տեղափոխել

են ք. Երևան: Ավելին, նույն օրը՝ հուլիսի 27-ին, դիակը տեղափոխելու ճանապարհին նրանց դիմավորել են սպանվածի հարազատները, և սպաներից մեկը ցույց է տվել իր բջջային հեռախոսի մեջ պահպանված դիակի լուսանկարը դեպքի վայրում (ապօրինի լուսանկարում): Արդյունքում ստացվում է, որ նույն օրը նույն ժամերին (28.07.2010թ., ժամը 12:00-14:00-ի սահմաններում) դիակը գտնվել է միաժամանակ երկու վայրում՝ ա.դեպքի վայրում և բ.ՀՀ Առողջապահության նախարարության դատաբժշկական կենտրոնում:

4. տեղազննության ժամանակ քննիչը զենքի հետ քննչական գործողություններ կատարելու պատրվակով միտումնավոր ոչնչացրել է ինքնաձիգի վրա առկա մատնահետքերը. ըստ փորձագետի թիվ 25101003 եզրակացության՝ ինքնաձիգի վրա մատնահետքեր չեն հայտնաբերվել: Այս կապակցությամբ Ռ. Մարտիրոսյանը ներկայացրել է հայտարարություն հանցագործության մասին և միջնորդել ՀՀ գլխավոր դատախազին, որպեսզի փաստի առթիվ հարուցվի քր. գործ:
5. տեղազննության ժամանակ քննիչը հայտնաբերել է Ա. Նազարյանի ինքնաձիգի թվով 3 պահունակները՝ 90 փամփուշտով: Պարզվել է նաև, որ Ա. Նազարյանին ամրակցված թիվ 1093977 ինքնաձիգի պահունակում առկա է 29 փամփուշտ և ևս մեկը գտնվում է ինքնաձիգի փողի մեջ: Այսպիսով, բոլոր այն 120 փամփուշտները, որոնք Ա. Նազարյանը ստացել է մարտական հենակետ մեկնելիս, իրենց տեղում են եղել: Այս փաստը հերքում է նախաքննական մարմնի այն պնդումը, որ Ա. Նազարյանը ինքնասպան է եղել իրեն ամրակցված ինքնաձիգով: Ինչպես նախաքննական, այնպես էլ ընթացող դատաքննության փուլում վկաներից ոչ մեկը չի ներկայացրել որևէ փաստ, որը կենթադրեր, որ Ա. Նազարյանի մոտ եղել են կամ որ նա փորձել է ձեռք բերել լրացուցիչ փամփուշտներ:

   Ըստ օրենքի քննիչը պարտավոր էր փորձաքննության ներկայացնել մարտական հենակետում առկա բոլոր զենքերը՝ պարզելու համար, թե վերջին մաքրումից հետո ո՞ր զենքից է կրակոց արձակվել: Մինչդեռ քննիչը, կոպտորեն չարաշահելով իր պաշտոնական դիրքը, իրեն վերագրելով փորձագետ-ձգաբանի գործառույթներ,

«իրականացրել է» մարտական հենակետի ինքնաձիգների ձգաբանական փորձաքննություն և «հանգել այն եզրակացության», որ հենակետում առկա ոչ մի զենքից վերջին մաքրումից հետո կրակոց չի արձակվել:

6. դատաբժշկական փորձաքննությամբ (եզրակացություն N704-34) Ա. Նազարյանի մարմնի տարբեր մասերում հայտնաբերվել են մի քանի տասնյակի հասնող վնասվածքներ՝ արյունազեղումներ, կապտուկներ, քերծվածքներ, որոնք, ժամանակային առումով բաժանվում են 3 խմբի՝

ա. սպանությունից 3-5 օր առաջ ստացված վնասվածքներ,

բ. սպանությունից 6 ժամ առաջ ստացված վնասվածքներ,

գ. սպանությունից անմիջապես առաջ ստացված վնասվածքներ:

Ավելացնենք, որ թվով առնվազն 54 մարմնական վնասվածքներից միայն մեկը՝ մատի քերծվածքն է առաջացել 3-5 օր առաջ:

Քննիչն ամենայն մանրամասնությամբ քննել է 3-5 օր առաջ Ա.Նազարյանի հանդեպ կատարված բռնության միջադեպը, սակայն սպանությունից 6 ժամ առաջ և սպանությունից անմիջապես առաջ հանգուցյալի ստացած մարմնական վնասվածքների մասին (որոնք անհամեմատ ավելի շատ են և ծանր) լռում է:

Նախաքննությունից պարզորոշ երևում է, որ «Ղոզլու 12» մ/հ-ի շարքային զինծառայողների բոլոր ցուցմունքներն ուղղորդված և թելադրված են քննիչների կողմից. մեղադրյալ զինվորներից յուրաքանչյուրն առանձին-առանձին ծեծում և հայհոյում է լեյտենանտ Ա. Նազարյանին, սակայն վերջինս չի համարձակվում որևէ կերպ արձագանքել այս անօրինականություններին այն դեպքում, որ, ըստ նույն վկաների, Ա. Նազարյանը ամբաստանյալներից մեկի հետ վիճաբանության մեջ իրեն դրսևորել է որպես համարձակ և ագրեսիվ զինծառայող:

Վերադառնալով Ա. Նազարյանի դատաբժշկական հետմահու փորձաքննությամբ հայտնաբերված, սպանությունից 6 ժամ վաղեմության և սպանությունից անմիջապես առաջ պատճառված վնասվածքներին՝ նշենք, որ քր. գործը դատարան է ուղարկվել առանց այս կարևորագույն փատերի քննման: Այդպես էլ քննիչները չեն պատասխանել

այն կարևորագույն հարցերին, թե ովքե՞ր են սպանության գիշերը ժամը 02:00-ի սահմաններում և սպանությունից առաջ առավոտյան 07:00-07:40-ի սահմաններում դաժան ծեծի ենթարկել Ա. Նազարյանին:

7. ըստ դատաբժշական թիվ 704/34 եզրակացության՝ հանգուցյալի արյան և մեզի մեջ հայտնաբերվել է 1.8 պրոմիլ էթիլ սպիրտ, որը հավասար է միջին աստիճանի խմածության: Ըստ փորձագետի՝ հանգուցյալը ոգելից խմիչք է օգտագործել սպանությունից 1-1,5 ժամ առաջ: Նախաքննական մարմինը չի պարզել, թե որտե՞ղ և ու՞մ հետ է ոգելից խմիչք է օգտագործել լեյտենանտ Ա. Նազարյանը սպանությունից առաջ: Այս փաստի կապակցությամբ ավելացնենք, որ հանգուցյալն ուներ լյարդի հիվանդություն և ընդհանրապես խմիչք չէր օգտագործում, ինչը հաստատում են նաև վկաները: Այստեղից կարելի է ենթադրել, որ Ա. Նազարյանին ուղղակի ստիպել են խմել՝ կիրառելով բռնի ուժ:
8. Դատաբժշկական թիվ 704/34 եզրակացությանը կից գրության մեջ եզրակացության հեղինակ, դատաբժիշկ Ադամյանը նշում է, որ եզրակացությանը կից ուղարկում է դիակի թվով 19 լուսանկարները, սակայն քր. գործում տեղ են գտել դրանցից միայն 16-ը: Նախաքնական մարմինը, խախտելով օրենքը, իրեն իրավունք է վերապահել 3 լուսանկարներ թաքցնել քննությունից, ինչը քրեորեն պատժելի հանցանք է:
9. Թիվ 704/34 դատաբժշական փորձաքննության մեջ նշվում է, որ Ա. Նազարյանի մարմնի տարբեր մասերում հայնաբերվել են վերնամաշկից զուրկ հատվածներ: Իր եզրակացության հետևություններ բաժնում դրա հեղինակ դատաբժիշկ Ադամյանը գրում է, որ հնարավոր է այդ վնասվածքներն առաջանային դիակի տեղափոխման ժամանակ: Նշենք, որ նման վնասվածքներ հայտնաբերվել են նաև դիակի արտաքին զննության ժամանակ: Այս վնասվածքներն արձանագրվել են Բերդ քաղաքի հիվանդանոցին կից դատաբժշկական կենտրոնի աշխատակից դատաբժիշկ-փորձագետ Դավիթ Հարությունյանի կողմից:

Դատաբժիշկ Ադամյանի պատասխանը վերնամաշկից զուրկ հատվածների վերաբերյալ ոչ միայն սպառիչ չէ, այլև կասկածելի, քանի որ հիմնավորված չէ որևէ գիտական փաստարկով:

10. Շուրջ մեկ տարի տևած նախաքննության ընթացքում քր. գործով չի կատարվել կարևորագույն փորձաքննություններից մեկը՝ Ա. Նազարյանի հագուստները չեն ուղարկվել դատաքիմիական-դատակենսաբանական փորձաքննության, որոնք պետք է պատասխանեին հետևյալ հարցերին.

ա. Կան արդյոք հագուստների վրա արյան հետքեր, թե ոչ: Եթե այո, ապա ի՞նչ խմբի են պատկանում, կարո՞ղ էին արդյոք պատկանել Ա Նազարյանին, հագուստների ո՞ր մասում են դրանք տեղակայված:

բ. Կա՞ն արդյոք հագուստների վրա փսխման հետքեր:

գ. Կա՞ն արդյոք հագուստների վրա ուղեղանյութի հետքեր:

դ. Կա՞ն արդյոք Ա. Նազարյանի գուլպաների վրա բուսականության հետ շփման հետքեր:

ե. Է՞լ ինչպիսի հետքեր կան Ա. Նազարյանի հագուստների վրա:

11. Քր. գործից չի երևում, թե Ա. Նազարյանի սպանությունից հետո «Ղոզլու 12» մ/հ-ի զինծառայողներից ու՞մ են տարել Բերդ և Իջևան քաղաքների ՌՈ բաժանմունքներ և որքա՞ն ժամանակով: Չի երևում նաև, թե այլ վաշտի, դասակի, գումարտակի ժամկետային զինծառայողներից և սպաներից ու՞մ են տարել ՌՈ բաժիններ և քանի՞ օրով: Այսինքն, նախաքննությունը կատարվել է ոչ թափանցիկ և օրենքի խախտումներով:

2011թ.-ի սեպտեմբեր ամսից սկսված դատաքննության առաջին իսկ նիստում տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ռ. Մարտիրոսյանը բացարկ հայտնեց գործով մեղադրող դատախազ Հարություն Հարությունյանին, ով նախաքննական փուլում հանդիսացել է քր. գործը հսկող դատախազը: Բացարկը հիմնավորվում էր նրանով, որ վերը թվարկված և մի շարք այլ անօրինականությունները կատարվել են նրա հսկողության ներքո և նա չի կարող անաչառ վերաբերմունք դրսևորել սույն գործով:

Գործով դատավոր Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահ Ս. Մարդանյանը մերժեց ինչպես դատախազի, այնպես էլ նույն հիմքով իր դեմ ներկայացված բացարկը: Դատավորը օրենքի համաձայն պարտավոր էր մինչ քր. գործը վարույթ ընդունելը ծանոթանալ դրա հետ, իսկ այս դեպքում նա իրավունք չուներ նման խախտումներով կատարված նախաքննությունը ներկայացնել դատաքննության. դատավորը որևէ կերպ չի արձագանքել վերը նշված անօրինականություններին՝ պատճառաբանելով, որ դրանց կանդրադառնա ապացույցների հետազոտման փուլում: Դատավորը և մեղադրողը մերժեցին տուժող և ամբաստանյալ կողմերի միջնորդությունը, որպեսզի սահմանվի դատավարության հետևյալ ընթացակարգը՝ ապացույցների հետազոտում, վկաների, այնուհետև ամբաստանյալների հարցաքննություն: Ելնելով քրեական գործում առկա անհամապատասխանություններից ու կեղծիքներից՝ նման կարգը անհրաժեշտ էր, որպեսզի հնարավոր լիներ վկաներին հարցաքննել ապացույցների շուրջ: Մերժեցին նաև այս խնդրով պայամանավորված դատավորին և դատախազին ներկայացված բացարկը: Խնդրահարույց էր նաև վկա Արման Մնացականյանի հարցաքննությունը: Վկան հրաժարվեց տալ ցուցմունք՝ հայտարարելով, թե ոչինչ չի հիշում և առաջարկեց հիմք ընդունել նախաքննական ցուցմունքը, որը էապես հակասում է գործով կատարված փորձաքննությունների միջոցով ձեռք բերված փաստերին: Վկայի պահվածքից պարզորոշ երևում էր, որ նա վախեցած է ու կաշկանդված. նրան դատարանի դահլիճ էին ուղեկցում ՌՈ աշխատակիցները, որոնցից մեկը, արհամարելով օրենքը, նստում էր վկայի կողքը և հետևում նրա գործողություններին և խոսքերին: Կողմերին մեծ դժվարությամբ հաջողվեց հասնել նրան, որպեսզի ՌՈ աշխատակիցը դուրս հրավիրվի դատարանի դահլիճից:

Հաշվի առնելով վերը նշված այն փաստը, որ վկաներից երկուսը նախաքննական փուլում հրաժարվել էին իրենց ցուցմունքներից՝ պատճառաբանելով, որ դրանք կորզվել էին բռնությամբ ու ահաբեկումով, տուժող և ամբաստանյալ կողմի բոլոր ներկայացուցիչները միջնորդեցին դատարանին վկա Մնացականյանին հարցաքննել

զորացրվելուց հետո (Մնացականյանը զորակոչվել է 2009թ.-ի դեկտեմբերի 4-ին, կողմերը միջնորդել են նոյեմբերի վերջին)։ Դատավորը մասամբ բավարարեց միջնորդությունը և վկայի հարցաքննությունը հետաձգեց մեկ շաբաթով։

06.12.2011թ.-ին Ռ. Մարտիրոսյանին և սպանված զինվորի մայր Հասմիկ Հովհաննիսյանին ընդունեց ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը և ՀՀ ՊՆ քննչական ծառայության պետ Արմեն Հարությունյանը։ Տուժող կողմը փորձեց նախարարին ներկայացնել Արմեն Հարությունյանի գլխավորած ծառայության երրորդ քննչական բաժնի և ՀՀ ՌՈ Տավուշի մարզի աշխատակիցների կողմից նախաքննության ընթացքում կատարված անօրինականությունները, որոնց մասին նախարարը չցանկացավ լսել։ Նա հայտարարեց, որ կարող է օգնել միայն իր իրավասության սահմաններում։ Ռ. Մարտիրոսյանը խնդրեց նախախարին օբյեկտիվ դատաքննության շահերից ելնելով զորացրել զինծառայող Ա. Մնացականյանին։ Նախախարը դրա վերաբերյալ համապատասխան ցուցում տվեց հանդիպմանը ներկա իր ենթականերին։ Սակայն, հաջորդ երեք շաբաթների ընթացքում նա այդպես էլ չզորացրվեց։ Այս ողջ ընթացքում վկան շարունակում է տալ հակասական և խուսափողական պատասխաններ։

Տիգրան Համբարձումյանի սպանության գործը

2011թ.-ի հունիսի 28-ին ՀՀ ՊՆ թիվ 54809 զորամասում սպանվել է Տիգրան Համբարձումյանը: Հաջորդ օրը փաստով հարուցվել է թիվ 905543 քր. գործը՝ համաձայն որի պարտադիր ժամկետային զին. ծառայող շարքային Տ. Համբարձումյանը 2011թ.-ի հունիսի 28-ին ժամը 18:30-ի սահմաններում ինքնակամ լքել է զորամասը: Կատարված որոնողական աշխատանքների արդյունքում 2011թ.-ի հունիսի 29-ին ժամը 13:15-ին շարքային Տ. Համբարձումյանի դիակը հայտնաբերվել է զորամսին հարակից անտառում՝ զորամասից մոտ 100մ հեռավորության վրա: Հիմնվելով զինվորների տված ցուցմունքների վրա՝ նախաքննական մարմինը կատարվածը որակել է որպես ինքնասպանություն, գործ հարուցել քր. օր.-ի 111 հոդվածի առաջին մասով, և քննությունն ընթացել է միայն սույն վարկածով: Ըստ նախաքննության տվյալների՝ Համբարձումյանի դին նշված վայրում հայտնաբերվել է գլխի և պարանոցի շրջաններում մաշկային և մկանային ծածկույթի բացակայությամբ: Ըստ փորձագետի՝ դիակի այս հատվածները հոշոտել է շունը, քանի որ հանգուցյալի հագուստների վրա հայտնաբերվել է շան երեք մազ: Չնայած զինվորի հագին հոշոտման պահին եղել է անթև շապիկ՝ շունը, ուտելով զինվորի քիթը, կոկորդը, գլխի մաշկը, ականջները և այլն, ձեռք չի տվել ձեռքերին և ուսերին: Դիակից տասը մետր հեռավորության վրա հայտնաբերվել են Տ. Համբարձումյանի հագուստները, որոնց թվում եղել է ամառային զինվորական վերնաշապիկը, որի վրա, ըստ փորձագետի, առկա էին տարածուն արյան հետքեր: Դիակից հինգ-վեց մետր հեռավորության վրա հայտնաբերվել է “РАПИРА” տեսակի ածելու տուփ և ածելի, որը, ըստ նախաքննական մարմնի, այն գործիքն է, որով Տ. Համբարձումյանը ինքնասպան է եղել՝ կտրելով իր ձախ նախաբազկի արյունատար անոթները, զարկերակը, մկանները, ջիլերը 2սմ խորությամբ: Դատաբժշկական թիվ 610/19 փորձագիտական եզրակացության մեջ նշվում է, որ հանգուցյալը ինքնասպանություն գործելուց անհայտ ժամանակ առաջ օգտագործել է ոգելից խմիչք. նրա մկանի նմուշի մեջ հայտնաբերվել է 0,7 պրոմիլե էթիլ սպիրտ, որը համապատասխանում է թեթև խմածության աստիճանին:

Դեպքից շուրջ երեք ամիս անց՝ հոկտեմբեր ամսին, տուժողի իրավահաջորդ Բենիկ Համբարձումյանի և նրա ներկայացուցիչ Հելսինկյան Ասոցիացիայի փորձագետ Ռ. Մարտիրոսյանի բողոքներից հետո ՀՀ զին. դատախախազ Գ. Կոստանյանը նրանց հրավիրել է Գորիս քաղաք սույն քր. գործով գործնական քննարկման: Հանդիպմանը մասնակից են եղել նախաքննությունը իրականացնող ՀՀ ՊՆ Քննչական վարչության պետ գեներալ Արմեն Հարությունյանը, ինչպես նաև մարզային քննչական բաժնի ու դատախազության աշխատակիցները: Տուժող կողմի դիտողությունները հետևյալն էին.

1. նախաքննական մարմինը մերժել է օրենքով սահմանված կարգով գործով կատարված փորձագիտական եզրակացությունների պատճենները, դեպքի վայրի զննության, դիակի արտաքին զննության արձանագրությունները, դրանց կից լուսանկարները տրամադրելու տուժողի իրավահաջորդի միջնորդությունները:

   Դատախազը կարգադրեց բավարարել տուժող կողմի պահանջները և տրամադրել նշված փաստաթղթերը, սակայն ոչ լուսանկարների կրկնօրինակները: Հանդիպման ավարտից հետո, սական, գործով քննիչը հրաժարվեց տալ փաստաթղթերի պատճենները՝ հայտարարելով, որ զին. դատախազը իր հետ առանձնազրույցի ժամանակ հրամայել է դրանք տուժողի իրավահաջորդին և նրա ներկայացուցչին չտրամադրել: Շաբաթներ անց, երբ տուժողի հայրը կրկին մեկնեց Գորիս քաղաք և ի թիվս այլ միջնորդությունների, կրկին պահանջեց իրեն տրամադրել դեպքի վայրի և դիազննության համատեղ արձանագրության պատճենը, քննիչը պատճենը չտրամադրեց, սակայն թույլ տվեց, որպեսզի սպանվածի հայրը նստի և արտագրի երկու թերթանոց տպագիր արձանագրությունը:

2. ըստ նախաքննական մարմնի՝ զորամասի զինծառայողները 2011թ.-ի հունիսի 28-ին, զորամասին կից տարածքում մանրակրկիտ զննում կատարելով, Տ. Համբարձումյանի դին չեն հայտնաբերել և հայտնաբերել են միայն դեպքի հաջորդ օրը: Սույն փաստը վկայում է այն մասին, որ նշված վայրը դեպքի վայր համարվել չի կարող, քանի որ Համբարձումյանի դիակը այստեղ է տեղափոխվել միայն սպանության հաջորդ օրը: Սա անուղղակի ապացույց է, որ տեղի ունեցածը սպանություն է:

3. քննիչը մանրակրկիտ քննություն է իրականացրել դեպքից շուրջ յոթ ամիս առաջ տեղի ունեցած մի միջադեպի մասին, որը գործին վերաբերող որևէ փաստ չի պարունակել, սակայն այդպես էլ չի կարողացել պարզել, թե դեպքից որքա՞ն ժամանակ առաջ, որտե՞ղ և ու՞մ հետ է Տ. Համբարձումյանը ոգելից խմիչք օգտագործել: Քննիչը չի պարզել, թե դեպքից կարճ ժամանակ առաջ ովքե՞ր են Տ. Համբարձումյանին հասցրել վերոհիշյալ փորձաքննությամբ հայտնաբերված մարմնական վնասվածքները: Չի պարզվել, թե սպանությունից առաջ ու՞մ հետ է բախվել հանգուցյալը, և ո՞րն է եղել նրա կողմից՝ զորամասը լքելու պատճառը:
4. դատաբժշկական թիվ 610/19 եզրակացությունը թերի է: Նախ, դատաբժիշկը չի կոնկրետացնում, թե դիահերձումից որքան ժամանակ առաջ է վրա հասել Տ. Համբարձումյանի մահը: Ըստ նրա՝ զինվորի մահը վրա է հասել 24 և ավելի ժամ առաջ, այսինքն՝ ինչպես հունիսի 28-ին, ինչը պնդում է քննիչը, այնպես էլ հունիսի 27-ին: Երկրորդ, չնայած նրա, որ հարբածության աստիճանը սովորաբար որոշվում է արյան մեջ առկա ալկոհոլի քնակությամբ, սույն գործով փորձագետը գերադասել է հետազոտել մկանը: Այս կարգի հետազոտությունը ենթադրում է լրացուցիչ հարցի պատասխան՝ եթե հանգուցյալի մկանի մեջ ալկոհոլի քանակը 0,7 պրոմիլե է, ապա որքա՞ն է այն արյան մեջ: Երրորդ, դատաբժիշկը չի արձանագրել Տ. Համբարձումյանի ուսագոտու շրջանի վնասվածքը, որի առկայության մասին վկայում է դիակի արտաքին արձանագրությունը:
5. ըստ մատնադրոշմային փորձաքննության, ածելու վրա մատնահետք չի հայտնաբերվել, ինչը ուղղակիորեն հակասում է ինքնասպանության վարկածին:

Տուժող կողմի այս և դատաբժշկական եզրակացությանը վերաբերող մի շարք այլ դիտողությունները հիմնավոր համարելով՝ զին. դատախազը ցուցում է տվել գործով քննիչին հարցաքննել եզրակացության հեղինակ դատաբժշկին: Դեպքից մեկ ամիս անց տուժող կողմը միջնորդեց, որպեսզի իրեն ներկայացվի դատաբժշկի հարցաքննության արձանագրության պատճենը: Ի պատասխան այս միջնորդությանը՝ գործող քննիչ

Հակոբջանյանը բանավոր հայտարարեց, որ ինքը չի կատարել զին. դատախազի ցուցումը, չի հարցաքննել դատաբժշկին, քանի որ նպատակահարմար չի համարել:

6. սպանության մասին է վկայում Տ. Համբարձումյանի վերնաշապիկը: Եթե Համբարձումյանը այն հաներ մինչև ինքնասպան լինելը, ապա դրա վրա վերը նշված արյան հետքերը չէին մնա: Իսկ ինքնասպանության պահին, նա ուղղակի անկարող պետք է լիներ վերնաշապիկը հանելու, քանի որ զարկերակը կտրելուց անմիջապես հետո նրա մոտ, ըստ դատաբժշկի, առաջացել է ուժեղ արնահոսություն և հեմորագիկ շոկ:

2011թ.-ի օգոստոսի 29-ին տուժող կողմը միջնորդություն է ներկայացրել նախաքննությունը իրականացնող ՀՀ ՊՆ ՔԾ 9-րդ կայազորային քննչական բաժին, որպեսզի մազի նմուշներ վերցվեն զորամասի հրամանատարին պատկանող շնից, որին տուժողի հայրը տեսել է զորամասի տարածքում զինվորների ուղեկցությամբ զբոսնելիս որդու դիակը հայտնաբերելու օրը, և դրանք համեմատվեն դեպքի վայրից հայտնաբերված շան մազերի հետ: Տուժող կողմը ունի կասկած, որ հենց այդ շունն է հոշոտել Տ. Համբարձումյանի դիակը, քանի որ դիակի զննությունից պարզորոշ է դառնում, որ զինվորի մարմնի հոշոտումը ուղղորդվել է ինչ-որ անձի կողմից: Հակառակ դեպքում շունը կհոշոտեր նաև հանգուցյալի ձեռքերն ու ուսերը, և առաջին հերթին դրանք, քանի որ զինորին հայտնաբերել են դեմքով գետնին հենված ձեռքերը՝ գլխավերևում:

Իր 2011թ.-ի սեպտեմբերի 13-ի որոշմամբ քննիչ Հակոբջանյանը մերժել է տուժող կողմի միջնորդությունը այն հիմքով, որ զորամասի տարածքում որևէ մեկը շուն չի պահում, զորամասին շուն հատկացված չէ, իսկ զորամասի հրամանատարի շունը ընտանի է և առանց ուղեկցության տնից դուրս չի գալիս: Ըստ քննիչի՝ այդ շունը երբեք զորամասի տարածքում չի պահվել: Այս հակասության շուրջ քննիչը կատարել է առերեսում տուժածի հոր և այն զինվորների միջև, ում հայրը տեսել էր սպանության օրը և ովքեր, ի պատասխան նրա հարցին, ասել են, որ շունը զորամասի հրամանատարինն է, ով

արձակուրդում է և շանը վստահել է իրենց: Առերեսման ժամանակ զինվորները պնդել են, որ չեն ճանաչում Տ. Համբարձումյանի հորը, և նրա հետ երբեք չեն զրուցել:

ԼԵՍԲՈՒՀԻ, ԳԵՅ, ԲԻՍԵՔՍՈՒԱԼ, ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ[42]

[42] Զեկույցի այս մասը պատրաստել է «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք հասարակական կազմակերպությունը Հայաստանում»

ԼԳԲՏ մարդկանց իրավունքների խախտմանը կարելի է ականատես լինել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: ԼԳԲՏ մարդիկ փաստում են, որ իրենց նկատմամբ խտրականություն կա կրթական հաստատություններում և դեպքեր կան, երբ ուսուցիչը սկսել է նրանց ձեռք առնել կանացի (արական սեռին պատկանելու դեպքում) կամ տղամարդկային լինելու համար (իգական սեռին պատկանելու դեպքում), իրենց սեռական կողմնորոշման պատճառով դուրս են թողել համալսարանից: Գիտական հոդվածներն այս հարցի շուրջ ողջունելի չեն, քանի որ դասախոսների դիրքորոշումն այն է, որ դա այլասերվածություն է, և անձը, ով ցանկանում է աշխատել այս թեմայի շուրջ, այլասերված է: Նույնասեռական ուսանողին թույլ չէին տվել աշխատել նույնասեռականության թեմայի շուրջ, քանի որ դասախոսը գտնում էր, որ հաշվի առնելով ուսանողի սեռական կողմնորոշումը, նա չի կարող լինել օբյեկտիվ:

Աշխատանքի անցնելը ԼԳԲՏ մարդկանց համար մնում է կյանքի ամենախնդրահարույց ասպեկտներից մեկը, քանի որ գործատուները հրաժարվում են աշխատանքի վերցնել մեկին, ով չի թաքցնում իր սեռական կողմնորոշումը, կանացի է (գեյ) կամ տղամարդկային (լեսբուհի): Տրանսգենդեր անձինք հնարավորություն չունեն արտահայտելու իրենց գենդերային ինքնությունը, և չկա համապատասխան օրենք, որը թույլ կտա տրանսսեքսուալ մարդկանց փոխել իրենց սեռը: Շատ հաճախ ԼԳԲՏ մարդիկ հրաժարվում են անհրաժեշտության դեպքում դիմել առողջապահական հաստատությունների, քանի որ համոզված չեն, որ այնտեղ կպահվի գաղտնիության սկզբունքը: Քաղաքացիական հասարակության կազմակերպություններին կապվելու դեպքում նրանք ուղղորդվում են այն բժիշկների մոտ, ովքեր վստահելի են և կազմակերպությունը նրանց հետ համագործակցության փորձ ունի, հակառակ դեպքում ռիսկը մեծ է, որ անձը կենթարկվի խտրականության և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:

Բանակում գոյություն ունեցող չգրված օրենքների պատճառով, որոնք ԼԳԲՏ խմբի մարդկանց նկատմամբ սերմանում են խտրական մոտեցում, այդ համակարգը

դարձնում են ամենախնդրահարույց կառույցներից մեկը: Հիմնականում լրատվամիջոցների մոտեցումը ԼԳԲՏ մարդանց նկատմամբ կոմնակալ է և հիմնված կարծրատիպերի, նախապաշարմունքների վրա և չունի գիտական կամ ժամանակակից մոտեցում: Կառավարության կառույցների կողմից չկա քաղաքական կամք՝ պաշտպանելու ԼԳԲՏ իրավունքները, և շատ հաճախ այդ կառույցները իրենք են հանդես գալիս իրավախախտների դերում:

Քաղաքացիական հասարակության դիրքորոշումը ԼԳԲՏ անձանց նկատմամբ նույնպես միասնական չէ: Չնայած այն հանգամանքին, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են աշխատել ԼԳԲՏ մարդկանց իրավունքների պաշտպանության ոլորտում և գործողություններ ձեռնարկեն փոփոխության հասնելու համար, կառավարության, հասարակության և քաղաքացիական հասարակության մի մասի կողմից չկա որևէ աջակցություն:

Թեև վերոնշյալ ասպեկտներում չկան արմատական փոփոխություններ, այս զեկույցում մենք ուշադրությունը կսևեռենք հասարակական կյանքի մի քանի ոլորտների վրա, և կներկայացնենք Հայաստանի Հանրապետությունում 2011թ-ին գրանցված ԼԳԲՏ անձանց առավել հաճախ պատահող հիմնահարցերն ու խնդիրները:

Հանրային վերաբերմունք

«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» (ՓԻՆՔ Արմենիա) ՀԿ-ն անցկացրել է «ԼԳԲՏ անձանց հանդեպ հանրային վերաբերմունքը Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում 2011» հետազոտությունը: Ըստ հետազոտության արդյունքների՝ հարցվածների ընդամենը 6.3%-ն է ԼԳԲՏ անձանց համարում խոցելի խումբ Հայաստանում: Հարցվածների 18.6%-ը համարում է «ոչ ավանդական» սեռական կողմնորոշումը հիվանդություն, և հարցվածների 72,1%-ի մոտ կարող է դիտարկվել բացասական վերաբերմունք այս սոցիալական խմբի նկատմամբ, և այդ հարցվածների մեծամասնության համար ԼԳԲՏ անձ լինելու ընդունելի լինելը նույնպես կախված է ազգային ինքնությունից: Հետևաբար, հարցվածների 52,7%-ը կարծում է որ ԼԳԲՏ անձ

լինելը հարիր չէ հայ ազգին, 66,9%-ը կարծում է, որ ԼԳԲՏ անձինք պետք է դատապարտվեն հասարակության կողմից: Հարցվողները, որոնք ունեն անհանդուրժող վերաբերմունք և դիրքորոշում ԼԳԲՏ անձանց նկատմամբ, զերծ են մնում նրանց հետ շփումից: Նրանցից 55.3%-ը, եթե իմանար, որ իր ծանոթը, ընկերը կամ բարեկամը ԼԳԲՏ անձ է, կդադարեցներ նրա հետ շփումը: ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրենց վերաբերմունքն արտահայտած հարցվողների 87,6%-ը նշել են, որ չեն օգտվի այն սպասքից, որից նախկինում օգտվել է ԼԳԲՏ անձ: Հետազոտության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ ընդհանուր առմամբ հարցվածների 49,6%-ը հանդուրժող չեն ԼԳԲՏ անձանց նկատմամբ: Հարցվողների 74,5%-ի համոզմամբ պետությունն իրականում ոչինչ չի անում ԼԳԲՏ անձանց նկատմամբ տարվող իր քաղաքականության մեջ, ուստի 71.5%-ը կարծում է, որ պետությունն այդ բացը պետք է լրացնի նրանց դեմ պայքարելու միջոցով: Ուշագրավ է այն, որ այս համատեքստում հարցվողները ոստիկանությանը առավել շատ դիտարկում են ոչ թե որպես իրավապահ, այլ մարդու իրավունքների դեմ պայքարող մարմին:

Հարցվողների մեծամասնությունը չունի բավարար գիտելիք սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին և ԼԳԲՏ անձանց վերաբերյալ նրանց ունեցած գիտելիքները կարծրատիպային են և դուրս գիտական բացատրությունների շրջանակից: Հարցվողները ԼԳԲՏ անձանց մասին առավել շատ տեղեկատվություն ստանում են հեռուստատեսությունից. ժամանցային ծրագրերից և հաղորդումներից՝ 31% և 22.6%՝ տեղեկատվական հաղորդումներից:

ԼԳԲՏ մարկանց ծաղրում են, նրանք հաճախ ենթարկվում են ոտնձգությունների հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, հատկապես այն դեպքերում, երբ նրանց արտաքին տեսքը համապատասխանում է ԼԳԲՏ անձանց վերաբերյալ հասարակության մեջ առկա կարծրատիպերին և նախապաշարմունքներին: Հասարակության արձագանքը նրանց նկատմամբ կարող է տատանվել կոպիտ անուններ կոչելուց մինչև ֆիզիկական բռնության կիրառմամբ, որը կարող է դրսևորվել մեկանգամյա գործողությամբ կամ կրի մշտական բնույթ հարևանների կամ

բարեկամների, նույն սոցիալական միջավայրի մարդկանց կողմից: Այս դեպքերում բռնության կամ չարաշահումների զոհերը հրաժարվում են դիմել իրավապահ մարմիններին՝ փաստելով, որ այդ ամենը կշարունակվի այնտեղ: Այսպիսի դեպքերի վկայությունը կարող են գտնվել այն դեպքերում, երբ շահառուները դիմում են ՀԿ-ին իրավաբանական ծառայություններ ստանալու և իրենց իրավունքները պաշտպանելու համար:

Եկեղեցի

Ի տարբերություն նախորդ տարիների, այս տարի եկեղեցին անրադարձավ մեր հասարակությունում ԼԳԲՏ մարդկանց հիմնահարցին և՛ ԶԼՄ-ների, և՛ մոլությունների թեմայով քննարկման կազմակերպմամբ՝ այդ թվում ներառելով նույնասեռականությունը որպես մոլուցքի տեսակ: Եկեղեցու ներկայացուցիչների կողմից կազմակերպված քննարկման ընթացքում թմրանյութերի, ալկոհոլի և ծխախոտի նկատմամբ մոլության հետ մեկտեղ գլխավորապես քննարկվեց «արվամոլությունը»: Դրա հիմնական նպատակը քննարկման մասնակիցներին բացատրելն էր, որ նույնասեռականությունը մոլության տեսակ է, և մարդիկ իրենք են ընտրում «ունենալ մոլուցք տղամարդկանց նկատմամբ»: Նույնասեռականությունը ներկայացվում էր որպես անհատի մեղսավոր ընտրություն, ով հակված է նույն սեռի այլ անձի նկատմամբ մոլուցք ունենալ:

Քննարկումից բացի քահանաները տարբեր հարցերի շուրջ տրված հարցազրույցների և կազմակերպված մամլո ասուլիսների ժամանակ հայտարարություններ են կատարել: ԶԼՄ-ների միջոցով եկեղեցու ներկայացուցիչները ներկայացնում են ԼԳԲՏ մարդկանց որպես սպառնալիք մեր երկրի համար՝ նշելով, որ դա «Եվրոպական արժեքների ու ավանդույթների» ուղղակի հետևանք է: Եկեղեցու մոտեցումը նույնասեռականների նկատմամբ այն է, որ նրանք Հայաստան են ներխուժել «Արևմտյան ուժերի» միջոցով, որպեսզի ոչնչացնեն հայկական ավանդույթներն ու արժեքները: Թեև լրատվամիջոցների գործունեության հիմնական շեշտը նույնասեռականությունը և դրա

հետ կապված հարցերը չեն, եկեղեցու ներկայացուցիչներն օգտագործում են թեման բարձրացնելու այդ հնարավորությունը և ներկայացնում են ԼԳԲՏ մարդկանց որպես հասարակության մեջ առկա մի շարք սոցիալական խնդիրների աղբյուր: Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ եկեղեցին հակված է ներկայացնելու ԼԳԲՏ մարդկանց որպես մի խումբ, որն արհեստականորեն ստեղծվել է Հայաստանում, և որի հիմնական նպատակն է այլասերել գոյություն ունեցող արժեքները, թուլացնել հասարակության միասնականությունը և տանել հայերին դեպի անբարոյականություն: Եկեղեցու դիրքորոշումն այս հարցում այն է, որ դա մեղք է, բոլոր ԼԳԲՏ մարդիկ մեղսագործ են և ապրում են հակաքրիստոնեական կյանքով: Հիմնական զուգահեռներն անցկացվում են «Սոդոմի և Գոմորի» հետ, և նույնասեռականությունը ներկայացվում է որպես Սոդոմական մեղք:

Կրոնական փոքրամասնությունները ևս սպառնալիք են համարվում հայ ժողովրդի և Հայ առաքելական եկեղեցու համար և նրանց հիմնական նպատակն է խաթարել Առաքելական եկեղեցու դերը: Այս համատեքստում եկեղեցու ներկայացուցիչները օգտագործում են հնարավորությունը զուգահեռներ անցկացնելու ԼԳԲՏ մարդկանց հետ և ներկայացնում են նրանց որպես վտանգ Հայաստանի ազգային անվտանգության համար, որոնք, կրոնական փոքրամասնությունների հետ միասին Հայաստան եկան այն ոչնչացնելու համար: Եկեղեցին հեղինակություն է հանդիսանում մեր հասարակության մեծամասնության համար: Այսպիսով, եկեղեցու կողմից նման հայտարարությունները խթանում են թշնամանքը ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ և հասարակության համար ամուր հիմք են պատրաստում այս սոցիալական խմբի դեմ պայքարելու համար՝ փաստելով եկեղեցու հեղինակությունը և այդ հաստատության կողմից արված փաստարկները:

ԶԼՄ-ներ

ԶԼՄ-ների ներկայացուցիչները մեծ հետաքրքրություն ունեն ԼԳԲՏ համայնքի նկատմամբ: Ցավոք, շատ դեպքերում ԼԳԲՏ հիմնահարցերի վերաբերյալ կողմնակալ

լուսաբանումները՝ հիմնված լրագրողների նախապաշարմունքների և կարծրատիպերի վրա, չունեն գիտական հիմք և ձևակերպված են սկանդալային ոճով: ԼԳԲՏ մարդկանց հիմնահարցերը շոշափվում են բոլոր տեսակի ԶԼՄ-ների կողմից: Շատ հաճախ այս թեման իր լուսաբանումն է գտնում էլեկտրոնային լրատվամիջոցներում:

Ընդհանուր առմամբ, զանգվածային լրատվամիջոցներում ԼԳԲՏ համայնքին վերաբերող հարցերը լուսաբանվում են վիրավորական կերպով, ինչը հաստատում է գոյություն ունեցող կարծրատիպերն ու նախապաշարմունքները ԼԳԲՏ համայնքի նկատմամբ: Տրամադրված տեղեկատվությունը հիմնված չէ փաստերի վրա, չունի ապացույցներ և շատ հաճախ կարող է լինել ասեկոսների և ապատեղեկացվածության արդյունք: Բացի այդ, ԼԳԲՏ մարդկանց, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության մասին ոչ հուսալի և սուբյեկտիվ տեղեկատվության տարածումը հոդվածների, հեռարձակումների, հեռուստատեսային ծրագրերի միջոցով ստորացնում են ԼԳԲՏ մարդկանց և նպատակ ունեն ագրեսիա տարածել նրանց նկատմամբ: Մեծամասամբ ԼԳԲՏ անձանց հիմնահարցերը ներկայացված են որպես մի երևույթ, որը դեմ է հայկական ավանդույթներին, արժեքներին, և չի կարող ունենալ իր տեղը հասարակության մեջ: Ավելին, շատ հաճախ այն դիտարկվում է ազգային անվտանգության շրջանակներում:

Այն դեպքում, երբ լուսաբանվում են մանկապղծության և սեռական բռնությունների հետ կապված հարցեր, լրագրողները փորձում են կապել դրանք նույնասեռականության և ԼԳԲՏ մարդկանց հետ և մեղադրել նրանց նման տեսակի գործողությունների մեջ: ԶԼՄ-ները ներկայացնում են ԼԳԲՏ մարդկանց որպես մանկապիղծներ և մեղադրում են նրանց սեռական բռնության մեջ:

Մի շարք դեպքերում հարցազրույց վերցնելիս լրագրողները չեն պահպանել ԼԳԲՏ մարդկանց գաղտնիությունը, և անտեսել են այդ անձի ձայնը փոխելու և դեմքը ցույց չտալու մասին նախնական պայմանավորվածությունը: Այս դեպքերից ոչ մեկում լրագրողները չեն պատժվել, քանի որ այդ մարդիկ վախենում էին հրապարակայնությունից:

Համեմատած այլ տեսակի ԶԼՄ-ների հետ, հեռուստատեսությունը ամենահոմոֆոբն է: ԼԳԲՏ մարդկանց հետ կապված բոլոր հեռարձակումները տարածում են ատելության կոչեր և խթանում են նրանց նկատմամբ ատելության ոճիրների իրագործումը:

Ոստիկանություն

Ոստիկանության կողմից նույնասեռական և տրասվիստիտ անձանց իրավունքների խախտումները հիմնականում տեղի են ունենում այգում, որտեղ հավաքվում են նույնասեռական և տրանսվիստիտ մարդիկ: Ոստիկանությունը պարեկային ծառայություն է կատարում այգու տարածքում: Անցորդների կողմից նույնասեռական կամ տրանսվեստիտ անձանց բռնության ենթարկելու դեպքում ոստիկանությունը չի ձեռնարկում որևէ գործողություն այն դադարեցնելու և բռնություն կիրառողին պատասխանատվության համար: Նույնասեռական և տրասվեստիտ անձինք, որոնք սովորաբար գնում են այդ այգի, նշել են, որ ոստիկանությունում ֆիքսել են իրենց հեռախոսահամարները, և երբ իրենք զանգահարում են բռնության կամ ծեծի դեպքում, ոստիկանությունը չի պատասխանում:

Կան գրանցված դեպքեր, երբ ոստիկանները անհանգստացնում են այգում գտնվող նույնասեռականներին և տրանսվեստիտներին: Ոստիկանությունը նրանց պրովոկացիայի է ենթարկում և ապա բռնության:

<u>Դեպք</u>

Քաղաքացու հագուստով մի ոստիկան ոստիկանական մեքենայով մոտեցել է այգու մոտ կանգնած մի տրանսվեստիտ անձնավորության և սկսել հայհոյել և հարցնել, թե ինչ էր անում նա այնտեղ՝ օգտագործելով վիրավորական և նվաստացուցիչ խոսքեր: Ոստիկանը դուրս է եկել մեքենայից և սկսել ծեծել նրան: Ապա նա վերադարձել է իր մեքենան և հեռացել: Զոհը գնացել է ոստիկանական բաժանմունք՝ բողոք ներկայացնելու, սակայն ոստիկանությունում հրաժարվել են ընդունել իր բողոքը: Թեև տուժողին տրամադրվել է իրավաբանական ծառայություն ՀԿ-ի կողմից, նա

հրաժարվեց շարունակել գործը, քանի որ վախենում էր ոստիկանության գործողություններից, որոնք կարող էին նախաձեռնվել հետագայում:

Ոստիկանությունը այգում հետևում է նույնասեռական և տրասվեստիտներին, և երբ տեսնում են նրանց տղամարդու հետ, սպառնում են այդ անձին, որ եթե իրենց գումար չտա, ապա կզանգեն նրա բարեկամներին, կայցելեն հարևաններին և բոլորին կասեն, որ նա այգում է եղել նույնասեռականի կամ տրանսվեստիտի հետ: Չնայած տուժողները գիտակցում են, որ ոստիկանները ոտնահարում են իրենց իրավունքները՝ նրանք վախենում են բողոքարկեն, քանի որ չունեն անվտանգության երաշխիքներ: Բացի այդ, եղել է նաև դեպք, երբ տրանսվեստիտը բողոք է ներկայացրել ընդդեմ ոստիկանի, և ոստիկանը նրան գումար է առաջարկել իր բողոքը ետ վերցնելու համար: Չնայած, որ տուժողը չի վերցրել գումարը, նա հետ է վերցրել իր բողոքը կրկին անվտանգության երաշխիքներ չունենալու պատճառով:

Բացի վերոնշյալ դեպքերից, կան նաև դեպքեր, երբ առանց որևէ իրավաբանական հիմնավորման նույնասեռական կամ տրանսվեստիտ անձանց տարել են ոստիկանական բաժանմունք: Այնտեղ նրանց պահում են մի քանի ժամ, և բաց են թողնում այն ժամանակ, երբ տուժողները նրանց կաշառք են տալիս: Սովորաբար ոստիկանության այս գործողությունները ուղեկցվում են բանավոր և ֆիզիկական բռնությամբ: Տեղեկություններ չկան, թե արդյոք ոստիկանության այդ գործողությունները հավանություն են ստացել բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, թե նրանք դա անում են սեփական նախաձեռնությամբ: Իրենց իրավունքների պաշտպանության նպատակով ՀԿ-ն գրանցում է մարդու իրավունքների ոտնահարման այսպիսի դեպքերը և փորձում է կանխել դրանք ջատագովության միջոցով, քանի որ իրավունքների պաշտպանությունը հնարավոր չէ իրականացնել դատական կարգով՝ այս պահին տուժողների կողմից պաշտոնական դիմումների բացակայության պատճառով:

2011թ.-ի դեկտեմբերին ոստիկանությունը 10 տրանսվեստիտների բերման է ենթարկել մաշկային և վեներական հիվանդությունների դիսպանսեր՝ սեռական ճանապարհով

փոխանցվող վարակների նկատմամբ հարկադիր ստուգման: Ստուգումից հետո նրանցից 3-ը ազատ են արձակվել, իսկ մյուսները բերման են ենթարկվել ոստիկանական բաժանմունք, որտեղ նրանք պահվել են մինչև առավոտ: Ոստիկանները տուժողներին ներկայացրել են, որ կատարում են վերադաս մարմիններից ստացված հրամանն, այն է՝ ստիպեն նույնասեռական և տրանսվեստիտ անձանց լքել այգին և չհավաքվել այտեղ, և որ սա նպատակին հասնելու առաջին քայլն էր: Չնայած, որ տուժողները չհամաձայնեցին բողոք ներկայացնել՝ ՀԿ-ն դիմում է ուղարկել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ և Գլխավոր դատախազություն: Երկու հաստատությունների պատասխանն այն էր, որ նրանք դեպքը ուղղորդել են Հայաստանի Հանրապետության ոստիկանություն: Տվյալ դեպքը դեռ ընթացքի մեջ է:

Այս դեպքը հիմք ծառայեց ԶԼՄ-ների տարածած այն տեղեկատվությանը, որ Երևան քաղաքի նոր քաղաքապետ Տարոն Մարգարյանը որոշել է <<մաքրել>> այգին և վերադարձնել այն <<նորմալ>> քաղաքացիներին: Չնայած, որ քաղաքապետի կողմից նման պաշտոնական հայտարարություն չի արվել՝ քաղաքապետարանի կողմից այլ տեղեկատվություն չի տրամադրվել, որը կհաստատեր կամ կմերժեր այն, և կներկայացներ քաղաքապետի իրական դիրքորոշումն այս հարցի շուրջ: Քաղաքապետարանը հրաժարվում է լրագրողներին տալ ցանկացած մեկնաբանություն: Բացի այդ ՀՀ ոստիկանության պետ Վովա Գասպարյանը հարցազրույց է տվել, որի ժամանակ լրագրողների այն հարցին, թե ինչ է նա անելու այգում հավաքվող նույնասեռական և տրանսվեստիտ անձանց հետ, նա պատասխանել է, որ դեռ չի անրադարձել, բայց կանրադառնա այդ հարցին և ասել է լրագրողներին, որ ինքն աջակցում է այս մարդկանց դեմ նրանց պայքարին:

ԼԳԲՏ իրավունքների պաշտպանության հիմնական դժվարությունը մնում է այն փաստը, որ տուժողները վախենում են բողոք ներկայացնելուց և իրենց գործերի հրապարակայնացման հնարավորությունից: Այսպիսով, ջատագովությունը մնում է

ԼԳԲՏ իրավունքների պաշտպանության հիմնական ռազմավարությունը: ՁԼՄ - ների և հասարակության համար սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին իրազեկության բարձրացման անհրաժեշտություն կա: Անհրաժեշտ են ինստիտուցիոնալ փոփոխություններ՝ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ԼԳԲՏ իրավունքների պաշտպանության իրագործմանը ուղղված: Այս առումով, կան նախաձեռնություններ և ջանքեր են գործադրվում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից, որոնք ունեն տեղական եւ միջազգային կազմակերպությունների աջակցությունը: Իրականացվում են բազմաոլորտ աշխատանքներ՝ ուղղված ԼԳԲՏ իրավունքների պաշտպանության հիմնահարցերին կառավարության ուշադրությանը սևեռելուն:

ԴԱՎԱՆԱՆՔԻ ԵՎ ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Կրոնական ազատությունը պաշտպանված է Սահմանադրությամբ, սակայն այլ օրենքներ ու հայեցակարգեր սահմանում են որոշ սահմանափակումներ փոքրամասնական կրոնական խմբերի անդամների կրոնական ազատության նկատմամբ:

Ընդհանուր առմամբ, կառավարությունը կրոնական ազատության նկատմամբ գոյություն ունեցող իրավական սահմանափակումները չի կիրառել: Այս զեկույցի հաշվետու ժամանակահատվածում կառավարության կողմից կրոնական ազատության նկատմամբ հարգանքի մասով փոփոխություն չի եղել: Կրոնի ազատությունը պաշտպանված է Սահմանադրությամբ, սակայն այլ օրենքներում ու հայեցակարգերում կան որոշ սահմանափակումներ փոքրամասնական կրոնական խմբերի անդամների կրոնական ազատության նկատմամբ: Օրենսդրությամբ հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների), այդ թվում և կրոնական խմբերի գրանցումը պարտադիր չէ, սակայն միայն գրանցված կազմակերպություններն են, որ ունեն իրավաբանական անձի կարգավիճակ: Չգրանցված կառույցները չեն կարող հրատարակել 1000-ից ավել տպաքանակով թերթեր ու ամսագրեր, վարձակալել տարածք ժողովների համար, հեռարձակել հաղորդումներ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով, կամ պաշտոնապես հովանավորել իրենց այցելուների համար վիզաների ստացումը, չնայած անդամները դա կարող են անել որպես անհատ: Գրանցման պայմաններին բավարարելու համար կրոնական կազմակերպությունները պետք է «զերծ լինեն նյութապաշտությունից և ուղղված լինեն դեպի զուտ հոգևոր ոլորտներն», ունենան առնվազն 200 հոգի չափահաս անդամներ և առաջնորդվեն «պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի» ուսմունքով: Գրանցման պահանջները չեն վերաբերում ազգային փոքրամասնությունների կրոնական կազմակերպություններին: Կրոնական կազմակերպությունների գրանցումն իրականացվում է Պետական ռեգիստրում: Ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով վարչությունը հետևում է կրոնական հարցերին և կատարում է փորձագիտական դեր գրանցման գործընթացում: Գրանցվելու դիմում ներկայացրած որևէ կրոնական խմբի գրանցումը կառավարության

կողմից մերժելու մասին հաղորդումներ չեն եղել: Սահմանադրությունը ճանաչում է «Հայաստանյայց Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»: Սահմանադրությամբ ու Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքով սահմանվում է եկեղեցու և պետության տարանջատումը, բայց Հայաստանյայց Եկեղեցուն շնորհվում է ազգային եկեղեցու պաշտոնական կարգավիճակ: Օրենքը որոշակի արտոնություններ է շնորհում Հայաստանյայց Եկեղեցուն, որոնք չեն գործում մյուս կրոնական խմբերի համար: Օրենքի համաձայն պետությունը ճանաչում է եկեղեցու կանոնական ծեսով իրագործած ամուսնությունների իրավական ուժը, սակայն դեռևս չկան այդ դրույթի կենսագործումն ապահովելու համար անհրաժեշտ իրավական ակտերը: Հայաստանյայց Եկեղեցուն նաև թույլատրվում է ունենալ մշտական ներկայացուցիչներ հիվանդանոցներում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, զորամասերում, և ազատազրկման բոլոր վայրերում, մինչդեռ մյուս կրոնական կազմակերպությունները կարող են ներկայացուցիչ ապահովել հիշյալ կառույցներում միայն այդպիսի պահանջ լինելու դեպքում: Օրենքն արգելում է «հոգեորսությունը», սակայն չի սահմանում «հոգեորսություն» եզրույթը:

Կրթության մասին օրենքով ասվում է, որ հանրակրթական դպրոցներում ուսուցումն աշխարհիկ է: Սակայն այսօրվա տվյալներով նորմը խախտվում է: Դպրոցներում դասավանդվում է միայն Հայ Առաքելական Եկեղեցու պատմություն, այլ կրոնների մասին երեխաները չեն ստանում որևէ տեղեկություն: Այլ կրոն դավանող երեխաները խտրական վերաբերմունքի են արժանանում դասատուների կողմից, և դասատուները ստիպում են երեխաներին չշփվել այլ կրոն դավանող երեխաների հետ: Գրանցված կրոնական կազմակերպությունների կրոնական ծեսերի կազմակերպումը կարգավորվում է գործող օրենքի շրջանակներում: Օրենսդրորեն կրոնական ծեսերի կազմակերպման հարցում որևէ արգելք չկա, սակայն իրականում արհեստականորեն խնդիրներ են առաջանում:

Պետք է նշել, որ ՀՀ խղճի և դավանանքի ազատության հետ կապված օրինախախտումների մեծ մասը "Եհովայի վկաներ" կազմակերպության նկատմամբ կիրառած օրինախախտումներն են: Գործող օրենքի համաձայն՝ գրանցումից հետո բոլոր կրոնական կազմակերպություններն ունեն հավասար իրավունքներ: Սակայն ինչպես հայտնի դարձավ "Եհովայի վկաներ" կրոնական կազմակերպության իրավաբան Տիգրան Հարությունյանի հետ զրույցից, իրականում վերջիններս օժտված չեն հավասար իրավունքներով: Մինչև օրս կազմակերպությունը հայցեր է ներկայացնում ՀՀ վարչական դատարան ընդդեմ Պետական եկամուտների կոմիտեի՝ կամայական, անչափ բարձր գներով հոգևոր գրականությունը մաքսազերծելու համար: Ներկա պահին 37 գործ գտնվում է վճռաբեկ դատարանում է և մի քանի գործ ուղարկվել է եվրոդատարան, սակայն դեռ գործի վարույթները ընդունելու կամ մերժելու մասին տեղեկություն չկա:

Հայաստանի տարբեր մարզերում տեղի են ունեցել խոշտանգման բազմաթիվ դեպքեր, որոց իրավապահ մարմինները պատշաճ կերպով չեն արձագանքել:

Հոգևոր հովվի և Եհովայի վկայի միջև վիճաբանությունը տեղի է ունեցել 2011 թ. մայիսի 15-ին՝ ժամը 09:00-ի սահմաններում, Երևանի Հարավ-Արևմտյան թաղամասում գտնվող Սուրբ Երրորդություն եկեղեցու բակում: Ըստ գործի նյութերի՝ «Տեր Եսայի քահանա Արտակ Արթենյանը, նկատելով, որ Եհովայի վկաներ աղանդավորական կազմակերպության անդամներ Անդրանիկ Մակվեցյանը և Սամվել Գրիգորյանը եկեղեցու բակում զբաղված են երկու քաղաքացիների քարոզչությամբ», մոտեցել է նրանց և խնդրել հեռանալ եկեղեցու տարածքից: Տղաները հրաժարվել են հեռանալ վիճաբանության մեջ են մտել քահանայի հետ: Քահանան փորձել է իր բջջային հեռախոսով նկարել տղաների՝ քարոզչությամբ զբաղվելու փաստը, սակայն Անդրանիկ Մակվեցյանը խլել է հեռախոսը: Տեր Եսայի քահանան փորձել է ետ վերցնել հեռախոսը, սակայն Մակվեցյանը բռունցքով հարվածել է նրա ձեռքին: «Դրանից հետո Անդրանիկ

Մակվեցյանը «քո հալը դեռ կտեսնես» և «կոկորդդ կրծելու եմ» արտահայտություններով առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքներ է տվել Տեր Եսայի քահանային և հեռացել»,- գրված է գործի նյութերում: Քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 118 հոդվածով (ծեծը), 322 հոդվածի առաջին մասով (ինքնիրավչությունը) և 137 հոդվածի առաջին մասով (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը): Սակայն պաշտպանող դատախազը հոկտեմբերի 21-ին փոփոխել է մեղադրանքի ծավալը և ավելացրել է ևս մեկ հոդված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասը: Հենց այս հոդվածով էլ Անդրանիկ Մակվեցյանը մեղավոր է ճանաչվել: Դատարանը ապացուցված է համարել, որ ամբաստանյալ Անդրանիկ Մակվեցյանը քահանային ասել է «քո հալը կտեսնես», «կոկորդդ կրծելու եմ» արտահայտությունները, սակայն առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքները դատարանի կողմից իրական վտանգ չեն համարվել: Մակվեցյանը դատարանում տված ցուցմունքում ասել է, որ քահանայի ձեռքից հեռախոս չի վերցրել, նրան չի սպառնացել, նման արտահայտություններ չի արել, ընդհակառակը՝ Արթենյանն է իրենց վիրավորել: Նոյեմբերի 28-ին դատարանը Ա. Մակվեցյանին մեղավոր է ճանաչել քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասով քաղաքացիների իրավահավասարությունը խախտելը և 6 ամսվա ազատազրկման դատապարտել: Հունվարի 16-ին Վերաքննիչ դատարանը անփոփոխ թողեց առաջին ատյանի կայացրած որոշումը:

Միջադեպ է տեղի է ունեցել Լեռնարոտ գյուղում՝ 2011 թ.-ի հունիսի 18-ին: Գյուղում երկու երիտասարդ մոտեցել են Վարդան Ղազարյանին, նրա կնոջը՝ Գոհար Ղազարյանին, ամուսիններ՝ Հարություն Հարությունյանին և Սիրանուշ Շախբազյանին: Այդ երիտասարդները հեգնական տոնով ասել են, որ ուզում են ժողովի հանդիպմանը մասնակցել և, քանի որ ավտոմեքենա չունեն, վկաների օգնության կարիքն ունեն: Այդ ընթացքում Մարինե Մկրտչյանը զանգել է իր հավատակիցներին և ասել, որ գյուղապետը սեռական բնույթի հայհոյանքներ է ասել իրենց և սպառնացել է: Վ. Ղազարյանը, Գ. Ղազարյանը, Հ. Հարությունյանը և Ս. Շախբաթյանը մեկնել են, որ

հասնեն իրենց ընկերներին, սակայն ճանապարհին մի տղամարդ կանգնեցրել է նրանց ավտոմեքենան: Այդ անհատը գյուղապետն է եղել՝ Էդիկ Սահակյանը: Նա հրմշտել է, հետո էլ հայհոյանքներ տալով՝ ձեռքերով և ոտքերով հարվածել է Վարդանին, Հարությունին և վարորդին: Այդ ժամանակ երկու մեքենա է կանգնել, որոնցից մեկի վարորդը միացել է գյուղապետին: Շրջապատում եղել են նաև տղամարդիկ, հետո էլ ուրիշ գյուղացիներ են հավաքվել, որոնք ասել են գյուղապետին, որ թույլ տա հեռանան: Եհովայի վկաները մի կերպ կարողացել են հեռանալ այդ տարածքից և հետո, երբ ճանապարհին վերցրել են իրենց ընկերներին՝ Մ. Մկրտչյանին և Լ. Շախբաթյանին, նրանք էլ են պատմել, որ իրենց է մոտեցել գյուղապետը և հայհոյել է՝ պահանջելով հեռանալ գյուղից:

Ավշար գյուղի գյուղապետ Սուրիկ Գրիգորյանը սպառնացել է Մոցարտ Աղաջանյանին և Արսեն Հակոբյանին: Նշել է, որ իրավունք չունեն քարոզելու այդ գյուղում: Քարոզելու համար իրենց պետք է թույլտվություն վերցնեն, և այդ դեպքում ինքը կորոշի՝ թույլատրի վկաներին քարոզել, թե ոչ: Հետո նա ավելացրել է, որ եթե Եհովայի վկաները մեկ անգամ էլ մտնեն գյուղ, ապա հետևանքը վատ կլինի: Գյուղապետը բազմիցս անհանգստացրել է նրանց, նույնիսկ բռնության է դիմել:

09.10.2011 Ղազանչի գյուղում մոտ 10 երեխաներ հետևել են Լաուրա Վարդանյանին և նրա հավատակիցներին: Սկզբում չեն անհանգստացրել, սակայն մի որոշ ժամանակ հետո նրանք սկսել են ծաղրել և քարերով խփել: Հետո քահանան է հայտնվել, նրան են միացել դպրոցի կրոնի ուսուցչուհին, քարտուղարուհին, երեխաները և մի քանի տղամարդիկ ու կանայք: Քահանան ասել է, որ միայն իր թույլտվությամբ կարող են քարոզել, և որ իրենց գյուղը զուրկ է աղանդավորներից: Հետո գյուղապետն է միացել նրանց և ասել է, որ իր օրենքներով է շարժվում՝ պահանջելով վկաներին լքել գյուղը: Քահանան պատռել է պարբերագրերը:

“Եհովայի վկաներ” կազմակերպության կողմից հաղորդվում էր, որ տարեկան հավաքների համար մեծ տարածքներ վարձակալել չի հաջողվում: Նախապես պայմանավորվելուց և գումարը փոխանցելուց հետո, առանց զգուշացնելու անջատում են տարածքի լույսերը կամ պարտադրում են ազատել տարածքը:

2003թ.-ին Հայաստանում ընդունված “Այլընտրանքային ծառայության մասին” օրենքը ուժի մեջ է մտել 2004թ.-ի հուլիսի 1-ից: Համաձայն նշված օրենքի՝ այլընտրանքային ծառայության տեսակներն են՝ այլընտրանքային զինվորական, որը ՀՀ զինված ուժերում իրականացվող մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ չկապված զինվորական ծառայությունն է՝ 36 ամիս ժամկետով, այլընտրանքային աշխատանքային՝ ՀՀ զինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայությունը՝ 42 ամիս ժամկետով: Սովորական զինծառայության տևողությունը 24 ամիս է: Դրանից բացի, զինծառայողներին տրվում է զինգրքույկ, որտեղ գրվում է, որ նրանք զինվորներ են, դրանք յուրաքանչյուր շաբաթ ստուգվում են և հեռանալու համար պետք է հատուկ թույլտվություն ստանան: “Այլընտրանքային ծառայության մասին” օրենքի հոդված 14-ում ասվում է, որ այլընտրանքային ծառայության զորակոչը կազմակերպում և դրա իրականացումը վերահսկում է պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:
Հոդված 18-ի համաձայն՝ այլընտրանքային ծառայություն անցնողները ենթարկվում են բանակի կանոնակարգին: Հոդված 21-ը նույն կերպ է անդրադառնում նրանց վրա, ովքեր լքել են բանակը, և ովքեր լքել են այլընտրանքային ծառայությունը:

2004 թվականին ԵԽԽՎ-ի կողմից ընդունված 1361(հոդված 2268) և 1405(հոդված 11.469) բանաձևերում Հայաստանի իշխանությունների ուշադրությունն է հրավիրվում այլընտրանքային աշխատանքային ծառայության անթույլատրելի պայմանների վրա, որի տևողությունն է 42 ամիս: 2004թ.-ի հուլիսի 9-ին ընդունվեց Կառավարության №940-

N որոշումը “Այլընտրանքային ծառայություն անցկացնելու վայրերի և այլընտրանքային ծառայողի համազգեստի տեսակների վերաբերյալ”: Համաձայն դրա՝ 49 անձ կարող էր կանչվել այլընտրանքային աշխատանքի (Առողջապահության նախարարություն, Աշխատանքի և Սոցիալական հարցերով նախարարություն, ծերանոցներ, հոգեբուժարաններ, մեկուսարաններ) և Այլընտրանքային զինվորական ծառայություն - 300 մարդ Սյունիքի, Գեղարքունիքի և Տավուշի զինվորական մասերում (այս բոլոր մարզերն էլ սահմանային են):

Հայաստանի իշխանությունները դեռևս հրաժարվում են համարել, որ “Այլընտրանքային ծառայության մասին” օրենքը չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Եվրոպայի խորհուրդը պարբերաբար քննադատել է օրենքը՝ նշելով, որ այն անկատար է: Ներկայումս 56 Եհովայի վկաներ գտնվում են բանտերում՝ զինվորականների վերահսկողության ներքո՝ այլընտրանքային ծառայություն կատարելուց հրաժարվելու համար: Գրեթե բոլոր այս Եհովայի վկաները ազատազրկված են երկուսից երեք տարի ժամկետով՝ կրոնական հիմքերով զինծառայությունից հրաժարվելու համար: Նրանք դատապարտվել են ՀՀ Քրեական օրենսգրքի 327 հոդվածի 1-ին մասով, որը պատիժ է նախատեսում պարտադիր զինծառայությունից կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու համար: 2006թ.-ի հունվարին, Քրեական օրենսգրքում կատարված փոփոխությամբ, այլընտրանքային աշխատանքային ծառայությունից խուսափելը որակվեց որպես քրեորեն պատժելի արարք:

2008թ.-ի ամռանից սկսած զինծառայությունից և այլընտրանքային ծառայությունից խուսափելու համար բանտարկվել էին, ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի հրամանով, սկսեցին զինգրքույկներ տալ: Մինչ այդ, դատապարտված անձինք չէին կարողանում գրանցվել իրենց բնակության վայրում, իսկ առանց դրա նրանք չէին կարող ստանալ անձը հաստատող փաստաթուղթ կամ անձնագիր: Արդյունքում, նրանք չէին կարողանում աշխատանք ստանալ կառավարությունում, չէին կարող լքել երկիրը և չէին կարող ամուսնանալ:

Խղճի կալանավորներ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ Փետրվար,
2012

Այս պահին 56 Եհովայի վկաների նկատմամբ մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքովիրենց կրոնական համոզմունքների հիմնավորմամբ զինծառայությունից հրաժարվելու պատճառով: Դրանցից 56-ը դատապարտվել և ազատազրկվել են, ոչ ոքի նկատմամբ նախնական կալանքը չի կիրառվել որպես խափանման միջոց և ոչ ոքի նկատմամբ չի կիրառվել պայմանական պատիժ: Ստորև նշված են նրանց անունները, դատավճիռների ամսաթվերը, հոդվածները (ՀՀ ՔՕ-ի համաձայն[1]) և տվյալ պահին գտնվելու վայրերը:

Հիսունվեց Եհովայի վկաներ դատապարտվել և ազատազրկվել են:

	ԱՆՈՒՆ	ԱՄՍԱԹԻՎ	ՊԱՏԺԱՉԱՓ	ԿԱԼԱՆԱՎԱՅՐ
1.	Մարդոյան Արկադի	28 օգոստոսի, 2009	§ 327 I, 30 ամիս	Արթիկ
2.	Սողոմոնյան Վանիկ	31 օգոստոսի, 2009	§ 327 I, 30 ամիս	Արթիկ
3.	Սաֆարյան Գրիգոր	4 սեպտեմբերի, 2009	§ 327 I, 30 ամիս	Էրեբունի
4.	Արշակյան Լյուդվիկ	7 սեպտեմբերի, 2009	§ 327 I, 30 ամիս	Կոշ
5.	Մանուկյան Ռաֆայել	17 սեպտեմբերի, 2009	§ 327 I, 30 ամիս	Արթիկ
6.	Աղաջանյան Կարապետ	22 սեպտեմբերի, 2009	§ 327 I, 30 ամիս	Կոշ
7.	Կրոյան Արտակ	30 սեպտեմբերի, 2009	§ 327 I, 30 ամիս	Կոշ
8.	Խանումյան Սպարտակ	28 դեկտեմբերի, 2009	§ 327 I, 30 ամիս	Արթիկ
9.	Վարդանյան Լևոն	18 հունվարի, 2010	§ 327 I, 30 ամիս	Էրեբունի
10.	Կասեմյան Հովհաննես	2 փետրվարի, 2010	§ 327 I, 24 ամիս	Արթիկ
11.	Պիրապյան Տարոն	2 մարտի, 2010	§ 327 I, 30 ամիս	Կոշ
12.	Թորոսյան Արթուր	9 մարտի, 2010	§ 327 I, 30 ամիս	Էրեբունի
13.	Սարգսյան Կարապետ	18 մարտի, 2010	§ 327 I, 24 ամիս	Արթիկ
14.	Պրուտյան Սամվել	23 մարտի, 2010	§ 327 I, 30 ամիս	Էրեբունի
15.	Խաչիկյան Աշոտ	29 մարտի, 2010	§ 327 I, 24 ամիս	Կոշ

16. Մարտիրոսյան Դավիթ	29 մարտի, 2010	§ 327 I, 24 ամիս	Կոշ
17. Նահապետյան Արայիկ	9 ապրիլի, 2010	§ 327 I, 24 ամիս	Էրեբունի
18. Առաքելյան Զորայր	14 ապրիլի, 2010	§ 327 I, 30 ամիս	Արթիկ
19. Սեյրանյան Նարեկ	22 ապրիլի, 2010	§ 327 I, 24 ամիս	Կոշ
20. Թումանյան Լևոն	6 մայիսի, 2010	§ 327 I, 30 ամիս	Էրեբունի
21. Խալատով Ռաֆայել	19 մայիսի, 2010	§ 327 I, 24 ամիս	Էրեբունի
22. Չինարյան Նարեկ	21 մայիսի, 2010	§ 327 I, 24 ամիս	Կոշ
23. Պողոսյան Նարեկ	24 մայիսի, 2010	§ 327 I, 30 ամիս	Կոշ
24. Տոնոյան Սուրեն	9 հունիսի, 2010	§ 327 I, 24 ամիս	Էրեբունի
25. Խլղաթյան Դավիթ	19 հուլիսի, 2010	§ 327 I, 24 ամիս	Էրեբունի
26. Բագիրյան Անդրանիկ	2 օգոստոսի, 2010	§ 327 I, 30 ամիս	Էրեբունի
27. Օհանջանյան Էդուարդ	2 օգոստոսի, 2010	§ 327 I, 24 ամիս	Էրեբունի
28. Ավագյան Լևոն	3 օգոստոսի, 2010	§ 327 I, 30 ամիս	Էրեբունի
29. Դավթյան Ալիկ	4 օգոստոսի, 2010	§ 327 I, 30 ամիս	Էրեբունի
30. Աղեկյան Սևակ	5 օգոստոսի, 2010	§ 327 I, 30 ամիս	Էրեբունի
31. Խեչոյան Մանուկ	9 օգոստոսի, 2010	§ 327 I, 30 ամիս	Էրեբունի
32. Մինասյան Դերենիկ	11 օգոստոսի, 2010	§ 327 I, 24 ամիս	Կոշ
33. Ավետիսյան Վահե	13 օգոստոսի, 2010	§ 327 I, 24 ամիս	Կոշ
34. Ենգիբարյան Հակոբ	24 օգոստոսի, 2010	§ 327 I, 27 ամիս	Էրեբունի

[1] **327-րդ հոդվածով սահմանվում է.** «Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորավարժանքից խուսափելը՝ այդ ծառայությունից ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով» (փոփոխվել է 16.12.2005)։

ԽՂՃԻ ԿԱԼԱՆԱՎՈՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ Փետրվար, 2012

35.	Մնացականյան Հարություն	25 օգոստոսի, 2010	§ 327 I, 36 ամիս Էրեբունի
36.	Մեսրոփյան Գոռ	27 օգոստոսի, 2010	§ 327 I, 18 ամիս Էրեբունի
37.	Արշակյան Արտաշես	6 սեպտեմբերի, 2010	§ 327 I, 30 ամիս Կոշ
38.	Անտոնյան Վարդան	11 սեպտեմբերի, 2010	§ 327 I, 30 ամիս Էրեբունի
39.	Ալիխանյան Վահագն	24 սեպտեմբերի, 2010	§ 327 I, 30 ամիս Արթիկ
40.	Խաչատրյան Անրի	29 սեպտեմբերի, 2010	§ 327 I, 24 ամիս Էրեբունի
41.	Պողոսյան Նիկոլայ	21 հոկտեմբերի, 2010	§ 327 I, 30 ամիս Էրեբունի
42.	Մուշեղյան Ահարոն	12 նոյեմբերի, 2010	§ 327 I, 36 ամիս Կոշ
43.	Մուրադյան Դավիթ	30 դեկտեմբերի, 2010	§ 327 I, 18 ամիս Կոշ
44.	Ոսկանյան Աշոտ	2 փետրվարի, 2011	§ 327 I, 36 ամիս Էրեբունի
45.	Սարգսյան Սամվել	3 փետրվարի, 2011	§ 327 I, 30 ամիս Կոշ
46.	Կիրակոսյան Հարություն	9 մարտի, 2011	§ 327 I, 30 ամիս Էրեբունի
47.	Ներսիսյան Արման	14 մարտի, 2011	§ 327 I, 24 ամիս Կոշ
48.	Գեղամյան Անդրանիկ	15 մարտի, 2011	§ 327 I, 24 ամիս Կոշ
49.	Սարգսյան Հայկ	8 ապրիլի, 2011	§ 327 I, 30 ամիս Էրեբունի
50.	Գասպարյան Հովիկ	11 ապրիլի, 2011	§ 327 I, 30 ամիս Կոշ
51.	Սարդարյան Հովհաննես	1 հուլիսի, 2011	§ 327 I, 24 ամիս Էրեբունի
52.	Ադյան Արթուր	7 հուլիսի, 2011	§ 327 I, 30 ամիս Նուբարաշեն
53.	Մարգարյան Վահագն	7 հուլիսի, 2011	§ 327 I, 30 ամիս Նուբարաշեն
54.	Ավետիսյան Գարեգին	19 հուլիսի, 2011	§ 327 I, 30 ամիս Նուբարաշեն
55.	Խաչատրյան Հարություն	25 հուլիսի, 2011	§ 327 I, 30 ամիս Վանաձոր
56.	Սարգսյան Էդուարդ	6 օգոստոսի, 2011	§ 327 I, 24 ամիս Էրեբունի

Ոչ ոքի նկատմամբ նախնական կալանքը չի կիրառվել որպես խափանման միջոց։

Ոչ ոքի նկատմամբ չի կիրառվել պայմանական պատիժ։